



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7508

Ա Խ Ա Կ Բ Թ Ս Խ Թ Ե Ա Ն Դ Ա Ա Վ Ե Ն Թ Ա Յ Ք

2 P U N S U. I U O. U A B U. U

ԳՐԱՑԻՒԹՎԱՆ ՀԱՐԴ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

F. UUU

ԱՇԽԱՏԱԿԱՐԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆ




91(496)
mu - 26

Կ. Պ Օ Լ Ի Ս

ՀԱՅՏՈՒՆ ԽԾԱՎ - ՊԱՊԻԿԵԱՆ

60, ԷՍԵ-ԶԱՊԹԻՑԵ ՃԱՏԼՈՒ, 60

1902



ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

91(436)

58
իւ-26

աշ

15554-58



ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

1004
(8745)

H. KILIDJIAN LIBRAIRE-EDITEUR
Աշխարհի երեք մասերուն վրայ : Կը զրաւէ Եւրոպա-
կան ցամաքին հարաւային-արեւելեան մասը , Ասիր-
արեւմասեան-հարաւային մասը եւ Աֆրիկէի հրասիսային-
արեւելեան մասը :

Իր ընդարձակ սահմաններուն մէջ կ'ընդպրէ իրը
2,750,000 քառակուսի քիլոմէտրի սարածութիւն մը , եւ
կը պարունակէ իրը 30 միլիոն բնակիչ :

Ա. ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

Օսմաննեան կայսրութեան կարեւոր մասերէն մէկն է
Եւրոպական Թուրքիա , որ Դանուբեան իշխանութեանց
հետ կը ձեւացնէ Պալքանեան ցամաքակղզին :

Եւրոպական Թուրքիայ սահմաններն են , Հիւսիսէն՝
Ռումանիա , Արևպիա , Աւստրիա և Գալատապաղ . արեւել-
քէն՝ Սեւ ծով եւ Պոսֆորի նեղուցը , հարաւէն՝ Մար-
132 — Ակադեմիական

32546 - Ա. հ.

մարայի ծով , Տարտանելի նեղուց , Արշիպեղազոս և
Յունաստան , արեւմուաքէն՝ Յոնիական և Ագրիական
ծովերը :

1. Ծովափունք. — Եւրոպական Թուրքիոյ ծովա-
փունքը կը թրջեն հինգ ծովեր . Ագրիական և Յոնիա-
կան ծովերը , Արշիպեղազոսը , Մարմարան և Սև
ծովը :

Եւրոպական Թուրքիոյ արեւմտեան ծովեղերքը ընդ-
հանրապէս խորառութուտ է , մերթ ձանձաղուտ , ու
բարձր խարակիներով չը չափատուած : Այս ծովեղերին
վրայ կը տեսնուին Աւգոնայի և Սրբայի ծոցերը :

Արշիպեղազոսի ծովափունքը կ'ընծայէ զեղեցիկ
խորշեր և թերակղզիի բազուկներ : Կարեւոր է Սերա-
նիկի ծոցը , որուն արեւելեան կողմը կ'երկարի Քաղ-
կիտեան թերակղզն իր երեք բազուկներով Քասանցրա-
Լօնկոս և Սրոս կամ Այնորոց : Այս վերջինին արեւել-
եան կողմը կը դանուի Օրֆանոյի ծոցը , յեաոյ Գալա-
րայի ծոցը և Սարշապան հրոտանդանը , որուն զիմացը
կը դանուի Թասոս կղզին . Այս տեղէն կը սկսի Թրակիոյ
ծովեղը որ կ'ընծայէ նոյնոպէս բազմաթիւ խորշեր . ինչ-
պէս Լակոսի ծոցը , Էնոսի ծովախորշը և Սարոսի ծոցը ,
որուն հարաւային կողմը կը յառաջանայ Կելիպօլուի նեղ
թերակղզն :

Այս թերակղզին երկայնութեամբ՝ Եւրոպայի և
Ասիոյ միջեւ կը բացուի Տարտանելի նեղուցը (Հեղեւ-
պնտու) որ Արշիպեղազոսը կը միացնէ Մարմարայի ծո-
վուն հետ :

Մարմարայի ծովեղը լեռնային է և սեղացած՝
մինչեւ Ռօտոսի (Թէքիր-Տաղ) , ուրիէ սկսելով տակաւ
կը ցածնայ և կ. Պոլսոյ մօտ կը ձեւացնէ Զեմինեկի ծո-
վածոցերը :

Կ. Պոլսոյ նեղուցը կամ Պօսֆոր կը բաժնէ Եւրո-
պան Ասիային և Մարմարայի ծովը կը միացնէ Սև ծո-
վուն հետ :

Սև ծովու Օսմանեան եղերքը նոյնոպէս բարձր է և
սեղացած . կ'ընծայէ բազմաթիւ հրուանդաններ , ինչ-
պէս Բումեղի-Ֆիներ , Էմինե և Քարա-Պուրուն ; Էմինէ
հրուանդանին ու Քարա-Պուրունի միջեւ կը բացուի
միացն Պուրկազի ծովախորշը :

Զ. Հողին բարձրութիւնը. — Եւրոպական Թուրքիա
ընդհանրապէս լեռնային երկիր մըն է , և կը պարունակէ
բազմաթիւ լեռնազաշաեր ու անսառախիտ լեռնաշըղ-
թաններ , զորս կը կարեն մերթ անանցաների ու խորունկ
կիրճներ և մերթ գեղածիծազ ու արգաւադ հովիտներ :

Կայրութեան հիւսիս-արեւմտեան կողմը կը տա-
րածուին Տինարեան Արվեանց ճիւղերը , որոնք իրարու-
զուզանեռարար կ'ուզուին հարաւ-արեւելքէն զէպի
հիւսիս-արեւմուտք : Այս բարձրութիւնները կը ծածկեն
Պօնիոց և Հերսէկի գաւառները , Մօնիկնէկրօն ու Ալ-
պանիոց մէկ մասը : Գլխաւոր զագամներն են Քօվլիոը (2800 մ.) և Տօրմիրօ լեռը (2500 մ. բարձրութեամբ) :

Պուլկարիոց և Սրեւելեան Բումելիի մէջաւեղ՝ արեւ-
մուտքներն արեւելք կը տարածուի կեզրնական լեռնա-
շըղթաց մը , Պալքանի զօտին , որուն ճիւղերը կը ծած-
կեն Արեւելեան Սերպիան , Պուլկարիան ու Բումելին :

Դանուրի և իր գետակցին Թիմօքի միջեւ Պալ-
քանները կը սկսին Սրարա Բղանինայի (Հին լեռ) լեռ-
նաշըղթայով , որ կը տարածուի մինչեւ Իսքեր գետակը .
զլիսաւոր գաղաթն է Մինուր լեռը (2200 մ.) , որուն մօտ
կը գանուի Այի-Նիօրա կիրճը :

Սթարա-Բլանինային սկսելով դէպի արեւելք կը յա-
ռաջանայ՝ Թուրքիոյ և Պուլկարիոյ մէջաւեղ՝ բուն Պալ-

իանը որ կը բաժնէ իրարմէ Արշիպեղագոսի և Դանուքի աւաղանները և կը վերջանայ Սև ծովուն վրայ՝ Էմինէ Հրուանդանով :

Պալքաններուն բարձրագոյն՝ գաղաթին է Ռիջ լեռը, Սամաքօվի մօտ (3000 մէղը բարձր), ուրկէ սկսելով Պալքան կը խնարծի և կը հնայէ բաղմաթիւ կիրճեր, որոնց լիչ անուանի են Տրայանոսի անցք (Ասքիայի ճամբուն վրայ), Եփիկա և Տօպրօ (Շումնուի ճամբուն վրայ) :

Պալքանէն դէպի հարաւ կը բաժնուին երեք զըլիաւոր ճիւղեր. մին կը տարածուի Մէսու և Սթրումա գետերուն մէջտեղ՝ Բէրիի Բղանինա (2700 մ.) անունով. երկրորդը որ կը կոչուի Տէսրօ տաղ (Հոռոսի), լայն հաստամետ մընէ և կը տարածուի մինչեւ Արշիպեղագոս, և ունի մընչեւ 2000 մէղը բարձրութեամբ զագաֆներ : Իսկ երրորդ ճիւղը կ'երթայ դէպի հարաւարեւելք, այն է Սրբանա Տաղը, որ մընչեւ կ. Պոլիս բլուրներ կ'արձակէ :

Մարմարայի ծովուն վրայ առանձինն կը բարձրանայ Թէիիր-Տաղ :

Ռիջ լեռնէն սկսելով գլուխ արեւմուտք կը տարածուին Տօվանիցա և Թօշիաֆ լեռները, և յետոյ ԶարՏաղ :

Այս վերջին հաստամետաը որ Եւրոպական Թուրքիոյ բարձրագոյն զաղաթը կը պարունակէ (Լիուպօքէն 3050 մէղը), արդի աշխարհագիրներու մեծագոյն մասին կողմէ Պալքաննեան ցամաքակղղիին լեռնադրական կեղրոնը կը նկատուի :

Զար-Տաղէն սկսելով լեռներու շարք մը կ'երկարի դէպի հարաւ, բաժնելով Աղրիական ծովուն և Արշիպեղագոսի տւաղանները : Այս խումբին կը պատկանի Ներեշյա-Բղանինայի լեռնաշղթան, որուն հարաւ-արեւել-

եան կողմը՝ Յանաստանի սահմանին վրայ կը կանգնի համբաւաւորն Ողիմպոս իրը 3000 մէղը բարձրութեամբ, և որմէ դէպի արեւմուտք կը բաժնուին ուղղանայեաց շղթաներ . ասոնք կը ձեւացնեն նախ Կրամոսի հաստամետաը կամ Աղպանիոյ լեռները և յետոյ Պինդոսի Գօսին :

Այս ամէն շղթաներէն րոլորովին անջատ են Քաղկիտեան թերակղղիին լեռները, որոնց մէջ նշանաւոր է Արօս կամ Այնորող (1935 մէղը) :

3. Զբագրութիւն.— Եւրոպական Թուրքիոյ արտաքին այս անհարթ ու անմիտակերպ հանգամանքը տեղի չթուղուր ոչ ընդարձակ հայիններու և ոչ ալ մեծ զետերու : Երկրը սուզող ջարի լնթացքները կրնան լածնութիւ երկու դիխաւոր զառիվայրերու . 1. Արեւմտեան զառիվայր, որ կը պարունակէ Աղրիական և Յոնիական ծովերուն հարկատուները, 2. Հարաւ-Արեւելեան զառիվայր, որ կը պարունակէ Արշիպեղագոսի և Սև ծովուն հարկատուները :


Ա. — Արեւմտեան զառիվայրին գետերն են Պօյանա, Տրին, Մաթիս, Սէմէնի և Վոյուսա, որ կը թափին Աղրիական ծովը . Քալամա, Լուրօ և Սրու, որ կը թափին Յոնիական ծովը :

Պօյանա կը բիսի Տօրմիթօր լեռնէն՝ Մօրաչա անունով, յետոյ Երուրայի լիճէն անցնելով կը Յափի Աղրիական, Տուշինեոյի մօտ

Տրին գետը կը կազմուի Երկու ճիւղեր, որոնց մին Սև Տրին՝ կ'ելլէ Օխրիտայի լիճէն և հարաւէն դէպի հիւսիս կը հոսի, իսկ միասը՝ Սոլիտակ Տրին՝ կ'ենէ Թօմ լեռնէն և կը հոսի հիւսիսէն հարաւ :

Ակմենի գետը կը բիսի Կրամոս լեռներէն :

Արդա գետը կը բիսի Պինդոս լեռներէն և հիւսիսէն հարաւ հոսելով կը թափի համանուն ծոցը :



Պատ. 1 — Արդար գնաուկին վրայ Քըրնալիի կամուրջը

Բ. — Հարաւ-արեւելեան զառիվայրին զլխաւոր զետերն են Վիսթրիցա, Վարտար, Սրբումա, Մէսզա և Մարիցա, որ կը թափին Արշիպեղազոսի մէջ, և Վէլիքա, որ կը թափի Սեւ ծոլ, իջնելով Սթրանձա լեռնէն :

Վիսթրիցա կամ Խնձէ-Քարասու կը բխի Նէրէչբա Բլանինայէն, Կ'ընդունի Թասթօրիա լճին չուրերը, կը Թրչէ Սէրքէչի դաշտը, և կը Թափի Սելանիկի ծոցը:

Վարտար զետը (360 ըլմ. երկայն) բազմաթիւ հիւղերով կ'ելլէ Զար-Տաղի հաստամեստէն և Մանամըրի զաշտը ուսոցելով կը Թափի նոյնպէս Սելանիկի ծոցը: Վարտարի մէջ կը հոսին Զէրնա (Քայասու) և Զինեա (Էյրիսու):

Սրբումա կը բխի Վիթօչա լեռնէն, կը հոսի գէպի հարաւ և իր մէջ ընդունելով Ոթրումից գետակը, կը Թրչէ Սէրէզի զաշտը, և Թարինոս լիճը ձեւայնելէ յետոյ կը Թափի Օթրանոյի ծոցը:

Մարիցա (495 ըլմ. երկայն) կը բխի Ռիլո լեռնէն և կը հոսի գէպի արեւելը, մինչ Էտիրնէ, ուրկէ սկսելով կը զառնայ զէպի հարաւ և կը Թափի լնոսի ծովախորշը:

Մարիցայի հրվիտը արգաւանդ, և լաւ մշակուած է և ամենահարուստ բռւսաբերութեամբ ծածկուած:

Մարիցայի մէջ կը հոսին աշ կողմէն՝ Արդա զետակը (Պատ. 1), որ կ'իջնէ Հռոտոփին, իսկ ձախ կողմէն՝ Թուննա, որ կ'իջնէ Պալեաններէն և Էտիրնէի առջև կը միանայ Մարիցայի, ինչպէս նաև Էրկէնէ, որ կ'իջնէ Սթրանձա լեռներէն:

Լիճեր. — Եւրոպական Թուրքիա ունի բազմաթիւ լիճեր, մանաւանդ Ալպանիոյ և վերին Մակեդոնիոյ մէջ: Գարատաղի սահմանին վրայ կը գտնուի Շօօրայի լիճը: Վերին Մակեդոնիոյ լեռնադաշտին վրայ՝ Օյսիսայի, Բրէզպայի, Օսրովոյի և Քասթորիայի լիճերը: Ստորին Ալպանիոյ մէջ՝ Եսենիայի լիճը. Սելանիկի մօտերը՝ Տօրեան և Եսենիան Վարտար լիճերը: Օրֆանոյի ծոցին մօտ՝ Պէշիի և Թափինոս լիճերը:

Նոյնպէս Կ. Պոլսոյ մօտերը՝ Skrfouի լիճը որ Պոլսոյ ջուր կը հայթայթէ, և Զեմինհանի երկու փոքր լիճերը:

Բ. Ա.ՍԻԱԿԱՆ ԵՒ Ա.ՓՐԻԿԵԱՆ ԹՈՒՐՔԻԱ.

Ասիական Թուրքիա՝ որ Օսմանեան կայսրութեան ամէնէն կարեւոր եւ ընդարձակ մէկ մասն է՝ կը տառածուի Ասիական ցամաքին հարաւային-արևելմտեան կողմը։ Իր սահմաններն են՝ հիւսիսէն Սեւ ծով, Պուփորի ներզուց, Մարմարայի ծով եւ Տարտանելիքի ներզուց։ արեւմուռքէն՝ Արշակեղագոս եւ Միջերկրական ծով, Սուէզի ջրանցք եւ Կարմիր ծով։ հարաւէն՝ Արարիա եւ Պարսկային ծոց։ արեւելքէն՝ Պարսկաստան եւ Կովկասիա։

Ավրիկեան Թուրքիա կը տարածուի Ա.փրիկէի հիւսիսային-արեւելեան կողմը, սահման ունենալով հիւսիսէն՝ Միջերկրական ծով։ արեւելքէն՝ Կարմիր ծով։ հարաւէն՝ Լիբիայ անապատ եւ Սահարա։ արեւմուռքէն՝ Մարօք։

1. Ծովագունիք.— Ասիական եւ Ա.փրիկեան Թուրքիոյ ծովեղերքը կը թրչէն հետեւեալ ծովերը՝ Սեւ ծով, Մարմարա, Արշակեղագոս, Միջերկրական ծով, Կարմիր ծով եւ Պարսկային ծոց։

Սեւ ծովուն Ասիական եղերքը ընդհանրապէս նուազ ծամածուռ է։ աեղ տեղ կ'ընծայէ սակայն բաւտկան խորունկ ծովածոցեր։ Արեւելքէն գեափ արեւմուռք յառաջանալով կը տեսնենք նախ Տրապիզոնի ծոցը։ Եկու եւ Քօրչէ հրաւանդանները։ Ռևիէի ծոցը, յետոյ Սամանի եւ Սինոպի ծոցերը։ ինչպէս նաեւ Պօրեկի եւ Ինձէ հրաւանդանները, որոնցմէ սկսելով մինչեւ Երկյիի ծովախորչը կը տեսնուին բազմաթիւ հրաւանդաններ, ինչպէս Քերեմպէ, Տէլիի եւ Պապա-Պուրուն։

Մարմարայի ծովափունքը Սեւ ծովու եղերքէն աւելի ծամածուռ է։ հսու կը տեսնուի նսին՝ Խզմիսի եւ Կեմիյիկի ծովածոցերուն մէջաւեղ՝ Բիւրանական թերակղզին որ կը վերջանայ Պօզ-Պուրուն հրաւանդանով։ յետոյ Գալիուտաղի թերակղզին, որուն մօտ կը գտնուին Մարմարա, Ա.փսիա եւ Աշօնի կղզիները։

Արշակեղագոսի ծովափունքը շատ ծամածուռ է եւ կ'ընծայէ բաղմաթիւ խորշեր ու թերակղզիներ, ինչպէս Տրովադայի թերակղզին որ կը վերջանայ Պապա Քաղէսի հրաւանդանով։ Այս թերակղզիին հարաւակողմը կը բացուի Էտրէմիսի ծովածոցը, որուն զէմ կը գտնուի Միշիլի մեծ կղզին։ Խզմիրի ծովածոցին եւ Սքալանօվայի (Քուշ-Ասասի) ծոցին միջնեւ կը յառաջանայ Զէշմէի թերակղզին, որուն ծայրը կը գտնուի Քարա Պուրուն, եւ որուն մօտ է Քիոս կղզին։ Այժմանօվայի կամ Եվեսոսի ծոցին հարաւային կողմը՝ ծովեղբին շատ մօտը կը գտնուի Սամոս կղզին, եւ աւելի գեղի հարաւա՝ Մանաշիայի եւ Խրանիկոյի ծոցերը, որոնց մէջաւեղ կը գտնուի Պօրուն թերակղզին։

Արշակեղագոսի ծովեղբին երկայնութեամբ, հիւսիսէն հարաւ ցրուած են մեծ ու փոքր անհամար կղզիներ, որոնց զլաւուորներն են Սամորրակի, Իմպրու, Լեմնոս, Թէնէսու, Միտիլի, Քիոս, Սամոս, Նիբարիա, Պարմոս, Քոս կամ Խարանիկօյ, Սիսի եւ Հոռոդոս։

Արշակեղագոսի ծովեղբէն նուազ ծամածուռ է Միջերկրականի ծովափունքը, որ Աշիրօ հրաւանդանէն ոկսելով մինչեւ Խալիսէրունի ծովածոցը, շատ տեղ զեղատեսիլ խարակներ միայն կ'ընծայէ։ Հոռոդոս կղզիին զէմ կը գտնուի Մարգիի ծոցը, որուն եւ Ասալիոյ ծոցին մէջաւեղ կը տարածուի Լիկիոյ թերակղզին։ Ասալիոյ եւ Մերսինի ծովածոցերուն մէջաւեղ կը գտնուի Կիլիկիոյ

Եհոնային թերակղզին, որուն հարաւակողմը կը տարածուի Կիպրոս կղզին։ Մէրտինի ծոցին արեւելեան կողմը կը ցցուի Քարարաշ հրուանդանը և ասոր ալ արեւելեան կողմը կը ձեւանայ Խակեներունի ծովածոցը, որիէ սկսելով ծովեղերքը կ'ուղղուի գէպի հարաւ։ Այս ծովեղը՝ որ կ'ըսուի Սուրբոյ ծովեղերք, ընդհանրապէս մեղացած է և կ'ընծայէ բարձմաթիւ հրուանդաններ, և Լաքայիոյ ու Թրիփոլիի ծոցերը միայն։ Թրիփոլիէն սկսելով ծովեղը կը հակի տակաւ զէպի արեւեմուաք, ձեւացնելով յաջորդաբար Շաբա հրուանդանը, Պերուրի ծովախորչը, Այնայի ծովախորչը, որ կը վերջանայ Կարմելոս հրուանդանով։ Այս կէտէն կը սկսի Պաղեստինու ծովեղը, որ չանի ո և է ծամածութիւն մինչեւ Բոռ-Սայիս։

Բոռ-Սայիսէն կը սկսի Եղիպատական ծովեղերքը՝ նշաւաւոր միայն Նեղոսի տեղայսլը, զոր ծանծաղուալճակներ կը շրջապատեն ընդհանրապէս։ Եղիպատական ծովեղին կը յաջորդէ Թարապղուայ ծովափունքը, որ կը տեսնուին միայն երկու աւաղալից խորոնկ ծոցեր, Սիոդի և Կապէսի ծոցեր։

Կարմիր ծովը որ Եղիպատակ Արտարիայէն կը բաժնէ, Միջերկրականի հնա կը հաղորդակցի Սուեզի ջրանցքով, իոկ Հնդկաց ովկիանոսին հնա՝ Պապէլ Մասկովի նեղուցով։

Կարմիր ծովու Եղերքը՝ սեղացած ու անչէն ընդհանրապէս՝ սակաւաթիւ նաւակայքեր միայն կ'ընծայէ, որնք սակայն լաւ ողատապարուած ալ չեն հովերէն ու փոթորիկներէն։

Կարմիր ծովուն հիւսիսային կողմը՝ Սուեզի և Այսապայի ծոցերուն մէջանեղ կ'երկարի Սինայի Թերակղզին։

Ասիական թարքիա շատ քիչ ծովեղերք ունի Պարսկային ծոցին վրայ, և այն ալ ընդհանրապէս աւա-

զուտ է և վատառողջ և կ'ընծայէ խութեր ու ժայռուա կղզիներ։

2. Հոդին բարձրութիւններ. — Ասիական թուրքիոյ արեւմանեան մասը՝ այն է Փոքր Ասիա՝ կը ձեւացնէ ընդգործակ լեռնադաշտ մը — Անասօլուի Լեռնադաշտը — որ թեթեւապէս կը հակի գէպի Սեւ ծով։ Քօնիս իր 1200 մէջր վեր է ծովուն երեսն, իսկ Կեսարիա 1100 մէջր և էնդիւրիւ 1080 մէջր։

Այս լեռնադաշտին հիւսիսային կողմը՝ Մարմարայի և Սեւ ծովուն երկայնութեամբ կը տարածուի լեռնաշղթայ մը, որ նախ անջատ հաստամեսաներէ կը բաղկանայ, ինչպէս Քէջլշ-Տաղ (Ողիմաս լեռ), Տիւմանըն, Ալատաղ, Ըշլֆ-Տաղ, Քուշ-Տաղ, և այլն. բայց յետոյ աւելի որոշ կերպով կ'երկարի մինչեւ Կարնոյ լեռները, ձեւացնելով հեացնեաէ Արուտ, Ալֆար, Թարրան, Թիւմանըն, Քոլար և Պալգար լեռները։

Անասօլուի լեռնադաշտը հարաւային կողմէն շրջապատուած է Տօրոսի լեռնաշղթայով որ Միջերկրականի երկայնութեամբ կը տարածուի Սասլիոյ ծոցէն մինչեւ Իսկէնատէրունի ծովածոցը և ճիւղեր կ'արձակէ ամէն կողմ. իր գլխաւոր գագտաթն է Կօֆ-Տաղ (Յ200 մէջր բարձր.)։ Այս շղթային զլիսաւոր հաստամեսաներն են Պուղկար-Տաղ և Քօվան-Տաղ։

Տօրոսի զլիսաւոր մէկ բաղուկն է Անտիօքոս որ կը յառաջանայ զէպի հիւսիսային-արեւելք և կ'երթայ միանալ Թիւրքիստանի լեռներուն։ Այս շղթային զլիսաւոր հաստամեսաներն են Թարապէլ-Տաղ, Քհօսէ-Տաղ Զամլըպէլ Տաղ. և այլն։

Տօրոսի և Անափիորսի լեռնաշղթաներուն միջեւ Փոքր Ասիայ կեդրոնական մասին մէջ՝ կը բարձրանան առանձին հաստամեսաներ. ինչպէս Էղմա Տաղ, Զիչէ

տաղ, Ա. Բ.-Տաղ, Էրեմիա (Արդէսո) լեռ (3500 մ. բարձր), Հա-
ան Տաղ, Էմիր Տաղ, Խեւլին, որոնք ճիւղեր կ'արձակեն
մինչեւ Արշավեղագոսի եղերքը, և որոնց մէջտեղ կը
տարածուին Աղոս Անապատին անդնակ տափաստանները :

Ասիական թուրքիոյ արեւելեան կողմէ՝ Երասխ
գետի հովանին ու Միջագետքի գաշտագետիններուն մէջ-
տեղ կը տարածուի երկրորդ լեռնադաշտ մը, 1500էն
մինչեւ 1800 մէդր բարձրութեամբ : Այս լեռնադաշտը
որ տեսակ մը Ասիական Չուիցերիա է, և որուն կը
տիրապետեն Անտիոքոսի և Արարատի լեռնաշղթա-
ները, կ'ընծայէ հրաբխային լիճեր, անհարժ գաշտա-
գետիններ եւ բազմաթիւ ծորերով ու հովիաններով կտրո-
ւած լեռնաշղթաներ, որոնց զիմաւոր հաստամեսաններն
են Արարատ լեռը (5250 մէդր բարձր), Աղա-Տաղ, Պին-
կեօլ լեռը, ինչպէս նաև Կարնոյ լեռները որոնք կ'եր-
թան կը միանան Կովկասի լեռներուն :

Այս լեռնաշղթային սատրին գարատափը կը ձեւա-
ցնեն Քիւրտիստանի լեռները, որոնք Տիգրիսի հովանին
երկայնաւելեամբ կը յաստչանան դէպի հարաւ-արեւելք
եւ Իրանի լեռնադաշտին արեւեմտեան սահմանը կը զծեն :

Միջագետ եւ Իրազ-Արեւին որ Ասիական թուրքիոյ
արեւելեան-հարաւային մասը կը կազմին՝ կը ձեւացնեն
Ծնդարձակ գաշտագետին մը, որուն հիւսիսային կող-
մերը միայն կը կանգնին աննշան բլուրներ 4-5 հարիւր
մէդր բարձրութեամբ : Այս Ծնդարձակ գաշտագետին
արեւեմտեան կողմը կը գտնուի Սուրբից Ծնդարձակ անտա-
պատը (Պատլիցէթ-Իւշ-Շամ), որ կը տարածուի դէպի հա-
րաւա մինչեւ Արարիոյ սահմանները եւ ուր կը բնակին
Պէտքիներու վաշկատւն ցեղեր :

Սուրբիա (Ասորիք) լեռնային երկիր մըն է իր արեւ-
մտեան մասին մէջ, Միջերկրականի ծովեղին երկայ-
նութեամբ : Հիւսիսային կողմը կ'երկարի Տօրոսի գո-

ափէն բաժնուուղ կրային լեռնաչղթայ մը, զոր կը կըտ-
րեն խորունկ կիրճեր, և որուն զիմաւոր հաստամեսան
է Կեավուր Տաղ :

Կեավուր-ատաղէն սկսելով ծովեղին զոր զահեռարար
գէպի հարաւ կ'երկարի յաղթ լեռնաշղթայ մը որ կը
բաժնուի երկու ճիւղերու, զորս իրարմէ կը զատէ Յուր-
դանանու հովիտը : Մին որ կը կոչուի Լիբանան՝ կը վեր-
ջանայ Սինայի թերակղզին ծայրը . միւսը՝ Անտի-Լի-
բանան՝ կը զծէ Սուրբիոյ անապատին արեւմտեան սահ-
մանը, իր ճիւղերով կը շրջապատէ այն խորունկ տա-
փարակութիւնը ուր անշարժ կը տարածուի Մեռեաշ
ծովը, և վերջապէս կ'երթայ կը կորսուի Արարիոյ աւա-
զուաներուն մէջ :

Պարսկային ծոցին ու Կարմիր ծովուն միջեւ կը
տարածուի Արարիոյ անջրդի լեռնադաշտը, որուն հիւ-
սիսային զասիվայրը կը կորսուի Սուրբիոյ անապատին
մէջ, և զոր աւազոււ տափաստաններ կը ծածկին եւ
սեպածեւ բարձրութիւններ կը շրջապատեն հարաւային
կողմէն :

3. Զբագրութիւն. — Ասիական թուրքիա կը բաժ-
նուի չորս աւազաններու . 1. Հիւսիսային, որ կը պա-
րունակէ Սեւ ծովու և Մարմարայի հարկատու զետերը .
2. Արեւեմտեան, որ կը պարունակէ Արշավեղագոսի հար-
կատունները . 3. Հարաւային կամ Միջերկրական ծովու
աւազան, և 4. Արեւելեան, որ կը պարունակէ Պարս-
կային ծոցին հարկատու զետերը :

Ա. — Հիւսիսային աւազանին զիմաւոր զետերն են
Ճորոսի, Եշշիլ Բրմադ, Գլուրլ Բրմադ, Ֆիլիս և Սա-
քարիա, որ կը թափին Սեւ ծով . Միխալը որ կը թափի
Մարմարայի ծովը :

Ճորիս կը բխի Կեօք-Տաղէն (Կարնոյ լեռներուն մէջ)։ կը հոսի դէպի արեւմուտք, յետոյ դէպի հիւսիս դառնալով կ'ոռոգէ Սպէր զաւառը և Կովկասիա մտնելով Սև ծովը կը թափի Պաթումի մօս։

Եկշի Ըրմագ կը բխի Զամբը-պէտ լեռնէն Զըրբը-Սու անունով։ կը հոսի նախ դէպի արեւմուտք, յետոյ դէպի հիւսիս, ին արեւելք, կ'ընդունի աջ կողմէն Թօզանլը և Քէլքիդ զետակինբը, և կը թափի Սամսոնի ծովածոցին մէջ, բազմաճիւղ տեղա մը ձեւացնելով։ Երկայնութիւնն է իր 400 քիլոմէդր։

Գրգը Ըրմագ Փոքր Ասիոյ մեծագոյն զետն է։ կը բխի Թարապէկ լեռներէն, կը հոսի նախ դէպի արեւմուտք, յետոյ դէպի հիւսիս Աջ կողմէն կ'ընդունի Տէլին զետակը, ճախ կողմէն՝ Տէլէրէկ և Կեօք ըրմադ զետակինբը. և յետոյ կը թափի Սև ծով՝ ճախճախուռ տեղա մը ձեւացնելով։ (Ունի 1000 քլմ. Երկայն.) (Պատ. 2)։

Սաքարիս զետը (600 քլմ. Երկայն) կ'ելլէ Էմիր-Տաղէն. զիսաւոր զետակիցն է Ռուբար զետակը։

Միխալը կը ձեւանայ երեք զիսաւոր միւզերէ, որ են Ասրանոս, Սուսուրլու և Թարատէրէ զետակները։ Այս վերջինը կ'ելլէ Խոա լեռնէն (Բազ-Տաղ) և Մանիսա լիճն, անցնելով կը միանայ Սուսուրլու զետակին հակ Ասրանոս որ կ'իջնէ Շապիսանէ լեռնէն կը հոսի դէպի հիւսիս, ին արեւմուտք և Արոլնիսա լիճն անցնելով կը միանայ Սուսուրլուն։


Բ. — Արեւմտեան աւաղանին ջուրի լնիթացքները բազմաթիւ են և մեծ մասը ոլատմական կարեւորութիւն ունին, թէպէտ շատերն առ պարզ առուակներ եղած ըլլան։ Ամէնէն կարեւորներն են՝ Մէնաէրէ, Պուր Զայ, Կէտիդ, Քիւչիւք Մէնաէրէս և Պիւյիւք Մէնաէրէս։

Մէնաէրէ (Հոմերոսի յիշատակած Սիմոնիսը) կը բխի Բազ-Տաղէն և Տրոլազան կ'ոռոգէ։

Ահափ (Հերմոս զետ) կ'իջնէ Մուրատ Տաղէն, դէպի արեւմուտք հոսելով կ'ոռոգէ Լիւդիան, և 300 քիլոմէթրի մօտ լնթացքէ մը յետոյ կը թափի Արշապեղադրա, Զմիւռնիոյ ծոցին հիւսիսակողմը։

Փոքր Մէնաէրէս կ'իջնէ Պօզ-Տաղէն և 110 քիլ. լնթացքէ մը յետոյ կը թափի Սբալանօվայի ծովածոցը։

Մէծ Մէնաէ.լս (Մէնանտը զետ) կը բխի Աք ատաղէն, կը հոսի դէպի արեւմուտք, և բազմաթիւ վտակներ ընդունելով իր մէջ՝ Սամս կղզին հարաւայն կողմը կը թափի Արշապեղադրա, Երկայնութիւնն է 270 քիլոմէդր։



Գ. — Հարաւային աւաղանը չունի շատ մեծ զեսկը,
որովհետեւ լեռները ծովեղբին խիստ մօտէն անցնելնուն՝
շատ երկայն զետերու աեզ չեն թալուր . Ամէնէն կա-
րեւոր ջուրի լնմթայցքներն են Քօմա Զայ (Քսանթոս),
Այսու (Սևսթոս), Քեօփրիւ Սու (Եւրիմֆատոն), Կեօփու
(Կալիկադնոս) եւ Սիհան (Սարսո), որ կ'իջնեն Տօրոս
լեռներէն . Ճիհան (Պիւրամոս) որ կ'իջնէ Սնախո-
րոսի արեւմտեան ճիւրզէն եւ բազմաթիւ գետակներ լն-
դունելով կը թափի Խակէնակրունի ծովածոցը, եւ Որոն-
քէս որ Լիբանանու լեռներէն կ'իջնէ եւ Միջներկրականի
մէջ թափելէ առաջ՝ կ'ընդունի Քարասու գետակը :

Սուրբիա ունի հերքին աւազան մը , այն է Մեռեալ
ծովու աւազանը սրուն զլխաւոր գեան է Յորդանան ,
որ կը բխի Հերմոն լեռնէն և Գենեատերի լմէն անց-
նելով կը թափի Մեռեալ ծովը :

Դ. — Արեւելեան աւազանը որ մեծագոյնն է, կը պարտավակէ երկու մեծ դեսեր, Տիգրէ և Եփրաս :

Տինվէ ուսի երկու ճիւղ : Արեւելեան ճիւղը կ'իջնէ Մոկաց լեռներին և՛ զէպի արեւմուտք հոսելով կ'անցնի Սղերդ , որտւն հարաւային կողմը իրեն կը միանայ արեւմտւան ճիւղը՝ որ կը բխի Կէօլճիք լճակին մօսերը , Այնուհետեւ Տիճէ կը հոսի զէպի հարաւային արեւելք , կ'ոսոգէ Տիարապէքիրը , Մուսուլը ևւ Պաղստատը , ու աջ կողմէն կ'ընդունի բազմաթիւ զետեր ու վասկներ : Տիճէ էի երկայնութիւնն է 1250 քիլոմէդր (Պատ . 3) :

Եփրաս (1850 քլմ. Կրկայն) զետն ալ կաղմուած է երկու ճիւղերէ . Աբեւմահեան ճիւղը որ կը կոչուի Քարասու՝ կիջնէ Կարմոյ լեռներէն և կ'ոսողէ Դերջանի և Երկպայի զաւառները . խոկ Արեւելեան ճիւղը այն է Մուրա Զայ՝ կ'ելլէ Աբարատ լերան մօտէն և զէսի հարաւարեւմուաք հոսելով կ'ոսողէ Սլաշկրախ , Պուլու-

15554-58

181



Նըքի եւ Մուշի գաշտերը, եւ Խարբուզէն անցնելով՝ Քէպան Մատէնի հիւսիսային կողմը կը միանայ Քարասուի, Այսուհետեւ Եփրատ կը հսու նախ դէպի հարաւարեւմուտք, յետոյ դէպի հարաւարեւելք, ուստեղով Միջագետքի (Էլ ձէգիրէ) եւ Բարելոնի (Իրագ Արէպի) մեծատարած գաշտագետիները. կը մօտենայ Տիգէի եւ վերջապէս անոր կը միանայ Խուսնա քաղքին առջեւ, ձեւացնելով Շագ էլ Արազը:

Շագ էլ Արագ (Արաբացւոց գետ) ունի 145 քլմ. երկայնութիւն: Տեղասաւորին ատեն իր խորութիւնն է 3-4 մէդր. բայց մակընթացւթեան ատեն մինչեւ 6-7 մէդր կը հասնի:

Լիներ. — Ասիական Թուրքիա ունի բազմաթիւ լիճեր, որոնց շատերուն ջուրը աղի է: Գլխաւոր լիճերն են Մարմարայի ծալեզրին մօտ՝ Սապանայի լիճը, Նիկոյ կամ Իզմիլի լիճը, Արօլոնիա եւ Մասիս լիճերը:

Անասուլուի լեռնագաշտին վրայ կը գտնուին ընդհանրապէս աղոս լիճեր, որոնց գլխաւորներն են Պուտսուր, Էյիրշիր, Աժէհիր եւ Պէյշիհիր: Նոյնպէս Քօչչիար (Թուրքէօլ) լիճը, որ ունի 1000 քառակուսի քելոմէդր տարածութիւն:

Արարատ լեռան հարաւակողմը՝ Պարսկաստանի սահմանին մօտ կը գտնուի Վանայ ծովակը, որուն մէջ են Լիմ, Կուոց, Առսէր եւ Աղրամար կղզիները, եւ որուն տարածութիւնն է 6300 քլմ. քառակուսի:

Պաղեստինու մէջ նշանաւոր են Գենեսարէի լիճը (Տիբերական կամ Գալիլիոյ ծով), որուն մէջէն կ'անցնի Յորդանան, եւ Մեռեալ ծովը որ 390 մէդր վար է Միջերկրական ծովուն երեսն:

ԳԼՈՒԽ Բ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. ԱԶԳԱԳԻՐԱԿԱՆ ԾԱՆՈՑՈՒԹԻՒՆ

1. ՑԵՂ

Օսմանեան կայսրութեան հպատակ ազգերը ցեղագրապէս ինը խումբերու կը բաժնուին: 1. Թուրք ցեղը, որ կը վերաբերի Ռուս-Ալմայեան ցեղախումբին եւ կը պարունակէ Օսմանցիները, Թիւրքմենները ու Լեզլիները. 2. Յոյն ցեղը, որուն կը վերաբերին բուն Յոյները եւ Քուց Վալաները (Չինար). 3. Հայերը. 4. Սլավական խումբը որուն կը վերաբերին Պոչկարենն ու Սերպերը. 5. Երանեական խումբը որուն մէջ են Քիւրենն ու Եղիսիները. 6. Սևանական խումբը որ կը բունգակէ Արաբները, Հրեաները, Սաորիները, Մարնիները, Տիւրցիները, Մերուայիները եւ Խամայիացիները. 7. Վրացի ցեղը որուն կը վերաբերին Լազերն ու Զերքսիները. 8. Աղվանիացիները, եւ 9. Գնչուները (Բոշաները), հաւասարական Հնդկաստանէն եկած:

2. ԿՐՈՆՔ

Օսմանեան կայսրութեան ժողովուրդները կրօնապէս երեք զիսաւոր խումբերու կը բաժնուին, Մահմետական, Քրիստոնեայ եւ Հրեայ:

Ա. Մահմետականութիւն . — Մահմետականութեան կը հետեւին բոլոր Թուրքերը , Թուրքերը , Սրաբները , Ալպանիացիներուն մէկ մասը , Հերսէկ-Պօնայի Սերպերուն մեծ մասը , Զէրքեսները ու Լեզկիները (իր 15½ միլիոն հոգի) :

Բ. Քրիստոնեութիւն . — Քրիստոնեաները կը բաժնուին հետեւեալ և կեղեցիներուն .

1. Օրբունի եկեղեցի , որուն կը վերաբերին Յոյները , Պուլկարները , Պօնա-Հերսէկի և Սելանիկի Սերպերուն մէկ մասը , Քուցօ-Վալաքները (Զինձար) , Քրիստոնեայ Առնառաները , ինչպէս նաև Հայ-Հոսունները :

Յոյները ունին 4 պատրիարքութիւն , Կ. Պոլիս , Աղեքսանդրիա , Երուսաղէմ և Անափոք : Կ. Պոլոյ պատրիարքը վարչապէս բարձր է միւսներէն և կը կոչուի Տիրերական Պատրիարք :

Պուլկարները մինչեւ 1870 Օրթոսոքս պատրիարքն կրօնական իրաւասութեան տակ էին : Օսմանեան կառավարութիւնը այդ թուականին Պուլկարները բաժնելով Ֆէնէրի Յոյն պատրիարքարքարանէն հաստատեց Պուլկարներու Էքզարքութիւնը , որուն աթուն է Կ. Պոլիս :

2. Հայ եկեղեցի , որ կը բովանդակէ Հայերուն մեծագոյն մասը : Հայ եկեղեցական հոգեւոր գլուխն է Սամանայն Հայոց Կաթողիկոսը , որուն առաքելական աթուն է Էջմիածին : Հայերը ունին նաև ուրիշ երկու կաթողիկոսութիւն ալ , մէկը Սիսի և միւսը Աղմամարի մէջ :

Թուրքիայ Հայերը ունին 2 Պատրիարքութիւն , մին Կ. Պոլիս և միւսը Երուսաղէմ : Կ. Պոլոյ Հայոց Պատրիարքութիւնը վարչապէս բարձր է Երուսաղէմի Պատրիարքութիւնն , որուն աթուը սակայն առաքելական է Էջմիածնի աթուին պէս :

3. Հռոմեական կամ Կաթողիկ եկեղեցի . — Ասոր կը վերաբերին Կաթոլիկ Սերպերն ու Կաթոլիկ Պուլկարները , Կաթոլիկ Սուրբացիները (Հալէպի) , Մարոնիները , Մելքիորները , Հայ-Հռոմէականները , Կաթոլիկ Քաղ-գէացիները և Կաթոլիկ Ասորիները .

Հայ-Հռոմէականները Պատրիարքական աթոռ մը ունին Կ. Պոլոյ մէջ :

4. Նեսուրական եկեղեցի , որուն կը վերաբերին Քաղգէացիները (Քիլտանի) : Ունին Պատրիարքական աթոռ մը Հէքեուրի մէջ :

5. Յակոբիկան եկեղեցի , որ կը կոչուի նաև Եւաբքական և կ'ընդգրկէ բոլոր Ասորիները : Ասորիները մինչեւ 1873 Կ. Պոլոյ Պատրիարքութեան իրաւասութեան տակ էին : Նոյն թուականին վերջնականապէս բամնուեցան և կազմեցին առանձին Պատրիարքութիւն մը , որուն աթոռն է Տէյլ-էլ-Գամէր Մէրտինի մօտ :

6. Բողոքական եկեղեցի , որուն կը վերաբերին Եւրոպացի Բողոքականներէն զատ , իբր 40,000 հայ բողոքականներ , որոնք ունին Աղգաղիտութիւն մը Կ. Պոլոյ մէջ , հիմնուած 1850 ին :

Գ. Հրեւութիւն . — Թուրքիոյ Հրեաները կը հաշուուին իբր 350,000 : Բացի տեղական Հրեաներէն , որոնք Պալեստինի , Սուրբիոյ և Պաղտատի կողմերը կը գտնուին , մնացեալները գաղթած են Սպանիայէն , Խրիմէն , Լեհաստանէն եւային :

Խրիմէն գաղթածները կը կոչուին (Գարայի) , ասոնք չին ընդունիր Թալմուար :

Օսմանեան պետութեան Հրեաները ունին ընդհանուր Խախամապէտ մը , որ կը նստի Կ. Պոլիս :

Այս երեք գլխաւոր կրօնքներուն հետեւողներէն զատ , Անատոլուի այլ եւ այլ մասերուն մէջ կը գըտ-

Նուին զանագան աղանդաւորներ, ինչպէս Տիւրքիները, Անսարիները, Մէթուալիմները (Սեմական ցեղէն), եւ զիտիները ու Կէս-Կէմները (Արփական ցեղէն) :

Բ. ԿՈՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1. Կ Ա. Ռ Ա. Վ Ա. Ռ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Օսմաննեան Կայորութիւնը Բացարձակ Միապետութիւն է : Վեհապետը՝ որ միանգամայն հոգեւոր զլուխն է բոլոր Մահմետականներուն՝ կը կոչուի Խալիֆէ եւ բոլոր Օսմաննեանց Սուլթան : Պետութեան կառավարական գործին մէջ Սուլթանին կ'օգնէ Նախարարաց Խորհուրդը, որ կը բաղկանայ Շէյխ-Խուլ-Խալամէն եւ ուրիշ Նախարարներէ, եւ որուն կը նախագահէ Մհեծ-Եպարքոսը (Սատր-Ազամ) :

Նախարարաց Խորհուրդը Բարձրագոյն Դուռը (Պատր Ալ) կը գումարուի :

Նախարարները կը նախագահնեն Վարչութեան այլ եւ այլ ճիւղերուն, որոնք հետեւեալներն են :

1. Պետական Խորհուրդ (Շուրայի Տէլլէթ) .
2. Պատերազմական Նախարարութիւն (Մագամը Սէրասքէրի) .
3. Թուրքանովարանի Վերաստեռչութիւն (Թօփիսանէի Ամիրէ հէյէթի) .
4. Ծովային Նախարարութիւն (Պահրիյէ Նէղաւրէթի) .
5. Արտաքին Գործոց Նախարարութիւն (Խարիճիյէ Նէղարէթի) .
6. Ներքին Գործոց Նախարարութիւն (Տախիլիյէ Նէղարէթի) .

7. Պատական եւ Կրօնական Գործոց Նախարարութիւն (Ալիյէ Նէղարէթի) .
8. Ելմասական Նախարարութիւն (Մալիյէ Նէղարէթի) , որ կը հոգէ նաև Ահատաներու և Հանքերու վերաստեռչութեան .
9. Անշարժ Կալուածոց Նախարարութիւն (Էլգագափ Հիւմայուն Նէղարէթի) .
10. Հանրային Շինութեանց եւ Առեւարական Նախարարութիւն (Նաֆաա վէ Թիճարէթ Նէղարէթի) .
11. Կրթական Նախարարութիւն (Մէարիֆ Նէղաւրէթի) .
12. Արքունի Գանձուն Նախարարութիւն (Խազինէի խասակի շահանէ) .
13. Ռասիկանութեան Նախարարութիւն (Զապիլիյէ Նէղարէթի) :

2. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Քաղաքային Վարչութեան ակտակէտով Օսմաննեան Կայորութիւնը բաժնուած է 29 Նահանգներու կամ Կուսակալութիւններու (Վիլայէթ), որոնք կը կառավարուին Սուլթանէն անուանուած կուսակալներով կամ ընդհանուր կառավարիչներով (Վալի) :

Եւրոպական Թուրքիա կը սկսրունակէ վեց կուսակալութիւն (Էտիլինէ, Սելանիկ, Մանասթըր, Քոօվլա, Շքօտրա եւ Եանիա) :

Ասիական Թուրքիա կը սկսրունակէ 22 կուսակալութիւն (Խիւստավէնատիկեար, Այալն, Արշիպեղակոս, Աստանա, Քօնիեա, Էնկիւրի, Գասթէմունի, Տրապիզոն, Էրզրում, Սըվազ, Մամուրէթ-Խուլ-Աղիզ, Տիարապէքիր, Պիթլիս, Վան, Մուսուլ, Պաղտատ, Պասրա, Հալէպ, Սուրիա, Պէտրի, Հինական եւ Եէմէն) :

Ավրիկեան Թուրքիա կը պարսնակէ մէկ կուսաւկալութիւն միայն, որ է Թուրաբլուու :

Այս 29 Նահանգներէն զատ կան նաեւ Կ. Պոլսոյ Կուսակալութիւնը, ինչպէս նաեւ ուղղակի Ներքին Գործոց նախարարութենէն կախում ունեցող վեց Գաւառներ (Միւթէսարրի ֆութիւններ), որ են .

Զաթաւլճայի Գաւառը՝ Եւրոպ, Թուրքիոյ մէջ .

Իդմափի, Պիղայի, Զօսի, Երուսաղէմի Գաւառները Ավրիկեան Թուրքիոյ մէջ .

Պէնկարչի Գաւառը՝ Ավրիկեան Թուրքիոյ մէջ :

Կուսակալները երբեմն օգնականներ ալ կունենան (Վալի մուալինի) : Ամէն կուսակալի քով եւ անոր տեսչութեան տակ կը գտնուին Համարակալ մը (Տէքթէրտար), ընդհանուր Քարտուղար մը (Մէքթուպճի), Հասարակաց կրթութեան, վաճառականութեան, Երկրագործութեան, հանրային շինութեանց, հանքերու եւ անտառներու տեսուչներ, նոյնպէս ոստիկանապեաններն ու քաղաքապահ զօրքերու պետերը, եւայն :

Ամէն կուսակալութիւն բաժնուած է Գաւառներու (Սանձադ կամ Լիվա), որոնք գաւառապետներով (Միւթէսարրի) կը կառավարուին :

Ամէն նահանգ, ինչպէս նաեւ ամէն գաւառ ունի Վարչական ժողով մը, մեծ պաշտօնեաններէ ու տեղացիներէ կազմուած :

Եւրաքանչիւր գաւառ կը բաժնուի Գաւառակներու (Գաղա), որ կը կառավարուին Փոխ-կառավարիչներով (Գայմագամ), որոնք գաւառապետին իշխանութեան տակ կը գտնուին :

Գաւառակներ կան, որոնք իրենց իշխանութեան տակ ունին Վիճակներ (Նահիչէ), որ կը կառավարուին կուսակալէն ընտրուած Միւտիրներով :

Վիճակները երբեմն բաւական ընդարձակ ըլլալնուն մերձակայ գաւառակի մը կցուած կ'ըլլան, որուն Գայմագամին իշխանութեան տակ կը մնայ նոյն վիճակին Միւտիրը .

Մէկ քանի զիւղերու եւ տւաններու, կամ ամբողջ քաղաքի մը, եւ կամ Քաղաքի մը՝ Շրջանակ կազուած մէկ սարաբաժանումն կառավարութիւնը կրնայ ձեւացնել Քաղաքապետութիւն մը կամ Թաղապետութիւն մը :

3. ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԽԻՒԽԻՆ

Դատաստանական Վարչութիւնը վերակազմուած է Եւրոպական Օրէնսգիտութեան սկզբունքին համեմատ :

Ամէն գաւառակի գլխաւոր քաղաքին մէջ կը զբանուի Գատաւոր մը (Գատը) : Եւրաքանչիւր գաւառի գլխաւոր քաղաքին մէջ կան Նախադատ Ատեաններ (Պիտայէթ Մահքէմէսի) եւ ամէն նահանգի կուսակալանիստ քաղաքին մէջ կան Վերաքննիչ Ատեաններ (Բաթինափ մահքէմէսի) :

Իսկ Վճռարեկ կամ Վճռաջինջ Ատեանը (Թէմեիգ մահքէմէսի) կը գումարուի միայն Կ. Պոլիս :

Վաճառականական կարեւոր կեղրոններու մէջ կան Առեւտրական Գատարաններ (Թիճարէթ Մահքէմէսի) :

4. ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԽԻՒԽԻՆ

Օսմանեան Կայսրութեան ցամաքային զօրութիւնը կը բաժնուի եօթը զօրաբանակներու, որոնց ընդհանուր բանակատեղիներն են 1. Կ. Պոլիս, 2. Էտիրնէ, 3. Մա-

Նասոթըր , 4. էրզինկեան , 5. Դամասկոս , 6. Պաղտատ ,
և 7. Եւմէն :

Այս եօթը զօրաբանակներէն դուրս է Թարապլուսի
զօրաբամինը (Փրոգա) :

Ամէն Խոլամ զինուոր է և վիճակարկութեամբ կամ
լինքնակամ զինուորաւթեամբ կը կոչուի ծառայութեան ,
որ կը տեւէ 20 տարի :

Բանակը կը բաղկանայ երեք կարդ զօրքերէ , Կա-
նոնաւոր զօրք (Նիղամ Ասկէրի) , Պահեստի զօրք (Ռէ-
տիֆ) և Պահապան զօրք (Մուսթահիք) :

Ամէն զօրաբանակ Մարաջախտի մը (Միւշիր) հրա-
մանատարութեան տակ կը գանուի :

5. ԾՈՎԱՅԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆ

Օսմանեան նաւատառմիզը կը բաղկանայ բազմաթիւ
նաւերէ . ունի 14 զրահուոր , 8 Ֆրէկաթ , 10 Գորիէդ ,
20 էն աւելի անզրահ մարտանաւեր , 15 թնդանոթա-
կիր , 12 թօրփիլանաւ առաջին կարգի , և 5 թօրփի-
լանաւ Բ.րդ կարգի , 2 յածաւորակ Բ.րդ կարգի , 6 աղ-
դանաւ (Ափիզօ) , 3 Եաքդ կայսերական , և 18 փո-
խազրանաւ :

Նաւատառմիզը ունի եօթը նաւարամին . 1. Կ. Պո-
լիս , 2. Շքօրա , 3. Հոսոլս (Արշիպեղագոս) , 4. Բրէ-
վէլա , 5. Պասրա , 6. Թարապլուս , 7. Ճիտաէ :

6. ՀԱՍՏՐԱԿԱՑ ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. Խոլամ Վարժարաններ . — Պաշտօնական ուսու-
ցումը կը սրուի նախնական , նախապատրաստական և

երկրորդական վարժարաններու մէջ (Խալթիուակյէ , Ռիւշ-
տիյէ , Խտատիէ) , որոնք բազմաթիւ են Պոլսոյ և Գա-
ւանակներուն մէջ : Ասոնցին՝ զատ թէ Պոլսոյ և թէ ուրիշ
կարեւոր կեղրաններ ունին մասնաւոր վարժարաններ ,
որոնց մէջ՝ անհամար Մէտրէսէններէն (Աստուածաբանա-
կան Դպրոց) գուրա՞ յիշատակութեան արժանի են Կայ-
սերական վարժարանը (Մէքթէպի Միւլքիյէ Շահանէ) ,
Կալաթա-Մէքթայի (Բերա) Կայսերական լիսէն (Մէքթէպը
Սուլթանիյէ) , Բանկալթիի (Բերա) Զինուորական վար-
ժարանը (Մէքթէպը Հարպիյէ) , Կ. Պոլսոյ Կայսերական
բժշկական վարժարանը (Մէքթէպը Թըպպիյէ Շահանէ) ,
Իրաւագիտական վարժարանը , Նաւային վարժարանը
(Մէքթէպը Պահրիյէ) Հալքիի (Խխանաց կողիներ)
մէջ , Կ. Պոլսոյ Գեղարուեստից վարժարանը (Մէքթէպը
Սանայի) , Հալքալը , Սելանիկի , Պրուսայի , Քօնեայի
Երկրագործական վարժարանները եւայլն :

2. Ոչ-Խոլամ Վարժարաններ . — Բոլոր Քրիստոնեայ
հասարակութիւնները , ինչպէս նաեւ Հրեաններն անին
բազմաթիւ գպրոցներ : Ամէնէն լաւ կազմակերպութիւն
ունեցողներն են Հայ վարժարաններէն Ղալաթիոյ (Պո-
լս) Աղղային կեղրանական վարժարանը , Սկիւտարի
Քէրպէրեան վարժարանը , Էրզրումի Սանասարեան
վարժարանը , իսկ օտար վարժարաններէն՝ Յունաց Ֆէ-
նէրի գպրոցը , Ամերիկեան վարժարանը՝ Ռօպէրթ-Գոլէճ ,
նոյնպէս Այնթապի և Մարտունի Քոլէճներն եւայլն :

Օտար միսիօնարներ ու կարեւոր քաղաքներու մէջ
ունին նախնական և երկրորդական երկսեռ վարժա-
րաններ , ուր ամէն ազգի ազգաք կ'ընդունուին առանց
կրօնքի խարութեան : Այս տեսակ վարժարաններ կան
Պոլսոյ , Էտիրնէ , Սելանիկ , Իզմիր , Դամասկոս , Պէ-
րութ , և այլն :

Յ. Թանգարաններ. Մատենադարաններ. — Կ. Պոլիս
ունի Հնութեանց հարուստ Թանգարան մը (Միւզէ) : Իս-
լամական Մատենադարաններ խիստ շատ կան մանա-
ւանդ Կ. Պոլսոյ մէջ :

7. ԿՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ինչպէս ըստնք, Խոլամաւթեան կամ Մահմետակա-
նութեան գերազոյն պեսն է Սուլթանը : Խոկ հոգեւո-
րական իշխանութիւնը յանձնուած է Շէյխ-խուլ-Խոլամին,
որ զլուխն է Խուլմաններուն : Ասոնց պաշտօնն է Մար-
գարէ Մուհամմէտի Սուրբ Գրքին (Կուրանը Շէրիֆ)
աւանդութիւնն ապահովէլ եւ անոր մեկնութիւնը սոր-
վեցնել, որով ասոնք կրօնական այլ եւ այլ գասակարգե-
րու բաժնուած են, ինչպէս Գալուները որ մեկնիչներն
են, եւ Խմամները որ աւանդողներն են :

Այս վերջիններուն մէջ կան Քարոզիչները կամ Շէյ-
խերը, բռն Խմամները որոնք մզկիթներու սպասաւո-
րութիւնը եւ կրօնական արարողութիւնները կը կատա-
րեն, Մուէզզինները որ հաւատացեալներն աղօթքի կը
հրաւիրեն, Քայիմները որ մզկիթներու կարգ ու սարքին
եւ մաքրութեան հոգ տանելու պաշտօն ունին, եւ գեռ
ուրիշներ :

Ուրիշ կրօնքներու հետեւողները պաշտամունքի կա-
տարեալ աղատութիւն կը վայելեն՝ Կայսրութեան ամէն
մասերուն մէջ ալ :

ԳԼՈՒԽ Փ.
ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Կ. ՊՈԼՍՈՅ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Կոստանդնուպոլսոյ Կուսակալութիւնը որ կը տա-
րածուի Սև ծովուն եւ Մարմարայի մէջանդ՝ կը պա-
րունակէ Կոստանդնուպոլսոյ Քաղաքապետութիւնն ու
Զաթալճայի գաւառը :

ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆ Կ. ՊՈԼՍՈՅ

Կ. Պոլսոյ Քաղաքապետութիւնը (Շենր Էմանէրի)
փոքր վիճակ մըն է որ կը պարունակէ բռն Կ. Պոլսոյ
քաղաքը իր շրջակայ արուարձաններով : Ունի 5000
քառակուսի քիլոմէտր ասրածութիւն եւ իբր 1,200,000
բնակիչ :

Կ. Պոլսոյ Քաղաքապետութիւնը ուղղակի կախում
ունին :

Եւրոպական բաժնին մէջ՝

1. Քիւչիս Զեմէնէկի գաւառակը (գագա)՝ Սու-
եօլուի եւ Ֆենէրի գիւղախումբերով (նահիյէ) :

2. Եօթը թաղապետական շրջանակներ (Տափրէի
Պէլէալիէ) . Ա. Սուլթան Պայտակիս, Բ. Ֆարիհ, Գ. Ճկրրահ
Փաշա, Դ. Պէշիլթաշ, Ե. Եկնիփեօյ, Զ. Բերա եւ Լ. Պէ-
յիլիքէրկ :

Ասիական բաժնին մէջ՝

Ա. — Իշխանաց կղզիներու գաւառակը (Բրինիքօ,
Հալիքի, Բրօքի եւ Սնրիկօնի կղզիներով) :

Բ. — Կեյզրակի գաւառակը՝ Տարլանյի գիւղաւ-
խումբով :

Գ. — Պէջօղի գուշառակը :

Դ. — Դարքալի գաւառակը Սապահնայի գիւղաւ-
խումբով :

Ե. — Զիղի գաւառակը :

Զ. — Երեք թալապետական շրջանակներ .

8րդ Շրջանակ՝ Դանլըն (25,000 բնակիչ) :

9րդ » Սկիւտար (105,000 բնակիչ) :

10րդ » Գատընիօյ (32,000 բնակիչ) :

Կոստանդնուպոլիս (880,000 բնակիչ) Օսմանեան Պետական մայրաքաղաքը՝ աշխարհիս գեղեցկագոյն քաղաքներէն մէկն է, Պօսֆորի նեղուցին հարաւային ծայրը :

Ունի եղական դիրք և ընդարձակ, վաճառաշահ ու սքանչելի նաւահանգիստ մը (Պատ. 4) :

Բուն քաղաքը որ Սրանպուշ կը կոչուի, կը կանգնի եօթը բլուրներէ ձեւացած եւանկիւնի սարաւանդի մը վրայ և Դալարիոյ ու Բերայի արաւարձաններէն կը բաժնուի Ովկիչիւր կոչուած ծովային բազուկով :


Քաղաքին նշանաւոր շինքերն են

Եօթն աշտարակները (Եկամի Բուլի), իրը հնութիւն . Փողերանցը (Զարպիսանէ)՝ հին պալատ Բիւզանդիան .

Մեծ Շուկան, Բիւզանդիան Զրամբարանոցները (Պին սիր սիրէք), որ այժմ ցամքած են . Զիարձակարանը (Աթմէյանը) ուր կայ եզիզատական կոթող մը . Կոստանդնուպոսի սիւնը (Զէմպէրլի թաշ) Նուրը Օսմանիյէի մօտ .

Սրկագիսոփ սիւնը (Ավրաթ փաղար). Մարգիանոսի սիւնը (Բըզ թաշ) . Թէսուսի սիւնը եւայլն : Նշանաւոր

են մանաւանդ Այա Սօֆիայի մզկիթն ու Սուլթան Ահմէտի, Սուլթան Պայազիտի, Սուլթան Մէհմէտի, Սուլ-



թան Սէլիմի, ինչպէս նաեւ Օսմանից եւ Սիւլէյմանից մզկիթները . Սուլթան Ահմէտի, Սուլթան Մէհմէտի եւ Սուլթան Մահմէտ Բ.ի Կայսերական գամբարանները (թիւրպէ) :

Կ. Պոլսոյ եւրոպական արուարձաններուն մէջ յիշատակութեան արժանի են Եկեհի Քռվիկ, Մաֆրիմօյ՝ ուր կը գտնուի Արքանի վասողարանը . Սան-Սրէփանօ, Քիչիսի-Զէմինէ վարքիկ նուռահանդիսար . Քեաղահաննէ Ռոկեղիւրի խոր գեղեցիկ հովափ մը մէջ, ունի Կայսերական պալատ . իսկ Պոսֆօրի երկայնութեամբ՝ Պէշիկրաշ, Օրբակօյ, Արևավուս Քեօյ, Պէպիք, Ռումեկի Հիսար որ ունի հին զգեստ որ, Ֆաթիհ Սուլթան Մէհմէտէն շինուած, Եկեհիկօյ, Թարապիա եւ Պէտիտէրէ որոնք մեծասաններու եւ գեսպաններու ամառանցներ են :

Պոլսոյ ասիստական արուարձաններուն մէջ յիշատելու արժանի են Պէյզօզ, Գանջլան, Անասօլու Հիսար, որ նշանաւոր է իր բերդով, Երլարլրմ Սուլթան Պայազիւտէն շինուած . Պէյլերպէյի որ ունի շքեղ եւ ճսիս Կայսերական պալատ մը եւ գեղեցիկ մզկիթ մը . Սկիւտար որ առանձին քաղաք է (Պատ. 5) . Գատրիկօյ որ նորակառոց մեծ արուարձան մըն է, հին Քաղկեդոնի աւերակներուն մօս . Հայտար Փաջա, որ Անասօլուի երկաթուղիներուն մեկնակէան է . Կէյզիկ գեղեցիկ քաղաք . Տարլան համբաւուր իր գինիներով . Հէրէիք որ ճարտարարուեստական քաղաք մըն է, նշանաւոր իր Կայսերական գործարաններով :

ԶԱՅՍԱԼՃԱՑԻ ԳԱԽԱՐ

Զաթալճայի գաւառը կը պարունակէ
Սիւլիլիի եւ Պէօփէք Զէքմէճի գաւառակներն ու
Գարաճաքէօյ եւ Տէրքօս գիւղախումբերը : Ունի 57,000

բնակիչ : Հողին գլխաւոր արտադրութիւններն են արմբատիք, խոս, ծիսախոտ, խաղով, վառելափայտ եւալյն:

Գլխաւոր քաղաքն է Զարանա (5000 բն.) որ զինի, արմատիքի, ձուկի եւ պանիրի առուատուր ունի :

Սիլիվրի (5000 բն.) փոքր, բայց բաւական բանուկ նաւահանգիստ :

2. ԷՏԻՐՆԵՒԻ ԿՈՒՋԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Էտիրնէի Կուռակալութիւնը կը տարածուի Արեւելեան Բումէլիի հարաւակողմը՝ Սիւ եւ Մարմարա ծովերուն ու Արշիպելագոսի մէջանեղ եւ կը զրաւէ հին Թրակիոյ մեծագոյն մասը :

Կլիման՝ ձմեռը ցուրտ եւ ամառը տաք է . հազը շատ հարուստ է եւ լաւ մշակուած : Դլխաւոր արտադրութիւններն են՝ արմենի, զինի, բամբակի, ծխախոտ, ընդեղին, ձիքապտող, ամեն եւսակ մրգեղին, եւ վարդի իւղ : Լեռները շատ անտառախիտ են :

Էտիրնէի նահանգին ձեռագործական արտադրութեանց մէջ կարեւոր են կերպակեղենները (շայաթները եւն), հատիչ զինիները եւ վարդի իւղը :

Վարչական բաժանումներ. — Էտիրնէի նահանգը կը պարունակէ հետեւեալ 6 գաւառները (Սանճաղ), Էտիրնէ, Քըրք-Քիլիսէ, Ռոստով, Կէլիպոլու, Տէտէ-Աղաճ եւ Կիւմիւլճինա :

Գլխաւոր քաղաքներ .

Ա. — Էտիրնէի գաւառին մէջ .

Էտիրնէ (Սնդրիանուպոլիս) (70,000 բնակիչ) կուռակալանիստ քաղաք՝ Մարիցա եւ Թունճա գետերուն իրար 132 — Աւերհանդես

Խառնուած տեղը : Կայսրութեան մայրաքաղաքն եղած է 1366ին մինչեւ 1453, այն է Պոլոյ առան թռւականը . ունի փառաւոր մզկիթներ , մանաւանդ Առևիթան Սէլլմի մզկիթ՝ թուրքիոյ գեղեցկագոյն մզկիթներէն մին :

Կ. Պոլսէն՝ Պուլկարիա և Եւրոպա ինչպէս նաև Սելանիկ և Պուրկաղ ասնող երկաթուղիներուն առաջն կարզի կայտանն ըլլալով էտիրնէ , այժմ բաւական կարեւորութիւն առացած է : Ունի հասու կատել զորաբաններ , մետաքսի մանարաններ , շողեշարժ ազօրիքներ և բանուկ վաճառականութիւն զինի , խողակի , մետաքսի , բուրդի , արմատիքի , մորթի , մեղրամուի եւայն :

Ուզուն Քէօփրիւ՝ վաճառտչան քաղաք՝ էրկէնէ գետակին վրայ :

Տիմերօն (12000 բնակիչ) ունի հին բերդ : Կարեւոր է իր բրուտեղիններով ու մետաքսեղէն և ասուեղէն կտաւներով :

Բ. — Քլրի-Քիլինիկ գաւառին մէջ .

Քլրի-Քիլիսէ (18000 բն.) էտիրնէ արեւելեան կողմը , ունի աղնիւ զինի . կ'արտադրէ նաև արմատիք և ծխախոտ :

Միտիա փոքրիկ հաւահանդիսան Սեւ ծովու վրայ . Կ'արտածէ զիխաւորաբար վատելափայտ և ածուխ :

Դ. — Ռուսորի գաւառին մէջ .

Ռուսոր (33000 բն.) վաճառտչան քաղաք և գեղեցիկ հաւահանդիսան Մարմարա ծովուն վրայ :

Զօրլու (12000 բն.) , երկաթուղեաց կայտանէն կէս ժամ հեռաւորութեամբ՝ ըլուրի մը վրայ գետեղուած վաճառտչան քաղաք է :

Մարկարա երկրագործական քաղաք մըն է :

Դ. — Կէղիպօղուի գաւառին մէջ՝
Կէղիպօղու (12000 բն.) Մարմարայոց և վաճառտչան քաղաք և բանուկ նաւահանդիսան Սրբազեղագոսի վրայ :

Տէաէ-Աղաճ՝ Ռումէլիի երկաթուղեաց և Սելանիկ-Կ. Պոլոյ միացման զծին սկզբնակիչան ըլլալով , էտիրնէ իր կուսակալութեան առեւտրական կարեւորագոյն կեղրանը կը համարուի :

Էցու (3000 բն.) էտիրնէ նախկին նաւահանդիսան է որ Տէտէ-Աղաճն երկաթուղեաց զծին բացումին ի վեր կորուսծ է իր կարեւորութիւնը :

Զ. — Կիսմիալճինափ գաւառին մէջ .

Կիսմիալճինա (14,000 բն.) վաճառտչան քաղաք Բարլըզ-տաղի ստորաը , բարերեր գաշտի մը մէջ . անուանի է տօնավաճառը :

Թսանիրի (16,000 բն.) ծովեղիլն 2½ ժամուան հեռաւորութեամբ՝ Սելանիկ-Տէաէ-Աղաճ-Կ. Պոլիս երկաթուղեաց կայտանն է : Անուանի է ծիստիսաը :

Եկենինէ (3000 բն.) Խորէչէ հարտաւային կողմը՝ համրաւաւոր է նոյնպէս ծխախոտը :

3. ՍԵԼԱՆԻԿԻ ԿՈՒՍՄԱԿՈՒՐԻԹԻՒՆ

Սելանիկի կուսակալութիւնը կը տարածուի էտիրնէ ի նահանդին արեւմտեան կողմը :

Երկիրը բաւական լաւ մշակուած է և կը պարունակէ բարերեր հավիաններ ու դաշտագետններ ուր կը համնին արմատիք , եղիպատացորեն , ծխախոտ , բրինձ ,

բամպակ, որթեառնկ եւ պտղատու ծառեր : Երկրին հիւսիսային եւ արեւելեան կողմերն ընդհանրապէս լեռնային են, Բէլօա լիսներուն գագաթները ծածկուած են կաղնիի եւ փեկսնի անտառներով . արեւելեան մասը ունի չագանակենիի գեղեցիկ անտառներ : Թթենին նոյն պէս շատ լաւ կ'աճի եւ կը ծառայէ չերամաբուծութեան որ բաւական յառաջ դացած է :

Բուրգն ալ կարեւորագոյն աեղ մը կը զրաւէ այս երկրին արտադրութեանց մէջ : Տարեկան արտադրութիւնը կը մօտենայ 2,700,000 օֆայի որուն կէսը չլուացուած կ'արտածուի Եւրոպա :

Վարչական բաժանումներ. — Սելանիկի կուսակալութիւնը կը բաժնուի Յ գաւառներու (ասնձագ)՝ Սելանիկ, Սէրէդ եւ Տրամա :

Գլխաւոր քաղաքներ .

Ա. — Սելանիկի գաւառին մէջ՝

Սելանիկ (Թեսաղոնիկէ) (100,000 բն.) համանուն ծոցին խորը Եւրոպական Թուրքիայ ամէնէն վաճառաշահ քաղաքը՝ եւ Կ. Պոլսէն յետոյ կարեւորագոյն հաւահանգիստն է :

Նիսուսա կամ Ալուրօս համբաւաւոր է իր դինիով : Սրբութից (10,000 բն.) համանուն գեալին մօտ ունի ջերմուկներ :

Սելանիկի գաւառին մէջ է Արօս կամ Ալմօրօք լեռան թերակղզին ուր կը բնակին հաղարաւոր Յոյն, Ռուս, Սերպ եւ Պուլկար արեւաներ, որոնք կ'ապրին 20ի չափ վանքերու եւ մենաստաններու մէջ :

Բ. — Սերէզի գաւառին մէջ՝

Սերէզ (30000 բն.) Թաքինոս լճին մօտ՝ Սելանիկ-Կ. Պոլս երկաթուղիի գծին վրայ՝ վաճառաշահ քա-

զաք է եւ կարեւոր կեղրոն Եւրոպական Թուրքիոյ բամպակի մշակութեան եւ վաճառականութեան:

Նելիրեկօք (8000) առեւտրական քաղաք է :

Տէմիր-հիսար՝ ունի երկաթի հանքեր :

Գ. — Տրամայի գաւառին մէջ .

Տրամա (7500 բն.) բարերեր գաշտի մը մէջ վաճառաշահ քաղաք եւ առաջին կարգի կայարան Սելանիկ — Կ. Պոլս միացման գծին . ունի մևծ արտածութիւն ծխախոտի :

Քավալլա (1800) համանուն ծոցին խորը վաճառաշահ նաւահանգիստ :

Մարը շապան՝ անուանի է իր ծխախոտով :

4. ՄԱՆԱՊԹՐԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մանասրըի կուսակալութիւնը կը տարածուի Սելանիկի նահանգին արեւամեան կողմը :

Կլիման բարեխսասն է գաշտային մասերուն մէջ, իսկ լեսնոտ տեղուանքը՝ ցուրտ :

Գլխաւոր բերքերն են ցորեն, եւ ուրիշ արմատք, եղիպատացորեն, ընդեղէններ, կտաւատ, մրգեղէն եւն :

Լեսնային մասերուն մէջ կը գտնուին մեծատարած անտառներ, որոնք կը պարունակեն որան կենդանիներու շատ տեսակները :

Նահանգին ամէն կողմերը կը գտնուին ազօրիքներ, մանաւանդ Մանասիլըրի գաւառը ունի ջրաբաշխական կատարելագործուած մեքենաներով բանով ջաղացքները Սերֆիչէի գաւառը նշանաւոր է իր ասուեղէն ու բամպակեղէն գործուածներով :

Վարչական բաժանումներ. — Մանասիլըրի կուսա-

կալութիւնը կը պարտանակէ հինգ դաւ առներ՝ Մանաւ-
թըր, Սէրփիչէ, Կորփյա, Տիպրէ եւ Ելտասան :

Դլսաւոր քաղաքներ .

Ա. — Մանասթըրի գաւառին մէջ՝

Մանասթըր (50,000 բնակիչ) բարձր գաշտի մը մէջ
զինուորական մէծ եւ կարեւոր քաղաք է։ Աւոփ գեղեցիկ
վաճառանոց մը եւ ջրաբաշխական ալօրիքներ ու
ասուեղէնի գործարան :

Բրիլիփ (18000) կարեւոր է տօնավաճառը :

Օլորիտա (5000 բն.) համանուն լճին վրայ վաճա-
ռաշահ քաղաք . շրջականները կը գանուին արծաթի,
պղնձի եւ ծծումբի հանքեր :

Բ. — Սէրփիչէի գաւառին մէջ կարեւոր է՝

Սէրփիչէ (4000 բն.) վաճառաշահ քաղաք՝ իր աս-
տեղէն ու բամբակեղէն գործուածներովն անուանի :

Գ. — Կորիցափ գաւառին մէջ .

Կորիցափ (14000), ճարտարարուեաստական եւ վաճա-
ռաշահ քաղաք :

Դ. — Տիպրէի գաւառին մէջ՝

Տիպրէ (45000) Տրին գետին վրայ առեւարական եւ
ճարտարագործական քաղաք :

Ե. — Ելտասանի գաւառին մէջ՝

Ելտասան (5000) Տուրբացօչն Օլորիտա տանող ճամ-
բուն վրայ վաճառաշահ քաղաք է՝ զեղեցիկ հովտի մը
մէջ :

5. ՔՈՍՈՎԱՅԻ ԿՈՒՍՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Քօսովայի կուսակալութիւնը կը տարածուի Սելա-
նիկի եւ Մանասթըրի նահանգներուն հիւսիսային կողմը՝
Քարատաղի, Պօնայի եւ Սերպիոյ մէջանդ :

Արշական բաժանումներ եւ զլսաւոր հաղաքներ . —
Քօսովայի նահանգը կը պարտանակէ հետեւեալ վեց դա-
ւանները . Խւոկիւպ, Բրիչթինա, Նօվիալազար, Իփէք,
Թաշչլճա եւ Բրիզրէն :

Դլսաւոր քաղաքներն են՝

Խւալիւպ (60,000 բն.) Վարտար գետին վրայ, հին
եւ վաճառաշահ քաղաք բարերմբ երկրի մը մէջ :

Բրիչթինա (12,000 բն.) Քօսովայի գաշտին մէջ,
նոյնպէս վաճառաշահ քաղաք : Վարտածէ ցորեն, զարի,
եղիպացգորեն, զինի եւ մորթ :

Միրօվիցա (7000 բն.) բաւական կարեւոր քաղաք
է նահանգին զլսաւոր կեղրոններուն հետ ունեցած նե-
րածման ու արտածման վաճառականութեամբ : Աւոփ
երկանի քարահանքեր :

Սրտածութեան զլսաւոր նիւթերն են ցորեն, զարի,
վարսակ, եղիպացգորեն, զանուուկի եւ ոչխարի մորթ,
պանիր, շինութեան փայտ եւ արջառ . ատոնց մէծ մասը
Սելանիկի համար է, որուն հետ Միթրօվիցա կապուած
է երկաթուղիով :

Իվիկ (15,000 բն.) Գարտատաղի կողմից՝ զեղեցիկ
հավտի մը մէջ վաճառաշահ քաղաք է :

Բրիզրէն (30,000 բն.) Զար-Տաղի ստորածը՝ նոյնպէս
առեւարական քաղաք :

6. ՇՔՈՑՐԱՅԻ ԿՈՒՍՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Շքոցրայի կուսակալութիւնը կը տարածուի Աղրիա-
կան ծովուն երկայնութեամբ՝ Գարտատաղէն մինչեւ Եան-
եալի կուսակալութիւնը : Լեռնոտ երկիր մըն է՝ ընդհան-
րապէս անտառներով ու արօտատեղիներով ծածկուած :
Աւոփ սակայն արգաւանդ հալիսաներ ու բարերեր դաշ-

տեր ալ ուր յաջողապէս կ'ամին ցորեն, որթատունկ, թթենի եւ ձիթենի :

Վարչական բաժանումներ եւ զիսաւոր հաղաքներ. — Շքօտրայի կուսակալութիւնը կը բաժնուի երկու գաւառներու, Շքօտրա եւ Տիւրացցո :

Դիմաւոր քաղաքներն են

Եօտրա (40,000 բն.) համանուն լճին վրայ կուսակալանիստ քաղաք եւ առեւտրական ու ճարտարագուեստական կեղրոն : Նշանաւոր է զգեակը, զոր կասուցած են վեհեափեցիք :

Կ'արտածէ տրդառ, մուշտակ, լուացուած ու անլուայ բուրդ, մեղրամոմ, շինութեան փայտ, վառելափայտ, եւն :

Լէ կամ Ալիսիօ (3000 բն.) վոքք նաւահանգիստ Աղրիտականի վրայ :

Տիւրացցո (6500 բն.) հին քաղաք եւ բանուկ նաւահանգիստ Աղրիտականի վրայ :

Թիւրանա՝ գեղեցիկ քաղաք եւ առեւտրական կեդրոն :

7. ԵԱՆԵԱՅԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Նանեայի կուսակալութիւնը կը տարածուի Շքօտրայի նահանգին հարաւակողմը՝ Աղրիտական ծովուեղերքը, Մահասթըրի նահանգին եւ Յունաստանի մէջաւել :

Ծովեղբին մօտ գանուած գաշտերը՝ որոնք կուսակալութեան միակ բարեկեր մասերն են, կ'արտազրին ցորեն եւ ուրիշ արմափք, խաղող, կիտրոն, նարինջ, ձիթապտուղ, ծխախոտ, բամպակ, եւայլն : Նահանգին

մնացած մասին մէջ կան ընդարձակ արօտատեղիներ, որոնք կը մնուցաննեն լնափր արջառներ, մանաւանդ համբաւաւոր ձիւր :

Ծովեղբին վրայ ձկնորսութիւնը չատ արդիւնաբեր է :

Վարչական բաժանումներ եւ զիսաւոր հաղաքներ. — Եանեայի կուսակալութիւնը կը բաժնուի 4 գաւառներու. Եանեա, Էրկերի, Պերաք եւ Բրեվեզա :

Դիմաւոր քաղաքներն են՝

Եանեա (20000 բն.) համանուն լճին վրայ մեծ եւ ծաղկած քաղաք :

Մեցօվ (8000 բն.)

Էրկերի կամ Արկիրո-Քասրօ (12000 բն.) Վոյուցա գետին վրայ բարեկեր հովտի մը մէջ վաճառաշահ քաղաք։ Թէփելեն ամուր քաղաք :

Պերաք (10000 բն.) վաճառաշահ քաղաք. ունի կարեւոր արաւազրութիւն ձէթի, բուրզի, արմափի եւ մորթի :

Ալիօնա (7000 բն.) համանուն ծոցին վրայ վաճառաշահ նաւահանգիստ :

Բրեվեզա (10000) Արդայի ծոցին բերանը գեղեցիկ եւ բանուկ նաւահանգիստ եւ բերդաքաղաք :

Բարկա՝ Բաքսոս կղզին զիմացը վոքրիկ նաւահանգիստ :

ԳԼՈՒԽ Դ.

ԱՍԻԱԿԱՆ ԵՒ ԱՓՐԻԿԵԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Ի ԶՄԻՑԻ Գ.Ա.Խ.Ա.Ռ.

Իզմիտի գաւառը որ կը պարունակէ հին Բիւթանիոյ մէկ մասը՝ կը գտնուի Կ. Պոլսոյ կուսակալութեան արեւելեան կողմը, Պրուսայի և Գաոթէմունիի նահանգներուն ու Սեւ եւ Մարմարա ծովերուն մէջանեղ :

Երկիրը բարեկեր է եւ հողը լաւ մշակուած : Գլխաւոր բերքերն են արմատիք, եղիպտացորեն, գետնախօնձոր, վուշ, կանեփ, ծիսախոս, ընդեղէններ, եւ մըրգեղէն (չամիչ, ընկոյզ, շագանակ, նուշ, են.) , կէրվէի, Ատարազարի եւ Քանաէրէի դաւառակիները կը պարունակէն ընդարձակ անտառներ, որոնք Պոլսոյ եւ շրջականերուն կը մատակարարեն մեծ քանակութեամբ փայտ եւ ածուխ :

Իզմիտի գաւառին մէջ յիշատակութեան արժանի են ֆէսի, չուխայի եւ մետաքսեղէնի գործարաններ, որոնք կասավարութեան յատուկ են : Ասմոցմէ զատ զաւառին ամէն մասերուն մէջ կը գտնուին մետաքսի մանարաններ, ազօրիքներ, խաղախորդարաններ, բազմաթիւ սլոցարաններ, եւայն :

Վաճառականական տեսակէտով ալ Իզմիտի գաւառին ունեցած կարեւորութիւնը նշանակութեան արժանի է : Ամէն ամիս Իզմիտի ծովածոցը կ'այցելեն բազ-

մաթիւ չողենաւեր, որոնք Անատոլուի ներսերէն երկաթուղիսվ եկած երկարործական բերքերը կը փոխադրին Եւրոպա կամ ուրիշ տեղեր :

Վարչական բաժանումներ եւ զիսաւոր հաղաքներ. — Իզմիտի գաւառը իր ասանձին կառավարիչն ունենալով հանգերձ կը պատկանի Կ. Պոլսոյ կուսակալութեան և կախում ունի ուղղակի Ներքին Գործոց նախարարութեանէն :

Գլխաւոր քաղաքներն են՝

Իզմիտ (15000 բն.) համառուն ծոցին խորը՝ գեղեցիկ դիրքի մը մէջ ճարտարարուեսական քաղաք եւ բանուկ նաւահանգիստ : Անի նաւարան : Շրջականները կան մէկ քանի պետական գործարաններ . ինչպէս՝ Հերէքէի մէջ՝ մետաքսեղէնի գործարան, Արուլանպէկի մէջ՝ չուխայի գործարան, բանակին յատուկ, Քիլէզի մէջ՝ նոյնողէս բանակին յատուկ ֆէսի գործարան մը . Տէրին ձէի մէջ՝ Անատոլուի երկաթուղիներու ընկերութեան շինութեանց մթերանոցը, եւայն :

Ասոնց մէ զատ Իզմիտի մէջ կան բազմաթիւ մետաքսի մանարաններ, չողեշարժ ազօրիքներ եւայն :

Արմած (1500) ուր կը գտնուին Հայոց Զարխափան :

Ս. Աստուածածնի վանքը եւ Կ. Պոլսոյ Պատր. Դավիթի անգլ. Արմաչէն երեք քառորդ ժամուան հեռաւորութեամբ

կը գտնուի Խասիալ փոքր զիւղը :

Պարտիզակ կամ Պաղչենիք (8000) Իզմիտի ծոցին հարաւակողմը, Կարտադրէ խօզակ, ծիսախոս, զինի, մրգեղէն :

Արալանպէկ (2800) Պաղչէճիքէն Զ ժամուան հեռաւորութեամբ նոյնողէս զեղեցիկ զիւղ մըն է : Անի պետական չուխայի գործարան :

Պաղչէճիքի մօտ կը գտնուին նաեւ Տէօնիկէլ 50 տունով փոքրիկ զիւղ մը, որ Կարտադրէ խօզակ եւ ծխա-

Հասու . եւ Օվաճը՛ (2000) որուն զլիաւոր բերքերն են
ծխախոս եւ խօզակ :


Ատաբազար (25,000 բն.) Սաքարիայի մօս՝ ընդարձակ զաշտի մը վրայ վաճառաշահ քաղաք : Ունի Բիշ զանդեան ու Ճենովական հնութիւններ , որոնց մէջ համբաւոր է Յուստինիանոսի կամուրջը որ այսօր Պէջ-Քէօփրիւ կը կոչուի :

Գլխաւոր արտածութիւններն են արմափք, կտաւատ, եպիպտացորեն , կորեակ , խօզակ , ծխախոս , մեղրամոմ , կոնսիֆի թել (լիֆ) , ընկոյզ , գետնախնձոր (1 միլիոն օխա), սոխ , սխատ , հաւկիթ (տարեկան 30 միլիոն հատ) , վառեակ եւայլն : Առանցմէ զատ Ատաբազար ունի մեծ արտածութիւն չինութեան փայտի , թարմ պտուղի եւ մանաւանդ խաղողի :

Իզմիափ գտաւառին մէջ երկրորդական գիւղեր ու գիւղաքաղաքներ են նաև Կեյլե , Օրբաֆյոյ , Ս. Բիխատ , Սապանձա , Քարամուսալ՝ որոնք չերամաքուծական կեղրաններ են եւ Եալօվա՝ (Պատ. 5) համբաւուր իր հանքային ջուրերով :

2. ԽԵՒՑԱՎԵՆՏԻԿԵԱՐԻ ՆԱՀԱՆԳ.

Պըւսայի կամ Խիւտավենտիկեարի Կուսակալութիւնը կը պարունակէ հին ատեն Միւսիա , Բիւթանիա եւ Փոխւղիա անուններով ճանչցուած երկիրներուն մեծագոյն մասը : Աանմաններն են հիւսիսէն Իզմիափ սահմագն ու Մարմարայի ծովը , արեւելքէն՝ Էնկիւրիւի եւ Քոնեայի կուսակալութիւնները , հարաւէն Այտղնի հասհանգը , եւ արեւմուտաքէն՝ Արշիպեղագոսն ու Պիղայի գաւառը :



Պատ. 5 — Խալօվայի ջուրիստիկայի գրքի էջը

Կլիման ընդհանրապէս բարեխառն է և տուղջ .
Երկիրը բարերէր է ու բաւական լաւ մշակուած : Դլխաւոր
երկրագործական բերքերն են արմափ, եղիպատացորեն,
իւղալից հունաեր, աֆրօն, ներկի նիւթեր, ընդեղէն .
թթենի, որթասունկ և ուրիշ պազատու ծառեր : Հողը
հարուստ է հանքային նիւթերով, որոնք սակայն չեն շա-
հագործուիր պէտք եղածին պէս : Պալըքէսէրի մօտ՝
Պալիայի հանքերէն կը հանուին հանքածուին և արծա-
թախառն կապար : Երթօղուուի և Քէօթահնայի գա-
ւառներն ունին Քրոմի հանքեր, բայց ամէնէն աւելի
իշխառակութեան արժանի են էսլիշէնիրի : Հրջակաները
գանուած ծովափրիստի (լիւլէ թաշը) հանքերը, որոնք
աշխարհի ամէնէն հարուստներն են : Հանքային ջուրեր
ու ջերմուկներ բազմաթիւ են բավանդակ նահանդին մէջ
և շահեր՝ մանաւանդ Պրուսայի շրջակայինները՝ համ-
բաւաւոր են հին ատեններէ ի վեր :

Ճարտարագործութիւնը բաւական զարդացած է ,
և տակաւ յատաջիմելու շաւզին մէջ մտած : Զեռա-
գործական արտադրութեանց մէջ նշանաւոր են մե-
ասինելիներն և զիխունական զորգերը : Յիշուելու ար-
ժանի են նաև զինեկործութիւնը, ձիթահանութիւնը ,
ազօրեպահնութիւնն ու աղիւսաշինութիւնը :

Շերամարուծութիւնը ընդհանրացած է նահանդին
ամէն մասերուն մէջ, և մետաքսի մանարաններ բազ-
մաթիւ են կարեւոր կեղրոններու մէջ :

Վաճառականութիւնը՝ հաղորդակցութեան կանո-
նաւոր միջոցներու շնորհիւ՝ բաւական բանուկ է :

Աւաշական բաժանումներ եւ զիսաւոր բայզներ .—
Խիւսավէնափեարի կուսակալութիւնը կը պարունակէ
չի՞ւզ զաւառներ . Պրուսա, Քէօթահնա, Ս.ֆիօն-Բարա-
հիսար, Երթօղուու և Քարասի :

Գլխաւոր քաղաքներն են՝

Ա. — Պրուսայի զաւասին մէջ .

Պրուսա (90,000) Ողիմողոս լերան ստորոտը զմայ-
ւելի զիրքի մը մէջ՝ կուսակալանիստ քաղաք, և
նախկին մայրաքաղաք Օտմ. Կայորութեան (1326էն
1666) :

Պրուսայի շրջականները կը գտնուին բազմաթիւ ջեր-
մուկներ (ծմբային ու երկաթային) որոնք հին ժամա-
նակներէ ի վեր համբաւաւոր են :

Պրուսա երկաթուղիով մը կաղուած է Մոտանիայի
հետ : Բաղմաթիւ գեղեցիկ խճուղիներ շինուած են զա-
ւասին մէջ, որոնք Պրուսան հաղորդակցութեան մէջ
կը զնեն ներքին քաղաքներուն, ինչպէս նաև Մար-
մարայի ծովեղերեւայ քաղաքներուն հետ :

Պրուսա ունի բազմաթիւ մանարաններ Ֆրանսա-
կան ոնով շինուած, և մեծ վաճառականութիւն մե-
տաքսի ու խօզակի :

Կելիկիլ (5000) Փոքրիկ քաղաք և ապահով նա-
շանանդիստ համահուն ծոցին խորը : Դլխաւոր բերքերն
են ձիթապտուղի, և խօզակի :

Մըլալը (8800) Շերամարուծական կեղրան : Ունի
ընդգարձակ այլիններ ու մրգառաններ :

Մուտանիա (5000) Կէմէյիկի ծոցին մէջ՝ նաւահան-
գիստ, որ Պրուսայի հետ կապուած է երկաթուղիով :
Ունի մեծ արտադրութիւն ձիթապտուղի, և բազմա-
թիւ իւղարաններ : Կարեւոր է նոյնպէս խօզակի տու-
առըրը :

Բ. — Քէօթահնեայի զաւասին մէջ .

Քէօթահնեա (28000) Բորսաք զետակին վրայ վա-
ճառաշահ քաղաք . համբաւաւոր են ըրուտեղիններն ու
Զմիւռնական զորքերը :

Գլխաւոր արտածութիւններն են արմաֆիք, ընափի
ափիօն, թիֆթիկ, մորթ, Քրօմի և ծարիրի հանածոյ :

Էսկիզներ (25000) Բուրսաք գետակին վրայ գեղեցիկ քաղաք: Էսկիզէնիրի մօտ կը զանուխն ծովափրփուրի հարուստ հանքեր որ Տէրութեան կը պատկանին եւ որոնցմէ տարին 5-6 հազար մնառուկ կ'արտածուի Եւրոպա, մասնաւորապէս Աւստրիա :

Էսկիզէնիրի ուրիշ գլխաւոր արտածութիւններն են արմաֆիք, իւղալից հունակեր, ափիօն, ծխախոս, բուրդ, մորթ, թիֆթիկ որ էնկիւրիինը կը գերազանցէ :

Էսկիզէնիրէն 7 ժամ հեռու Քէօթահեայի ճամբառն վրայ կը գտնուեն Ըլըձայի համբաւաւոր ջերմուկները :

Ուշագ (18,000) վաճառաշահ քաղաք եւ ճարտարագործական կեղրոն : Անուանի են գորգերը: Գլխաւոր բերքերն են արմաֆիք, ափիօն և խողկաղին :

Դ. — Ա.գիօն-Քարահիսարի գաւառին մէջ .


Ա.գիօն-Քարահիսար (40,000) Բարեբեր զաշտի մը մէջ ծաղկած եւ վաճառաշահ քաղաք: Ունի մեծ արտադրութիւն Ա.գիօնի, որ արտածութեան կարեւոր նիւթմն է: Կ'արտածէ նաեւ բուրդ, արմաֆիք, գմնիկի հատիկ, մեղրամոմ, հանքային ջուրեր, ներկի նիւթեր, և այլն: Ճարտարարուենան ալ բաւական յառաջացած է այս քաղաքին մէջ, ուր կան գորգի և թաղիի բաղմաթիւ տարաղագործարաններ :

Պօլիասին (10,000) պղտիկ ծաղկած քաղաք, ունի բրուտուղէնի գործարաններ, և գորգի արտեստանոցներ :

Սանսրեմ (10,000) ունի երկաթային ջերմուկներ ու հանքային ջուրեր, և բանուկ վաճառականութիւն բուրդի, ափիօնի ու արմաֆիքի :

Դ. — Էրօղրուկի գաւառին մէջ .

Պիլէնի (10,000) Բարասէրէի վրայ, չերամաբու-



ծական կեղրոն : Ունի բազմաթիւ մանարաններ եւ բանուկ վաճառականութիւն խօզակի , աֆիօնի , մատուտակի , եւայլն :

Քեօփիլ (7000) նոյնպէս շերամաբուծական կեղրոն :
Սեօյիւ (7000) ունի կարեւոր առուտուր շարոցի :
Լեթէ (2000) բերքն է խօզակ եւ աֆիօն :

Կեօլազար (10000) ունի մեսաքա , աֆիօն :
Եյնէկէօլ (10,000) կարեւոր քաղաք Պրուսայէն 45
քլմ . հեռաւորութեամբ : Շրջականները կան կաղնիի հարուստ անտառներ : Տիւմանը նահնյէին մէջ կը գտնուին Քրօմի հարուստ հանքեր , որոնք սակայն մեծ գժուարութեամբ կը շահագործուին հաղորդակցութեան միջոցներու անբաւականութեան պատճառաւ :

Եյնէկէօլ համբաւաւոր է Զիրլի կոչուած հանքային ջուրովք , որմէ տարին 12000 լիոր կ'արտածուի Եւրոպա եւ Եղիպատու :

Իզնիք (1200) հին Նիկիա , ուր եղաւ 318 հայրապեաններու Տիւղերական ժողովը Քրիստոսի 325 թուականին :

Ե. — Քարափի գաւառին մէջ .

Պալլենէւ (20,000) բարերեր գաշտի մը մէջ վաճառաշահ քաղաք , որ մեծապէս վեասուեցաւ 1897ի սոսկալի երկարաժէն : Մօտերը կան ծարիրի եւ պօրասիդի հանքեր : Կ'արտածէ զլիսաւորաբար արմտիք , խոզկաղին , աֆիօն , կոճիթ , կտաւատ , ծիստիստ , այծի եւ ոչխարի մորթ , մրգեղին , սեխ եւ ձմերուկ :

Այլալլիք (10,000) Էտրէմիափի ծոցին խորը բաւական բանուկ նաւահանգիստ : Ունի կարեւոր աղանանքեր Սարմուտաքի եւ Պէլլիքի մէջ . նոյնպէս կրանիթի եւ երկանաքարի հսնքեր՝ Սարմուտաքի մօտ :

Այլալլիք ունի բազմաթիւ ձիթաբաններ , որոնց տարեկան ձէթի արտադրութիւնը կը հաշուուի և միլիոն

քիլօ . նոյնպէս զինիի , օղիի ու քօնեաքի գործարաններ , խաղախորդարաններ , աղօրիքներ , օճառի գործարաններ , եւայլն :

Գլխաւոր արտածութիւններն են ձէթ , օճառ , զինի եւ օղի , որոնք կը զրկուին Կ. Պոլիս , Սելանիկ եւ Պուլ-Կարիա :

Էտրէմիք (7000) համանուն ծոցին խորը գեղատեսիլ քաղաք : Կ'արտածէ մեծ քանակութեամբ ձիթապտուղեւ ձէթ , օճառ , մեղր , մեղրամոմ , չամիչ , թուզ , շինութեան փայտ , եւայլն :

Էտրէմ (6500) Մարմարայի մէջ Քափուտաղ թերակղզին վրայ փոքր նաւահանգիստ : Ունի կարեւոր առուտուր զինիի , օղիի , քօնեաքի , ձէթի , ձիթապտուղի , թարմ պատուղներու եւ աղած ձուկի :

Պանտրիմա (10,000) Մարմարայի վրայ փոքր նաւահանգիստ որ արմտիքի , աֆիօնի , խոզկաղինի , կտաւատի , խօզակի , թարմ եւ աղած ձուկի ու խավեարի բաւական կարեւոր առուտուր ունի : Պանտրիմայի մօտ կը գտնուին Սուլթան Զայլիրի պօրասիզի հանքերը :

Յ. ՊԻՂԱՅԻ ԴԱՒԱԾՈՒ

Պիղայի կամ Տարտաննելի Միւթէսարրը փութիւնը որ Խիւտավէնտիկեարի նահանգին արեւմտեան կողմը փոքր գաւառ մըն է , կախում ունի ուղղակի ներքին Գործոց նախարարութենէն : Կը պարունակէ իրը 120,000 բնակիչ :

Հողին գլխաւոր արտադրութիւններն են՝ արմտիք , եղիպտացորեն , ընդեղէններ , կոճիթ , խոզկաղին , ծխախոտ ու մրգեղին :

Վարչական բաժանումներ եւ զիտաւոր բաղաբներ. — Պիղայի գաւառաէն կախում ունին հինգ գաւառակներ՝ Տարտանէլ, Էղինէ, Պիղա, Այվաճըք եւ Լափսէքի:

Տարտանէլ կամ Զանագ-Բալի (12,000) համանուն նեղուցին վրայ՝ կառավարչանիստ քաղաք եւ զինուուրական առաջին կարգի նաւահանգիստ։ Համբաւաւոր են բրուտեղինները։

Պիղա (10,000) անուանի է տօնավաճառը։

Լափսակի՝ փոքր նաւահանգիստ, ունի սեխ եւ զինի։

4. ԱՅՏԸՆԻ ՆԱՀԱՆԳ.

Այտինի նահանգը որ կը պարունակէ նախկին Լիւդիան, Կարիան, Փոփոշիոյ հարաւային մասն ու Յունիական եւ Կորիական գտղթականութիւնները, կը տարածուի Խիւտավլէնտիկեարի կուսակալութեան հարաւակողմը՝ Սրչիպեզագոսի եւ մասամբ Միջերկրականի վրայ։

Կիւրման ընդհանրապէս սոսող է եւ ախորժելի, թէեւ ամառները շտա տաք կ'ընէ։ Հողը բարերեր է եւ լւա մշակուած։ Երկրագործութիւնը բարզաւած վիճակ մը ունի։ Գլխաւոր բերքերն են արմագք, չամիչ, թուզ, նարինջ, կիտրոն եւ ուրիշ պատվներ, ափիօն, ձէթ, ծխախոտ, մատուտակ, բամպակ, սուսամ, խոզկաղին եւ ուրիշ ներկի նիւթեր, զինի, մասակիք եւայլն։

Անտառները կը ծածկն ընդարձակ տարածութիւնուներ։ Բնատանի անսառունները բարձմաթիւ են նահանգին ամէն մասերուն մէջ։

Հողը կը պարունակէ շատ տեսակ հանգեր, մասս

նաւորագէս քրօմ, ծարիր, ծծումք։ Բազմաթիւ են նաեւ հանգային ջուրերն ու ջերմուկները։ Ծովեղերեայ մասերուն մէջ կան սքանչելի աղահանգեր։

Ճարտարագործական արտադրութեանց մէջ անուանի են գորգերը, ինչպէս նաեւ բամպակեղին ու մետաքսեղին կաւաները։ Ազօրեւապանութիւնն ու խաղախորդութիւնը ընդհանրացած են ամէն կողմ։

Վաճառականութիւնը որ զիտաւորաբար Զմիւռնիայ նաւահանգիստին մէջ կը կերպուանայ՝ շատ բանուկ է։ Նահանգին զիտաւոր արտածութիւններն են երկրագործական արտադրութիւններ, նախնական նիւթեր ու սքանչելի գորգեր։ Խոկ ներածութիւններն են մնացական բերքեր, գաղթաբերք, հանգերձեղին ու գանազան տարագագործական արտադրութիւններ, մետաղներ եւայլն։

Վարչական բաժանումներ եւ զիտաւոր բաղաբներ. — Սալնի կուսակալութիւնը կը բաժնուի հինգ գաւառներու (սանձագ)։

1. Իզմիր, 2. Սարուխան, 3. Այտըն, 4. Տէնիզլի, 5. Մէնթէջեկ։

Բնակչութեան թիւը կը հաշուուի 1,360,000ի չափ։

Գլխաւոր քաղաքներն են՝

Ա. Իզմիրի գաւառին մէջ։

Զմիւռնիա կամ Իզմիր (250,000 բն.) կուսակալանիստ քաղաք եւ կ. Պոլսէն յետոյ Կայսրութեան մնացոյն նաւահանգիստաք։

Քաղաքին շէնքերուն մէջ իրենց շքեղութեամբը նշանաւոր են Հայոց Ս. Ստեփանոս եկեղեցին, Լատինաց Մայր եկեղեցին, Տաճկաց Հիսորի եւ Քէսթանէ պաղարի մզկիթները, Յունաց Ս. յիշ-Ֆօթինի եկեղեցւոյն զանգակատունը եւայլն։

Պերկամա (20,000) վաճառաշահ քաղաք՝ անուանի իր հնութիւններով :

Քարանա-Ֆօչա (հին Փոկիս) (8000) ծովեղերեայ փոքր քաղաք : Ունի մեծ առուատուր ընտիր սեւ չամիչի եւ գլխաւորաբար աղի :

Եկեղի-Ֆօչա կամ Նոր Փոկիս (6000) Հերմէսի ծոցին մէջ, կ'արտածէ մեծ քանակութեամբ չամիչ : Անուանի է աղանաքը, որուն տարեկան արտադրութիւնն է 40 միլիոն օրիս :

Մենեկեն (10,000) վաճառաշահ քաղաք :

Վուրլա (35,000) երկրագործական քաղաք՝ Զմիւռնիոյ ծոցին մօտ : Անուանի է չամիչը (բազաքը) :

Չեսմէ (16,000) Քիոս կղզին գիմացը բաւական բանուկ նաւահանգիստ է : Ունի հանքային ջուրեր :

Մբալս-Նօվլա (Քուշ-Ստասը) կամ Նոր-Եփեսոս (7000) համանուն ծոցին վրայ բանուկ նաւահանգիստ, անուանի է չամիչը :

Այսուլուք (3000) հին Եփեսոսի տւերակներուն մօտ էօսկիմք (30,000) Պօղ-Տաղի ստորոտը՝ բարեբեր գաշտի մը մէջ վաճառաշահ քաղաք : Մօտերը կը գլունուին ծարիրի եւ սնդիկի հանքեր : Էօտէմիչ կ'արտադրէ ծխախոտ (իր հոտին համար համբաւաւոր), արմտիք, խոզկաղին, կանեփ, սուսամ, ձէթ, չամիչ, թուզ, սեխ եւ ձմերուկ :

Պալինսր (10,000) վաճառաշահ քաղաք՝ գեղեցիկ դիրքի մը մէջ :

Բ. Սարուխանի գաւառին մէջ՝

Մանիսա (35,000) Կէտիզ գետին վրայ բարեբեր գաշտի մը մէջ վաճառաշահ եւ ծաղկած քաղաք : Ունի բամպակեղէն ձեռագործներ : Բերքերն են արմտիք, բամպակ, ծխախոտ, խոզկաղին, սուսամ, չամիչ :

Քըրք Ալուն (20,000) վաճառաշահ քաղաք : Անուանի է սեխը :

Անիխաւ (15,000) Լու մէտկուած դաշտի մը մէջ վաճառաշահ քաղաք :

Քասապա (25,000) վաճառաշահ քաղաք, բերքերն են ցորեն, բամպակ, ծխախոտ, չամիչ, սեխ եւ պատուական ձմերուկ :

Կեօրշէ (5000) նշանաւոր է իր սքանչելի գորգերով :

Քուլա (6000) երկրագործական կեղրոն : Անուանի են նոյնպէս գորգերը :

Ալաւէիր (25,000) ճարտարագործական եւ առեւտրական քաղաք, Պօղ-Տաղ լերան սասրուար :

Գ. Այցընի գաւառին մէջ՝

Այսըն կամ Կիւզէկ Հիսաւ (35,000) Մէանարի մէկ գետակցին վրայ գեղեցիկ քաղաք՝ բարեբեր եւ լաւ մէտկուած դաշտի մը մէջ : Մորթի, բամպակի, խոզկաղինի, արմտիքի, թուզի եւ ձէթի բանուկ վաճառականութիւն ունի :

Սէօրիէ կամ Սօհիս (12,000) վաճառաշահ քաղաք : Նազիլի (20,000) Մէանարի վրայ գեղեցիկ քաղաք եւ առեւտրական ու երկրագործական կեղրոն :

Դ. Տէնիզի գաւառին մէջ՝

Տէնիզի (15,000) Լաւողիկէ քաղքին տւերակներուն մօտ գեղեցիկ քաղաք է բարեբեր դաշտի մը եղերքը : Կ'արտադրէ ընտիր ցորեն եւ ուրիշ արմտիք, բամպակ, խոզակ, սուրդ, չամիչ, թուզ եւայլն :

Տէմիրի (5000) ունի սքանչելի գորգեր :

Ե. Մէնրէշէկի գաւառին մէջ՝

Մուլլա (10,000) ունի հանքային ջուրեր :

Մաերի (5000) կուսակալութեան հարաւային կողմը՝ Միջերկրականի վրայ գեղեցիկ նաւահանգիստ :

5. ՕՍՄԱՆԵԱՆ ԱՐՃԻՊԵՂԱԳՈՍ

Արժիպեղագոսի կուսակալութիւնը (Ճեզայիրլ Պահրը Մէֆիտ վիլայէրի) կը պարունակէ եգէական ծովուն մէջ սփռուած մեծ ու փոքր Օսմանեան կղզիները, բաց ի Թասուէն, Սամօթրակէէն՝ որ էտիրնէի կուսակալութեան մասը կը կազմէ եւ Սամօւէն՝ որ ինքնօրէն իշխանութիւն մը կը ձեւայնէ :

Կղզիներուն կղիման ընդհանրապէս մեղմ, բարեխառն եւ առողջ է, Բազմաթիւ փոքր կղզիներ անբեր ժայռեր են սոսկ, բայց մեծերուն մէջ (Քիսս, Լեմսոս, Միտլիի և Հոոզոս) կը գտնուին շատ արգաւանդ մասեր, ուր կ'աճին արմատիք, ընդեղէններ, ձիթենի եւ մրգեղէններ (նարինչ, լեմոն, թուզ, որթատունկ եւն.) :

Ի բարոսի եւ Քիսսի մէջ կը շահագործուի ծարիրը. Կղզիներէն շատեր ալ ունին մարմարիսնի գեղեցիկ հանքեր :

Բնակիչներուն զլսաւոր զբաղումներէն մին է սպոնտի սրորդութիւնը :

Կղզիները իրենց աշխարհագրական նպաստաւոր գիրքն չնորհիւ բաւական կարեւոր գեր մը կը կատարեն առև արական սեսակէտով : Նաւարկութիւնը առաջին եւ կարեւորագոյն զբաղումներէն մին է բոլոր բնակիչներուն : Կղզիներուն բազմաթիւ նաւահանգիստները անհամար առագաստանաւեր կը հիւրընկալեն :

Արտածման կարեւոր ասարկաներն են սպոնտ, աղիներ եւ երկրագործական բերքեր, ոգելից ըմպելիք, մետաքս, եւ այլն :

Վարչական բաժանումներ եւ զլսաւոր բաղանքներ. — Սրբակեղագոսի կուսակալութիւնը կը բաժնուի հետեւ



Քոնիա (Տես էջ 60)

եալ 4 գաւառներուն. 1. Հոոզոս, 2. Քիսս, 3. Միտլիի, 4. Լեմսոս :

1. Հոոզոսի գաւառը կը պարունակէ հետեւեալ կղզիները .

Ա. — Հոոզոս, Արշիպեղագոսի գեղեցկագոյն կղզիներէն մին՝ ունի գուարձալի կղիմայ, կ'արտագրէ արմքատիք, եւ մանաւանդ մրգեղէն, զինի եւ շինութեան փայտ :

Գլխաւոր քաղաքն է Հոոզոս՝ կղզին հիւսիսային կողմը, ապահով եւ բանուկ նուռահանգիստ :

Բ. — Միմի, Հոոզոսի հիւսիս-արեւմաեան կողմը փոքր կղզի, որ նշանաւոր է սպոնտի սրարգութեամբ :

Գ. — Փարբարու՝ (12,000 բարեկիչներով) Հռոդոսի հարաւային արեւմտեան կողմը՝ երկար, նեղ ու լեռնաս կղզի :

2. Քիոսի գաւառոը կը պարունակէ հետեւեալ կղզիները.

Ա. — Քիոս (70,000 բն.) , Զէշմէ թերակղզին գիւմացը, լեռնային բայց արդաւանդ ու գեղեցիկ կղզի : Քիսաւոր քաղաքն է Քիոս՝ արեւելեան ծովեղբլին վրաց վաճանաշահ նոււահանգիստ, որ կ'արտածէ ամէն տեսակ պատուղ, մետաքս, օղի, ինչպէս նաև բանջարեցն : Ունի բամպակէ ու մետաքսէ ձեռագործներ . Քիոս Սրբիպեղագոսի ծովային մեծագոյն կեղրոնն է : Նաւային շինութեանց կարեւոր ատաղձարաններ ունի :

Բ. — Բարա՛ Քիոսի արեւելեան կողմը փոքր կղզի :

Գ. — Եիֆարիս՝ (15,000 բն.) Քիոսի հարաւային կողմը :

Դ. — Լեռու լեռնային կղզի . ունի մարմարինի գեղեցիկ հանքեր :

Ե. — Պատմու (12,000) երբեմն նշանաւոր ու հարուստ կղզի : Այս կղզիին քարայրներէն մէկուն մէջ է որ Յովհաննէս Աւետարանիչ զրած է Յայանութեան գիրքը :

Զ. — Քաղիմնու՝ բարերեր կղզի , ունի սպունգի կարեւոր վաճառականութիւն :

Է. — Թօս (Խարանիկօյ) (20,000 բն.) գեղեցիկ ծովածոցի մը բերանը, ունի բարերեր եւ մշակուած գաշտեր, կ'արտադրէ մեծ քանակութեամբ խաղող, որուն ամենամեծ մասը Աղեքսանողիս կը զրկուի :

Յ. Միտիլիի գաւառոը կը պարունակէ հետեւեալ կղզիները .

Ա. — Միտիլի (110,000) Սրբիպեղագոսի ամէնէն գեղեցիկ ու կարեւոր կղզիներէն մին . ունի բարերեր

Հովիաներ, որոնք կ'արտադրեն ցորեն, գարի, ձիթապտուղ, խաղող, թուզ, խոզկաղին, նարինջ, լեմոնեւայլն :

Գլխաւոր քաղաքն է Միտիլի (15,000) կարեւոր նաւահանգիստ արեւելեան ծովեղբլին վրայ . նշանաւոր է ծենովական հին դղեակը : Զէթի եւ օճառի մեծ արտածութիւն ունի :

Մոլիվո (3000) կղզիին հիւսիսային կողմը գեղեցիկ նաւակայք, ունի նոյնպէս ձէթի մեծ արտադրութիւն : Քաղլոնի եւ Բօմարի նոյնպէս ձէթի եւ օճառի կարեւոր առուտուր ունին :

4. Լեմնոսի գաւառոը կը պարունակէ հետեւեալ կղզիները .

Ա. — Լեմնոս (25,000) լեռնային այլ բարերեր կղզի Տարտանելի գիմացը, կ'արտածէ գարի, կնճիթ եւ բուրդ :

Բ. — Իմպրու (10,000) լեռնային կղզի: Կ'արտադրէ ցորեն, գարի, ձիթապտուղ, կնճիթ, բուրդ, ածուխեւայլն :

Գ. — Թէնեսու (5000) Տրոլադայի եղերքը շատ բարերեր կղզի . ունի ընտիր գինի :

6. ՔՕՆԻՍՑԻ ՆԱՀԱՆԳ

Քօնիալի նահանգը կը տարածուի Խիւտավէնտիկեարի եւ Այտընի կուսակալութեանց արեւմտեան կողմը եւ կը պարունակէ Պամփիւլիա, Պիսիդիա եւ Լիկայոնիա պատմական բաժանումները :

Կլիման ցուրտ է հիւսիսային կողմերը, խակ դէպի հարաւ ընդհանրապէս բարեխառն :

Հողը թէեւ բարեբեր՝ բայց պէտք եղածին պէս մշակուած չէ։ Գլխաւոր երկրագործական արտադրութիւններն են արմտիք, եզիպտացործն, վուշ, բամակ, ծխախոտ, ափիօն, ձիթենի, թթենի, որթատունի եւ ուրիշ պաղատու ծառեր։

Արծաթախառն եւ սոկեխառն կապարի հանքեր կը շահագործուին Պուլկար-Տաղի մէջ, եւ մարմարինի հանքեր՝ Նիյտէի մօտ։ Մեծ քանակութեամբ աղ կը հանուի Քօչ Հիսարի աղոտ լիճէն։

Պուրատուրի եւ Ատալիայի գաւառները կը պարունակեն ընդարձակ ու գեղեցիկ անտառներ։

Ընտանի անասուններուն մէջ կը գանուին Ուղտ եւ ուրիշ ամէն տեսակ արջառներ, մամնաւորապէս «Գարաման» կոչուած ոչխարը։

Չեռագործներուն մէջ կրնան յիշուիլ գորգերն ու փփաթները։

Վաճառականութիւնը՝ Անատօլուի երկաթուղիին մինչեւ Քօնիա երկարելուն չնորհիւ սկսած է հետղնետէ ընդարձակուիլ։ Գլխաւոր արտածութիւններն են երկրագործական բերքեր, մատուտակ, խոզկաղին, ատաղձ, բուրդ, մորթ, գորդ, եւալին։

Վարչական բաժանումներ եւ զիսաւոր հաղաքներ. — Քօնիայի կուսակալութիւնը կը պարունակէ հինգ գաւառներ։

1. Քօնիա, 2. Նիյտէ, 3. Համիտ Ապարքա, 4. Պուրտուր, 5. Թէիք կամ Ատայիա։


Ամբողջ նահանգին բազմամարդութիւնը կը հաշուածի իբր 1,250,000 հոգի։

Գլխաւոր քաղաքներն են՝

Ա. — Քօնիայի գաւառին մէջ։

Քօնիա (50,000) բարեբեր դաշտի մը մէջ գեղեցիկ

եւ վաճառաշահ քաղաք, եւ հին մայրաքաղաք Սելձուղեանց։ Ունի գորգի եւ բամպակեղինի գործարաններ, Կ'արտածէ ցորեն, գարի, բուրդ, խաշխաշ, ափիօն, ճէհրի, մորթ, կտառատ, չամիչ, կնճիթ, այծու մորթ,



Սաֆրանապօւ (Տես էջ 69)

Թիֆլիսի եւ գորգեր։ Այս ամէն արտադրութիւնները կը զրկուին Մէրսին, Իզմիր, Կ. Պոլիս։

Քարաման (5000) վաճառաշահ քաղաք. ունի բամպակեղին գործուածներ։

Ալչեհիր (10,000) երկրագործական քաղաք Սուլթան Տաղի ստորապար։

Բ. — Նիյտէի գաւառին մէջ։
Նիյտէ (17,000) Ալա Տաղ լերան ստորապ, վաճա-

ուաշահ քաղաք : Բերքերն են արմտիք, ոչխար, բուրդ, այծու մորթ, ձէնրի, քիթրէ, եւայլն :

Գ. Համիսի գաւառին մէջ .

Սպարք (25000) էյիրափր լիճին հարաւ-արեւմտեան կողմը բարեբեր երկրի մը մէջ վաճառաշահ եւ գեղեցիկ քաղաք : Ունի Ալաճափ գործարաններ :

Դ. Պուրտուի գաւառին մէջ .

Պուրտու (10,000) ընդարձակ այգիներէ շրջապատուած բլուրի մը վրայ գեղեցիկ քաղաք : Ունի Ալաճափ գործարաններ, խաղախսրդարաններ ու ազօրիքներ : Կ'արտածէ արմտիք, աֆիոն, ներկի նիւթեր :

Ե. Թէհի գաւառին մէջ .

Ատալիա (20,000) համանուն ծոցին վրայ վաճառաշահ բայց աւազալից նաւահանողիստ : Մօտերը կան Քրօմի հանքեր :

7. Ա.Տ.Ա.Ն.Ա.Յ.Ի ՆԱ.ՀԱ.Ն.Գ

Ատանալի նահանգը կը սարածուի Անսատօլուի թերակղզին հարաւային կողմը՝ Միջերկրական ծովուն վրայ, Քօնեայի կուսակալութեան արեւմտեան կողմը :

Կլիման ընդհանրապէս բարեխառն է մանաւանդ հիւսիսային կողմը : Իսկ Միջերկրականի ծովեղերքը բաւական առաք կ'ընէ, եւ տեղ տեղ ալ վատառողջ լճակներով շրջապատուած է :

Նահանողին հարաւային եւ արեւելեան մասերը՝ մասնաւորապէս Սիհունի եւ Ճիհունի հավիաններ՝ շատ բարեբեր են, եւ կը հասցնեն արմտիք, բրինձ, եղիպատացորեն, բամպակ, աֆիոն, կնծիթ, որթատունկ,

նարինջ, լեմոն, եղջերենի, շաքարեղէգ, իւղալից հունատեր, բանջարական մշակութիւններ (սեխ, ձմերուկ) եւայլն :

Վաճառականութիւնը բանուեկ է : Կանոնաւոր եւ խնամուած ճամբաններ թէեւ սակաւաթիւ են, բայց Ասանա երկաթու վիոլ կապուած է իր հաւահանողիստին Մէրսինի հետ, ուր կերպուացած է նահանողին զրեթէ ամբողջ արտաքին վաճառականութիւնը :

Արտածութեան զիստաոր առարկաներն են արմտիք, բամպակ, իւղալից հունատեր, արջառ, բուրդ, մորթ եւայլն : Ներածութիւններն են տարազագործուած առարկաններ, անդական բերքեր և գալթաբերք :

Վարչական բաժանումներ եւ գլխաւոր հաղաքներ . — Ատանայի կուսակալութիւնը կը պարունակէ 4 գաւառներ :

1. Ատանա, 2. Իջիլ, 3. Քօզան, 4. Ճեղկիլի Պէրկիքը : Բավանդակ նահանողը կը պարունակէ իր 400,000 բնակիչ :

Գլխաւոր քաղաքներն են .

Ա. — Ատանայի գաւառին մէջ .

Ատանա (50,000 բն.) Սիհուն գետին վրայ բարեմեր դաշտի մը մէջ կուսակալանիստ քաղաք, 67 քիլոմէդր հեռաւորութեամբ Մէրսինէն՝ որ իր հաւահանողիստն է, եւ որուն հետ կապուած է երկաթուզիուլ : Ունի մեծ վաճառականութիւն Եւրոպայի, մասնաւորապէս Ֆուանսայի հետ : Գլխաւոր բերքերն են ցորեն, վարսակ, եղիպատացորեն, կորեակ, կտաւատ, կնծիթ, տղկազատի հունա, բամպակ (որուն տարեկան արտածութիւնը կը հաշուուի 80,000 հակ), բուրդ, արջառ, մորթ եւայլն :

Թարսուս (18,000) Քարասուի վրայ՝ Փոքր-Ասիոյ

հնագոյն քաղաքներէն մին, Կ'արտածէ մեծ քանակութեամբ լամպակ, կնձիթ, ցորեն, գարի, եղիպացորեն, զեղին մեղրամոմ, քիմրէ, մորթ, բուրդ, ներկի նիւթեր եւայն :

Մերսին (10,000) համանուն խորչին վրայ վաճառշահ եւ բանուկ նաւահանգիստ :

Այս Ազեքասնողրիոյ ծոցին արեւմտեան կողմը փոքր նաւահանգիստ, որ Խաչակրաթեանց ժամանակ մեծ կարևորութիւն ունէր :

Բ. — Եջիփի գաւառին մէջ .

Սելեֆե (2,500) Կօք-Սուփ վրայ բարերեր քաղաք:

Գ. — Քօմամի գաւառին մէջ .

Սիս (4000) աթոռ համանուն Կաթողիկոսութեան : Աւով վանք հարուստ թանգարանով : Շրջակաները կրգանութիւն Անարգագայի աւերակները :

Հանըն (12,000) Սիհուն գետի հեղեղատին մօտ բլորի մը վրայ : Աւով երկաթի հարուստ հանքեր :

Դ. — Ճեկիլլ Պերեմիքի գաւառին մէջ .

Բայսա (6000) Իսկէնտէրունի ծոցին արեւելեան կողմը՝ փոքր նաւահանգիստ մըն է Սյասի զիմացը :

Օսմանիյէ Աւով փայտի մեծ առևտուր :

8. ԷՆԿԻՒՐԻՒԹԻ ՆԱՀԱՆԳ

Էնկիւրիւթի Նահանգը որ կը պարունակէ հին Գաւզափան ու Կապաթովիկոյ մէկ մասը՝ կը տարածուի Անատոլի թերակղղին ճիշդ մէջտեղը՝ Քօնիայի եւ Աստանայի կուսակալութեանց հիւսիսային կողմը :

Կիման ընդհանրապէս բարեխառն է : Հողը բարերեր է եւ կը հացնէ արմափ, եղիպացորեն, անդգական ընդեղէններ, աֆիօն, գյնիկի հատիկ, կանեփ, կնձիթ, պաղաստ ծառեր, որթաստնկ եւն :

Պաճարաբուծութիւնը շատ կարեւոր տեղ մը կը դրաւէ : Անուանի են մահաւանող էնկիւրիւթ գանդրամազ այծերը :

Հողը կը պարունակէ ողնձի եւ արծաթախառն կապարի հանքեր (Տէնէք Մատէն), որոնք այսօր երեսի վրայ թողուած են : Նահանգին մէջ կան նաև բաղմաթիւ հանքային ջուրեր :

Աղուձակի հանքերը, աղոս լիճերն ու աղի աւազանները բաւական բանուկ շահագործութեան առարկայ եղած են :

Էնկիւրիւթի նահանգին ձարտարական արտադրութեանց մէջ նշանաւոր են Քիլիմ եւ Ճիճիմ կոչուած գորգերը (Քըրչէիր եւ Մուճուր), թիֆթիկ աօֆերը, շալերը, աղաները, ինչպէս նաև աղուխարը :

Վաճառականութիւնը նոյնպէս բաւական զարգացած է, Անատոլուք երկաթուղին չնորհիւ :

Նահանգին զիսաւոր արտածութիւններն են թիֆթիկ, բուրդ, աֆիօն, ցորեն, գարի, մեղր եւ զեղին մեղրամոմ, մորթ, ոչխար, ապուխտ, եւ մրգեղէն (ասնձ, խնձոր եւն):

Վարչական բաժանումներ եւ զիսաւոր հաղաքներ . Էնկիւրիւթի կուսակալութիւնը կը պարունակէ 5 զաւանուեր . 1. Էնկիւրիւ, 2. Քըրչէիր, 3. Եօզլաս, 4. Կեսրիա, 5. Զօրոււ:

Կուսակալութեան ամբողջ բնակիչներուն թիւն է մօտաւորապէս 950,000 :

Գլխաւոր քաղաքներն են :

Ա. — Էնկիւրիսի դաւասին մէջ՝

Էնկիւրիւ (40,000) Սաքարբա զետին Էնկիւրիւ Սու կոչուած ճիւղին վրայ հին եւ նշանաւոր քաղաք է և Անաւոլուի ճարտարագործական ու առեւարական կարեւոր կեդրոններէն մին : Ունի գեղեցիկ պարտէղներ ու այգիներ, արաեր ու անդասաններ . ինչպէս նաև երկրագործական ախարար-աղարակ մը :

Անաւոլուի երկաթմուղիի գծին զլուխն ըլլալով՝ Էնկիւրիւ շատ կարեւորութիւն ունի վաճառականագէտ Վ'արտածէ այծու համբաւաւոր մազ (թիֆթիկ), մեղս, մեղրամոմ, ներկի նիւթեր եւալն :

Էնկիւրիսի մէջ կան բազմաթիւ հին յիշաստակարաններ եւ աւերակներ, որոնց մէջ նշանաւոր է Օգոստասի տաճարը ուրիէ զանունցաւ նոյն կայսեր կտակին օրինակը :

Այաջ Էնկիւրիսի մօտ երկրագործական կեդրոնն ունի այծ եւ ոչխար :

Պէյպազար վաճառաշահ քաղաք . համբաւաւոր է թիֆթիկը : Կ'արտածէ նաև տանձ, խաղող, ուխու :

Նալլուխան՝ շերամբուծական կեդրոնն : Գլխաւոր բերքն է խաշխառ :

Սիւլի հիսար վաճառաշահ քաղաք է :

Բ. Եօղացի դաւասին մէջ .

Եօղլաս (15000) Եւրոպական տեսքով գեղեցիկ քաղաք է եւ միանդամայն բանակատեղի . բերքերն են արմափք, թիֆթիկ եւ մրգեղին :


Գ. Զօրումի դաւասին մէջ :

Զօրում (15000) վաճառաշահ քաղաք :

Դ. Քըր Շէհիրի դաւասին մէջ :

Քըր Շէհիր Գըղը-Բըմաք զետին մօտ, ունի արջառ : Անուանի են զարգերը :

Տէն-Մատէն ունի արծաթախան կապարի հանք:



Ե. Կեսարիոյ գաւառին մէջ՝

Կեսարիա (70000) Արգէսո կամ Էրձիաս լերան սատրոտը փառաւոր քաղաք, ևւ համակին մայրաքաղաք Կապադովիոյ : Երեւելի է Հայոց Ս. Կարապետի վանքը :

Կեսարիա Փոքր-Ասիս վաճառականութեան կեղրուներէն մին կը համարուի : Անուանի են գորգերը :

Թալս (3500), Էլերէլ (4000) նոյնպէս վաճառաշահ քաղաքներ են :

9. ԳԱՐԵՒՄՈՒԽՆԻԻ ՆԱՀԱՆԳ

Գասքէմունիի նահանգը կը տարածուի Սեւ ծովուեղերքը՝ էնկիւրիւի կոռաւկալութեան հիւսիսային կողմը ևւ կը պարունակէ հին Պափլագոնիան, ու Բիւթանիոյ մէկ մասը :

Կիման ընդհանրապէս բարեխաման է տամար, իսկ ձմեռը շատ խիստ ու ցուրտ :

Հողը բարեբեր է ևւ լաւ մշակուած : Կ'արասագրէ պատուական բանջարական մշակութիւններ, արմատք, եղիսացորեն, կորեակ, սննդական ընդեղիչներ (լուրիա, սոս, եւր.), բրինձ, աֆիօն, բամպակ, ծիսախոտ, զաղի խէժ (քիթրէ), դիսար, թթենի, մրգեղէն :

Կենդանիներուն մէջ կան եղ, ոչխար ևւ այծ՝ էնկիւրիի համբաւաւոր տեսակէն՝ սորոնք ամէնէն աւելի կը գանուին Գասքէմունիի, Քեանողրիի, Սաֆրանազօլուի ևւ Քօչիսարի մէջ :

Հողը կը պարունակէ շատ տեսակ հանքեր, ինչպէս մանկանէզ, երկաթ, նիքէլ ևւ արծաթախառն կապարորնք սակայն չեն շահագործուիր : Նահանգին արեւ-

մտեան մասին մէջ մահաւանդ (Պօլու) կան բաղմաթիւ հանքային ջուրեր :

Նահանգին մեծագոյն հարսաւոթիւնը կը կազմեն ընդգարձակ ու սքանչելի հանտառներ, որոնք կուսակալութեան $\frac{1}{3}$ մասը կը ծածկին :

Վաճառականութիւնը բանուկ է . կ'արտածէ շինութեան փայտ, արմատք ևւ ուրիշ երկրագործական բերքեր, արջառ, մորթ, բուրդ, թիֆթիկ, տպածոյ (եազմա), մանած, բամպակ, գմնիկի հատիկ, քիթրէ, սալէպ, ևւ զանազան մրգեղէն, դիսար, մեղրամում, ևւայն :

Վաշչական բաժանումներ եւ զիսաւոր հաղթեններ . — Գասքէմունիի կուսակալութիւնը կը պարունակէ և զաւաններ :

1. Գասքէմունի, 2. Պոլու, 3. Քեանողրի, 4. Սինոպ :

Կուսակալութեան բովանդակ բնակիչներուն թիւը կը հասնի 930,000ի :

Գլխաւոր քաղաքներն են՝

Ա. — Գասքէմունիի գուտառին մէջ՝

Գասքէմունի կամ Գասքամպօլ (23,000) Կէօք Բրմագ գետակին վրայ վաճառաշահ քաղաք ևւ ճարաւրագործական կեղրոն . 18 ժամուան հեռաւորութիւն ունի իր նաւահանգիստն եղող ինէպղուէն, ուրկէ կ'արտածէ թիֆթիկ, կանեփ, մանած, շինութեան փայտ, արմատք, մրգեղէն, ներկի նիւթեր, սալէպ, մորթ, ևւայն :

Ելնկալոլու (10,000) Սեւ ծովու վրայ բանուկ նաւահանգիստ է :

Սաթրանիպօլու (8000) վաճառաշահ քաղաք : Ո. նի բանուկ վաճառականութիւն կաչիկ, բուրդի, թիֆթիկ, խողակի, սալէպի ու քրքումի (սաֆրան) :

Բ. — Պօլուի գաւառին մէջ՝

Պօլու (12000) համանուն գետակին վրայ գեղեցիկ եւ վաճառաշահ քաղաք պաղարեր գաշտի մը մէջ : Ունի քրթումի սոսուատր :

Երեխի՝ նաւահանգիստ Սեւ ծովու վրայ . ունի հանգածութիւն :

Պարբե (8000) նոյնակէս Սեւ ծովու վրայ երկրորդական նաւահանգիստ :

Կերեփի (4000) վաճառաշահ քաղաք՝ գեղեցիկ մըրդաստաններու մէջտեղ . ունի թիֆթիկի վաճառականութիւն :

Գ. — Քեանդըրիի գաւառին մէջ՝

Քեանդըրը (18,000) բարերեր հովտի մը մէջտեղ ըլուրի մը վրայ վաճառաշահ քաղաք է : Ունի երկրագործական բերքեր եւ այծու մազ :

Քօչիստը (2500) Տէլլըրէկ գետակին վրայ . երկրագործական կեղրուն : Կ'արտաճէ թիֆթիկ :

Քարանա-լիւրան (2500) նոյնակէս երկրագործական քաղաք մըն է , եւ այծու մազի վաճառականութիւն ունի :

Դ. — Մինոպի նահանգին մէջ՝

Մինոպ (10000) Սեւ ծովու վրայ ամուր քաղաք եւ աղահով ու վաճառաշահ նաւահանգիստ :

Պօլսպատ (6000) Կէօք Ռըմագ գետակին մօտ կուտակալութեան ամէնէն արգաւանու գաշտին մէջ վաճառաշահ քաղաք է :

10. ՏՐԱՊԻԶՈՒՆԻ ՆԱՀԱՆԳԻ

Տրապիզոնի նախանգը կը տարածուի նոյնակէս Սեւ ծովու եղերքը՝ Գասթէմունիի կուսակալութեան արեւմտեան կողմը եւ կը պարունակէ Պօնասուը :

Կիման բարեխան է եւ առողջ՝ ներքին մասերուն մէջ մահաւանդ : Նահանգին արեւելեան մասին մէջ ձմեռընուազ սասափի Ե՞ արեւմտեան մասին հետ բաղդատմամբ : Թիւմարէթ, Թօլաթ եւ Պալքար յեւններուն վրայ մարգաւէս արօստանեցիներ զանուելուն ընդհանուակէս տնձրեւն առատ է այն տեղուանքը :

Երկրին հողը բարերեր է : Գլխաւոր բերքերն են արմափք, եղիպատացորեն, վուշ, կանեփ, ծխախոտ եւ ընդեղին (մասնաւորապէս լուրիա) : Նահանգին արեւելեան կողմնը եւ Սեւ ծովու եղերքը կան բազմաթիւ կաղնիի ծառասաններ ու ձիթենիի անասններ : Իիշգէի մէջ ու շրջականները յաջողապէս կ'աճին լևմոնն ու նարնջենին :

Կուսակալութեան արեւմտեան մասին մէջ կը զըտնուին խաղողի այգիներ եւ ամէն աեսակ պաղատու ծառերու . գեղեցիկ պարտէղներ :

Նահանգին զրեթէ Վ՝ մասը ծածկուած է բարձրաբերձ անասններով, որտոց մէջ կը զանուին չոճի, եղեւին, կաղնի, շագանակենի, հացի, լաստենի եւայլն :

Վաճառականութիւնը բանուել է :

Նահանգին զլխաւոր արտածութիւններն են արմտիք, եղիպատացորեն, կաւաւաս, ծխախոտ, լուրիա, կաղին, ընկոյզ, մեղրամու, տօսախ, շինութեան փայտ, արջաս, կարագ, մորթ, բուրգ եւայլն :

Ներածութիւններն են՝ տարագաղործուած արտադրութիւններ, մետաղներ, ալղակեղեն, բէթուլ եւայլն:

Վարչական բաժանումներ են զիսաւոր բաղաբներ. — Տրապիզոնի կուսակալութիւնը կը բաժնուի և գաւուներու:

1. Տրապիզոն, 2. Ճամիկ (Սամոն), 3. Ռիզե (Լազիաբան), 4. Կիւմիւշխանէ:

Գլխաւոր քաղաքներն են՝

Ա. — Տրապիզոնի գաւառին մէջ.

Տրապիզոն (55,000) Սեւ ծովու վրայ Օսմաննեան պետութեան կարեւորագոյն նաւահանգիստներէն մին, որ Պարսկաստանի Արևոմուաքի հետ վաճառականութեանն ալ իբր գուռ կը ծառայէ:

Կիրասոն (10,000) նոյնպէս նաւահանգիստ Սեւ ծովուն վրայ: Ասկէ է որ զրկեց Լուկուլոս կեռասի առաջին տունկերը որ Արևոմուաքի մէջ մշակուեցան:

Օրսու (6000), Թրիբոլի, Սիւրմինէ (4000) փոքր նաւահանգիստներ են նոյնպէս:

Բ. — Ճամիկի գաւառին մէջ.

Սամոն (25,000) բանուկ նաւահանգիստ՝ մանուշանդ Արվագի կուսակալութեան:


Զարշամպա (15,000) Եէշիլ Քրմաղի վրայ վաճառաշահ քաղաք բարեբեր գաշտի մը մէջ: Քերքերն են արմադիք եւ շինութեան փայտ:

Ունիէ (10000) վաճառաշահ նաւահանգիստ:

Պաֆրա (9000) վաճառաշահ քաղաք Քըղըլ-Քրմագի վրայ: Կ'արտածէ ընտիր ծխախոտ որ մեծ համբաւունի, եւ ուել խավեաբ:

Ալաջամ (2000) նահանգին արեւմտեան կողմը փոքր նաւահանգիստ է. ունի նոյնպէս ծխախոտ:

Գ. Լազիսանի գաւառին մէջ:
03, Իիզէ եւ Արինա, փոքր այլ գեղեցիկ նաւահանգիստներ են:



11. ԱՐՎԱՋԻ ՆԱՀԱՆԴ

Սրբազնի նահանգը կը տարածուի Տրամիլոնի կուսակալութեան հարաւային կողմը, Գասթիմունիի, Էնկիւրիւի, Ատանայի, Հալէպի, Խարբերդի և Երզրումի նահանգներուն մէջտեղ:


Երկիրը ընդհանրապէս լեռնային է : Հիւսիսային և արեւելեան լեռնագաշտերուն վրայ ձմեռը երկար և խիստ կ'ըլլայ, իսկ ամառը կարճ, բարեխսան և չոր : Հարաւային և արեւմտեան մասերուն մէջ ձմեռը բարեխսան է և ամառը շատ տաք : Տարւոյն չորս եղանակներուն մէջ հիւսիսային հովին է որ կը տիրէ : Սըլազի և Թօքազի շրջականներուն մէջ ամառը շատ տաք կ'ըլլայ և Սըլազի մէջ Օգոստոսին՝ հարաւային հովը չնշած ատեն երկամի ջերմութեան աստիճանը մինչեւ 50 կը բարձրանայ :

Անտառուի այս մասին լեռներն ընդհանրապէս պարաբ արօտանելիքներով ծածկուած են . իսկ դաշտագետները ընդունակ են մանաւանդ արմափիքի մշակումնեան :

Երկրագործական արտադրութիւններն են ցորեն, գարի, եղիսաբացորեն, կորեակ, ընդեղէններ, ծխախոտ, գեանախնձոր, կանեփ, զմունկի հատիկ, դազի խէժ, ափիօն, մրգեղէններ :

Հազը կը պարունակէ արծաթախսան կապարի հանքեր (Շատին Գարանխար) լինչողէս նաեւ մարմարի և Ալապաստրի հանքեր : Սըլազի նահանգին մէջ կան նաեւ աղբինձ, երկաթ և հանքածուի :

Ճարտարական արտադրութեանց մէջ նշանաւոր են գորգերն ու գուլպանները (Սըլազ և Զարա), բրդեղէն-



Անտառու դաշտագետների մասում

ները (իիւրին), զանակեղինները (Սրվաղ) և բամպակեղէն հիւսուածները (Սրվաղ, Շապին Գարահիսար, Ամասիա և Մարտունի) :

Ամասիայի մէջ կան բազմաթիւ աղօրիքներ : Թօքադունի պղնձի ձուլարան մը ու բազմաթիւ խաղախորդարաններ :

Նահանգին զիխաւոր արտածոթիւններն են՝ երկրագործական բերքեր, արշաս, զորգ, մեղք և մեղրամում, անդուս մետաղներ, եւլն :

Վարչական բաժանումներ եւ զիխաւոր հագաբեներ .— Սրվաղի կուսակալութիւնը կը բաժնուի և զաւաներու Սրվաղ, Շապին Գարահիսար, Թօֆադ, Ամասիա :

Գլխաւոր քաղաքներն են

Սրվաղ կամ Սիբասիա (45000 լմ.) Քըզրլ-Բամաղի մատ մեծ զաշտի մը մէջ զեղեցիկ քաղաք, և ճարտարագործական ու առևտորական կարեւոր կեզրան, ու Սեւ ծովու, Միջագետքի և Միջերկրականի միջեւ երթեւեկող կարուաններուն կեղրոնսատեղին :

Քըզրլ-Բամաք — Անասոլուի թերակղիին մեծազգին զետքը — կ'ոսոգէ Սրվաղն ու կ'արդասաւորէ անոր հողը :

Սրվաղի ձեռագործական արտադրութեանց մէջ կտրեւոր են բորդէ գուլպանները, Քիլիմ զորդերը, բամպակէ, բուրդէ ու մետաքսէ տեղական կտաները :

Արտածոթեան զիխաւոր նութերն են ընտիր արմատիք, բուրդ, մորթ, թիֆթիկ, տփիսն, ճէշրի, բուրդէ գուլպաններ, Կիւրիւնի շալեր ու բրդեղն կերպաններ և այլն :

Տիվրիկ (3000) կոսակալութեան արեւելեան կողմը բնողարձակ զաշտի մը մէջ զեղեցիկ և վաճառաշահ քաշքաք :

Կիւրին (1500) թօքամասու զետակին վրայ ճարտարարուենա, այլ վատասողջ քաղաք : Համբաւաւոր են շալերը :

Բ. — Շապին Գարահիսարի զաւաոին մէջ՝

Շապին Գարահիսար (15000) Իրիսի մէկ վոքր ճիւղին վրայ վաճառաշահ քաղաք . մօտերը կան արծաթախան կաղաքի ու պաղեղի հանքեր, որոնք կ'արտածուին Կիրասոնի ճամբով :

Գ. — Թօֆադի զաւաոին մէջ .

Թօֆադ կամ Եւդոլիա (26,000) Իրիսի մէկ զետակցին վրայ ճարտարարուենա ու զեղեցիկ քաղաք : Գըլիսաւոր արտադրութիւնն է ծխախոս : Ունի պղնձի ձուլարան ուր կը զաւեին Խարբերդի հանքերը . ունի նաև պղամիկ ձուլարան մըն ալ՝ պղնձէ անօթներու համար :

Զիլէ (15,000) բարեկեր զաշտի մը մէջ, անուանի է Կեսարի յաղթութեամբ : Հոս էր Անահիտի հոչակաւոր մեհեամբ :

Դ. — Ամասիայի զաւաոին մէջ .

Ամասիա (30,000) Իրիսի վրայ ճարտարարուենասական շատ հին քաղաք : Ունի մետաքսեղինի և զորգի զորդարաններ ու զեղեցիկ ջաղացքներ : Վարածէ զըլիսաւորաբար ցորեն, պամի, խօզակ, այծի մորթ, ինձոր, ասլոր և ուրիշ մրգեղններ, և այլն :

Մարտուան (18,000) Ամասիայի հիւսիսային կողմը՝ բարեկեր զաշտի մը մէջ : Ունի երկրագործական բերքեր կարեւոր են նաև Վեզիր Քէօփիրիւ, Օսմաններ և Լատիք, որ անուանի է իր զորդերով և զեղեցիկ անտառներով :

12. ԵՐԳՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳԻ

Երգումի նահանգը կը տարածուի Ասիական թուրքիայ հիւսիսային-արեւելքան ծայրը, իրեն սահման ու նենալով արեւելքին Կավկասիան և հիւսիսէն Տրապիզոնի կուսակալութիւնը :

Կլիման՝ տամառ տաք է, բայց կարճատեւ, խոկ ձմեռը շատ խիստ, ցուրտ ու երկարատեւ :

Երկրագործական արտադրութիւններն են գլխաւորաբար արմափք, պաղատու ծառեր, թթենի, սեխ և ձմեռեկ :

Սպերի գաւառին մէջ կը շահագործուին արծաթի հանքեր. Ճորտիսի և Մուրաստ Սուի հովիանները ունին բազմաթիւ հանքային ջուրեր, որոնց մէջ ամէնէն կարեւորներն են. Պայտութիւնի և Պայտաղիտի շրջականները գտնուածները :

Երկրին գլխաւոր արտածութիւններն են արմափք, մորթ, անդուս ու բանուած մետաղներ :

Վարչական բաժանումներ եւ գլխաւոր հավաքներ. — Երկրումի կուսակալութիւնը կը պարունակէ Յ գաւու :

1. Երգում, 2. Երգինկեան, 3. Պայտիս :

Կուսակալութեան գլխաւոր քաղաքներն են .

Ա. — Երգումի գաւառին մէջ՝

Երգում (40000), ծալսւն մակերեւոյթէն 5900 տաք բարձրութեամբ մեծ ու վաճառաշահ բերդաքաղաք և Կեղրոնասաւեղի Տրապիզոնի, Պայտումի, Սրվաղի, Տիւարպէքիրի, Պաղտատի, Դավթիսի, Թավրիժի և Թիֆլիսի վաճառիստնեան :

Շրջականները կը զանուին բաղմաթիւ ջերմուկներ, բնչողէս Բղմէ, Արծարի և Աղտարեր :

Գլխաւոր ձեռագուեսաններն են վորով, մահուսայ, հասիչ զէնքեր որ շատ յարգի են :

Երգում կ'արտածէ զիսաւորաբար բուրդ, բամզակ, կտաւատ, իւղալից հունաեր, այծու մազ, այծու, ոչխարի, կովի ու գոմեշի մորթ, զեղին մեղրամում, խէժ, ընափր ձիեր, եղ, ոչխար, զորգեր եւաղըն :

Թօրում համբաւաւոր բերդաքաղաք Միջին Գարու մէջ (Թօրթում Քաղէսի) :

Հասան-Քայի Երասիսի մէկ ձիւղին վրայ Բասեն գաւառին մէջ :

Պայտուրը (5000) Ճորտիսի վրայ հարտարաւուստ ու վաճառաշահ քաղաք : Անի հանքային ջուրեր :

Սպեր՝ Ճորտիսի վրայ : Անի արծաթի հանք :

Բ. — Երգինկեանի գաւառին մէջ :

Երգինկեան (20,000) ճարտարարաւուստ քաղաք զեղեցիկ գաչաղեանի մը մէջ, զար կ'ուսովէ Քարասու կամ Արեւմաեան Եփատա : Անուանի են խաղախորդարաններն ու կաթուացագործարանները : Անի նաեւ ուղամամթերք ու բամպակեզէնի գործարաններ :

Գ. — Պայտիսի գաւառին մէջ :

Պայտիս (5000) Ռուսիոյ սահմաննին վրայ կիսաւեր քաղաք : Հիւսիսային կողմը կը զանուի Սուլթան Պայտիսի օրով Արարատ լերան զիմացը ժայռի մը քով կառուցաւած ամրոց մը : Գլխաւոր բերքերն են արմափք, ձակնողեղ և կաղամբ : Արտածութիւններն են ցորեն, այծի, ոչխարի և եղան մորթ, բուրդ, աղած ձուկ :

Խւչ Քիլիսէ անուանի է իր մենաստանով, ուր կը ցուցաի նոյ Նահազեափ զերեզմանը :

13. ՎԱՆԱՅ ՆԱՀԱՆԴ.

Վանայ նահանգը կը տարածուի Պարսկաստանի արեւմտեան կողմը՝ հիւսիսէն Էրզրումի և հարաւէն Մուսուլի կուսակալութեանց մէջանեղ :

Կիման ընդհանրապէս առողջ է. հիւսիսային կողմիրը ցուրտ և խիստ, հարաւային մասերուն մէջ բարիխանն եւ անդ անդ ալ տաք :

Հողը շատ բարերեր է և առատօրէն կ'արտադրէ ցորեն, զարի, եղիսակացորեն, կարեակ, ընդեղէն, խաղող և ուրիշ մրգեղբներ, ծիամիստ, և այլն :

Արօտաեղիները կը մնու ցանեն բազմաթիւ արջառներ, մանաւանդ ընափր ձիեր :

Վարչական բաժանումներ եւ զիսաւոր հաղաքներ. — Վանայ կուսակալութիւնը կը բաժնուի 2 գաւառներու վան և Հեթիարի :

Կուսակալութեան զիսաւոր քաղաքներն են .

Ա. — Վանայ գաւառին մէջ՝

Վան (35,000) համանուն լճին արեւելեան կողմը կուսակալանիստ քաղաք : Առնի զեղեցիկ այգեստաններ, բրդեղէն զործուածներ : Նշանաւոր են հին բերդերն ու քարամայները : Վանայ մօսն է Վարադայ լեռը որուն վրայ կան 12 եկեղեցներ և Ս. Նշանի համբաւաւոր վանքը :

Վան ընդարձակ վաճառականութիւն ունի շրջակայ գաւառներուն հետ :

Վանայ ծովուն բոլորտիքը կը գտնուին բազմաթիւ զիւզեր ու աւաններ, սրոնց մէջ կարեւոր են

Արտամետ, Ոստան՝ ուր է նարեկայ վանքը :

Բ. — Հեթիարի գաւառին մէջ՝

Ճուլամերլ (4500) լեռնային դիրքի մը մէջ՝ գեղեցիկ քաղաք :

Ամասիկ (4000) Տիգրիսի վրայ, ունի նախնի գարերէ մնացած աւերակներ :

Պարսկաստանի սահմանագլխին մօս՝ Աղքակ գաւառին մէջ կը գանուեին Խօշապ՝ որ ունի հին ու շքեղ ամրոցներ, և Պաշտակ՝ որուն մօս կը գանուի Ս. Բարթուղիմէսոփ հոչակաւոր վանքը, և որ բանուկ վաճառականութիւն ունի Պարսկաստանի հետ :



Փողոց մը Սրբազի մ.ջ (Ցեւ էջ 76)

14. Պ Ի Թ Լ Ի Ս

Պիրլիսի նամանը կը տարածուի Երդրումի , Վա-

նայ եւ Տիարուէքիրի կուսակալութեանց մէջանդ :

Ունի ասոսդ բաց ցարա կլիմայ , երկարանեւ ու

սասափկ ձմեռներով :
Երկրագործական բերքերն են զլիսաւորաբար ցորեն ,

հաճար , գարի , կարեակ , ծխախոս , խաղող , քիմիք ,

գիսասր ու մրգեղին :

Հանքային ջորերը չատ բազմաթիւ են :

Սղերգի շրջականները կան հարուստ ազահանքեր :

Զեռագործներուն մէջ համբաւաւոր են բամպակե-

դէնները եւ բրդեղէնները , երենագործական առարկա-

ները , խեցեղէնները : Զեռագործական զլիսաւոր կեղ-

րոններն են Պիթիս , Սղերգ և Մուշ :

Վաճառականութիւնը չատ ետ մնացած է :

Վարչական բաժանումներ եւ զլիսաւոր հաղաքներ . —

Պիթիսի կուսակալութիւնը կը պարունակէ չորս զա-

ւառներ .

Պիթիս , Սղերգ , Մուշ , Կենա :

Կուսակալութիւնը կը պարունակէ 400,000 բնակիչ :

Կուսակալութեան զլիսաւոր քաղաքներն են .

Ա. — Պիթիսի զաւառին մէջ :

Պիթիս (40,000) Վանայ ծալուն արեւմտեան կողմը

կուսակալանիստ քաղաք , եւ առեւտրական կեղրոն

Տիգրիսի ու Մուրա Զաքի հովիաներուն միջև : Ունի

գեղեցիկ զիրք , զուարձալի պարտէզներ , հանքային

ջուրեր , եւ բամպակեղին ու բրդեղին ձեռագործներ :

Ալարք՝ Վանայ ծալուն արեւմտեան-հիւսիսային

եղերքը՝ զուարձալի զիրքի մը մէջ :

Բ. — Սղերդի զաւառին մէջ :

Սղերդ (15,000) Տիգրիսի արեւելեան ձիւղին վրայ

բարձրագիր ու բարեբեր զաշտի մը մէջ , ճարտարար-

ուեստ քաղաք : Համբաւաւոր են զէնքերն ու երենա-

գործական առարկաներ :

Գ. — Մուշի զաւառին մէջ .

Մուշ (25,000) Եփրատի արեւելեան հովտին մէջ

լեռնաշղթայի մը ստորաը խիստ զուարձալի ու բարե-

բեր քաղաք մընէ պարտէզներով շրջապատուած : Երկ-

րագործական կարեւոր կեղրոն (արմատիք , ծխախոտ ,

մեղր , եւնի) : Ունի հին բերգեր եւ աւերակներ :

Մուշի շրջականները կան 100ի չափ զիւղեր . խակ 8

ժամ հեռաւաւութեամբ գէսիլի արեւմտեան-հիւսիս կը դը-

նուի Ա. Կարապետի համբաւաւոր վանքը (Նախկին Գլա-

կայ վանք) , զոր հաստատեց Ա. Գրիգոր Լուսաւորիչ :

Այս վանքին մօսնէ Աշտիշտառ զիւղը ուր կայ Ա. Մեռ-

լուպի զերեղմանը :

Մելազիերս՝ երկրագործական կեղրոն : Ունի աղա-

նքնքեր :

Պիթիսի նահանգին արեւմտեան-հարաւային կողմը

կը զանուի Սասուն զաւառը , լեռնային :

15. ՏԻԱՐՈՂԵՔԻՐ

Տիարպեհիրի կուսակալութիւնը կը տարածուի Պիթլիսի և Վանայ կուսակալութեանց արեւմտեան կողմը : Կլիման ընդհանրապէս առողջ է : Հիւսիսային կողմերը ձմեռը ցուրտ և ամառը տաք կ'ըլլայ : Տիարպէքիրի շրջակաները երբեմն Յունուար և Փետրուար ամիսներուն ձիւն կը տեղայ . բայց ձիւնը երկար առեն գետնին երեսը չի մնար : Մարտ , Ապրիլ և Մայիս ամիսներուն ստէպ ստէպ կ'անձրեւէ :

Հողը շատ բարերեր է :

Արմափը կը մշակուի ներքին սպասման բաւելու չափ : Բայց խաղողն և ուրիշ սպասողներ , ծիսխոս , կնճիթ , խոզակ , բամպակ , գիսառ , քիթրէ և թիֆթիկ տեղի կուտան բաւական մեծ արածութեան մը :

Տիգրիսի ափունքին սեխն ու ձմերտւկը շատ համեղ ու խոշոր կ'ըլլան : Ճէզիրէի և Նիսիվինի մեղուները կուտան պատուական մեզր ու մեղրամում :

Շնատանի կենդանիներուն մէջ որ շատ բազմաթիւն , համբաւաւոր են ձիերը և եղերը :

Զեռարուեսար՝ որուն երկու զիխաւոր կեզրոններն են Տիարպէքիր և Մէրախն , բաւական զարդացած է :

Աւաշական բաժանումներ եւ զիխաւոր հաղթենք . — Տիարպէքիրի կուսակալութիւնը կը բաժնուի Յ զաւառներու :

1. Տիարպէիր , 2. Արդանա , 3. Մէրսին :

Գլխաւոր քաղաքներն են :

Ա. — Տիարպէիրի գաւառին մէջ .

Տիարպէիր (38,000) Տիգրիսի արեւմտեան ճիւղին

վրայ պատմական , հին և փառաւոր քաղաք : Ունի հսկայ պարիսպներ , միջնաբերդ և ուրիշ զեղեցիկ շինուածքներու աւերակներ . նշանաւոր է նաև իր կաշիներով , գորգերավ , մետաքսեղիններով , բուրդէ և բամբակէ գործուածներով , ողջնձէ անօթեղիններով և խեցեղիններով :

Շերամաբուծութիւնը՝ վերջերա մանաւանդ՝ մեծ մղում սաւացած է քաղաքին մէջ :

Տիարպէքիր կ'արտածէ այծի և ոչխարի մորթ , գխատր , քիթրէ , հւային :

Վաճառաշահ քաղաքներ են նաև :

Սիվերեկ (10000) , Տէրեկ և Լինէ որ ունի աղանդք :

Բ. — Արդանայի գաւառին մէջ

Արդանա (7000) բարերեր հովտի մը մէջ : Ունի պղնձի հանդք :

Բալու (7000) Եփրատի վրայ հին քաղաք է . ունի զեղեցիկ անառաներ :

Գ. — Մէրսինի գաւառին մէջ՝

Մէրսին (25000) երկրագործական կեղրոն ու ճարտարարուեսար քաղաք :

Նիսիպին և Ճեզիրէ , որոնք ունին պատուական մեզր ու մեղրամում :

16. ՄԱՄՈՒԻՐԷԹ-ԻԻԼ-ԱԶԻԶ

Խարբերի կամ Մամուրէթ-իւլ-Ազիզի նահանգը կը տարածուի Սլվազի , Երզրումի , Տիարպէքիրի և Հաւէպի կուսակալութեանց մէջանդ :

եղինի գործարաններ :

Ճիրնե (17,000) ունի արմափիր վաճառականութիւն
Կարմիր ծալու նաւահանգիստներուն հետ :

Քարեաֆ և Լուսոր Հին թեփէ հարիւրդռնեան
անուանի քաղքին աւերակներուն մօտ անհշան զիւ-
ղեր են :



Խօղատի մէջ ժամացոյցի աշտարակ (Տես էջ 66)

Էսնէ (5000) վաճառաշան քաղաք : Ունի բամբա-
կեղէններ ու բրուենեղէններ :

Ասուսն (7000) Նեղոսի վրայ (վերջին սահանքին
մօտ) : Ունի գեղեցիկ հանքեր կրանողի, ուրիէ կը հա-
նէին հին Եղիպտացիք իրենց վիթխարի միակտուր քա-
րերը :

Տեսևական նկարագիր. — Ամենահին ժամանակներէ
ի վեր Եղիպտոս խիստ նշանաւոր եղած է իր եղական
արգասաւորութեամբն ու հարսւս բուսաբերութեամբ ,
Նեղոսի կանոնաւոր ողողումներուն չնորհիւ :

Եղիպտոս լնդհանրապէս չատ առք կ'ընէ բաց ի
սասրին մատէն ուր ձմբան եղանակի հեշտ է եւ բարե-
խան : Գարնան մէջ կը փէտ աւաղային հրակէզ հալ մը
Խամսիյն (յիսորեայ հոլ) անուն , որ իր հետ չատ մը
մահացու հրանդութիւններ կը լերէ :

Նեղոս՝ արեւադարձային անձրեւներով ստուարա-
ցած ամրան եղանակին մէջ կը յորդէ կանոնաւորապէս,
չըջակայ հովիաք ամբողջապէս ծածկելով : Ասիկա կեր-
պով մը Եղիպտոսի ձմեռն է : Բայց երբ ջուրերը կը
քաշուին հողին երեսը պարարտ կառ մը թնկլով՝ այն
ատեն երկիրը քիչ ատենի մէջ կը ոկար ծածկուիլ ամէն
տեսակ տուատ բոյսերով ու Եղիպտոս զմայլելի դրախտի
մը կերպարանքը կ'առնէ :

Արմափները (ցորեն , զարի , Եղիպտացորեն , տու-
րա) տարին 3 հունձք կուանն (ընդ ամենը 20 մի իօն
էքթօլիում միջին հաշուալ) : Բրինձն ու ընդեղէնները
(սոպ , ոլոռն , եւազն) գրիթէ ամէն աեղ կը հասնին :
Քրքումը եւ լեղակը չափազանց առատ են Վերին Ե-
ղիպտոսի մէջ : Ախտ չատ ընդարձակ տեղ մը կը գրա-
ւեն նաեւ բամպակի մշակութիւնը (տարեկան արտա-
գուռութիւն 100 միլիոն քիլոկրամ) եւ վուշի , կանեփի
ու շաքարեղէզի մշակութիւնները (շաքարի արտադրու-
թիւնը միջին հաշուալ 30 միլիոն քիլոկրամի կը հասնի) :

Այս ամէնէն զատ Եղիպատոս կը հասցնէ համբաւաւոր արժաւ ու ամէն տեսակ պտաւղներ (նուռ, ծիրան, թուզ, նարինջ, լիմոն, ձիթևառնկ) :

Հնատանի անսասուններէն Եղիպատոսի մէջ կան ոչ խար, եղ, ուզա ու ջորի, ինչպէս նաեւ հաւանոցի կենդանիներ : Իսկ վայրի կենդանիներն են կոկորդիլս, «Հիլօս» անուն մուկը, ձիագեափ, եւ մեծամեծ օձեր :

Մեղուարոււթեւնը եւ շերամաբուծութիւնն աւ հաւասարապէս կը զարգանան այս երկրին մէջ :

Դալով հանքալին հարսաւթեանց, այսօր միակ շահագործուածներն են կարմիր պորփիւր (Տաքքան լեռան մէջ), Սիէնեան քար (Սոսուանի մօտերը), մարմարին (Հոնէի մօտերը), աղբորակ (Ֆայումի մէջ) որուն տարեկան արտադրութիւնը 600,000 քիլոկրամի կը հասնի, նատանի (համանուն ովասիսն մէջ) հանքերը, ինչպէս նաեւ Տամբէթի, Թօվէթի եւ Սուաքինի շրջականերու աղանձնքերը :

Իսկ մետաղները խիստ հազուադէպ են եւ հանքածուխը կը պախի բարութին :

Սուեւարական դիրք. — Եղիպատոս իր աշխարհապահ զիրքով՝ բնական միջնորդն է Սրեւմուափի եւ Ասրեւելքի մէջանել, եւ տեսակ մը միութեան զիծ՝ ընդ մէջ Միջերկրականի ու Հնդկային ովկիանոսի :

Պալումէսսեանց եւ Հոսմայեցոց տիրապեսաւական զիրքով՝ բնական միջնորդն է Սրեւմուափի եւ Ասրեւելքի մէջանել, եւ տեսակ մը միութեան զիծ՝ ընդ մէջ Միջերկրականի ու Հնդկային ովկիանոսի :

Զրանցքը 160 քլմ. երկայնութիւն, 8 մէթր խորութիւն եւ 58էն 100 մէթր լայնութիւն ունի. կը սկսի Բոռ-Սայիտէն, որ Միջերկրականի գեղեցկագոյն ու վաճառաշահ նաւահանգիստներէն մէկն է, ու կը յանդի Սուէգ՝ Կարմիր ծովուն վրայ, ընափի եւ ապահով նաւահանգիստ, որ ունի մննդական բերքերու մեծ վաճառականութիւն :

Եղիպատոսի միւս կարեւոր նաւահանգիստներն են՝

Աղեխսանելրին՝ Միջերկրականի կարեւորագոյն նաւահանգիստներէն մէկը՝ որ թէպէս զալրած է հիմա Արեւելքի թուանցիզի վաճառականութեան շահաստանն ըլւլալէ, բայց պիտի մնայ միշտ Եղիպատոսի ամէնէն մեծ ու ծաղկած նաւահանգիստը :

Ոօզիք եւ Տամբէթ՝ նեղոսի գետարերանին վրայ երթեմն իխուս բանուեկ նաւահանգիստներ՝ այսօր կորուսած են իրենց կարեւորութիւնը : Թօզէթ ըրբնձի վաճառականութեան մթերանոցն ու կեզրոնն է :

Կարմիր ծովուն եղերքը բուն-Եղիպատոսի զինաւոր. նաւահանգիստն է Քուսէյր որ իր կարեւորութիւնը կը պարտի Արաբիոյ հետ ունեցած վաճառականութեան ու մանաւանդ Մէքքէթի ուխտագնացութեան :

Ներքին նաւարկութիւն. Երկարուդիներ. — Եղիպատոս ունի Ափրիկէի ներքին նաւարկութեան գեղեցկագոյն զիծը եւ աշխարհի մեծագոյն գետերէն մէկը, — Նեղոսը՝ որուն խորհրդաւոր ակունքը վերջապէս երեւան հանեցին իրենց գաղտնիքը :

Նեղոս՝ Ասուանի մօտ կը մանէ բուն Եղիպատոս. Քէնէէէն կը սկսի չողենաւերու երթեւեկութիւնը, որոնք կը հասնին մինչեւ Գահիրէ, Եղիպատոսի քաղաքական ու առեւարական մայրաքաղաքը, ուր կը յանդին Արաբիոյ կարտահաները՝ Դամասկոսի ճամբար, Պէրպէրիստանի

Կարաւանները՝ Սիուտափ ովասիսին ճամբով, եւ Սուտանի ու վերին Եղիպատոփ կարաւանները՝ Խարթումի ու Նեղոսի հովիտին միջոցով :

Երկաթուղիներ կը կարեն Նեղոսի Տեղան, կ'երթեւեկն Աղեքսանդրիոյ ու Սուէզի միջեւ, հանողիսկելով թանթա եւ Զակաղիկ, ու կ'երկարին մինչեւ Գառիբէ, ուրիշ Նեղոսի հովիտին երկայնութեամբ շարունակուելով կը համնին ձիրճէ (ընդհանուր երկայնութիւն 1600 քլմ.) :

Ներածում եւ արտածում. — Առանց հաշուելու Սուէզի ճամբով եղած թուանզիգը՝ Եղիպատոփ արտաքին վաճառականութիւնը կը բարձրանայ 700 միլիօն ֆրանքի, որուն 300 միլիօնը ներածման եւ 400 միլիօնը արտածման փոխարժէքը կը ներկայացնէ :

Ներածութեան գլխաւոր առարկաներն են ամէն տեսակ հիւսոււածեղէններ, ծխախոս, փայտ, հանքածուխ, երկաթեղէն, անողիական մետաղներ, զգեստեղէն, եւայլն : Արտածութեան նիւթերն են բամբակ, բամպակի հունտ, արմտիք, իւղալից հունտեր, շաքար, արմաւ, խէժ, ներկի նիւթեր, բուրդ, եւայլն :

ԳԼՈՒԽ Զ.

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Երկրագործութիւն . Բնական յարմարութիւն . — Օսմաննեան Կայորութեան տիրապետութեան տակ գտնուած երկիրները, մասնաւորապէս Եւրոպական թուրքիոյ հարաւային եւ արեւմտեան գաւառները (Բումբէլի, Մակեդոնիա, Աղվանիա) ինչպէս նաև Ասիական թուրքիոյ ծովեղերքի մօա նահանգները գերազանցապէս երկրագործական երկիրներ են, եւ իրենց պարարտ ու արգասաբեր հողերով, այլազան կլիմաներով ու սքանչելի ջուրերով կը նաև բարեխասոն գոտիներու յատուկ ամէն կարգի բերքեր յառաջ բերել :

Օսմաննեան երկիրներու մեծագոյն մասին մէջ յաջուղութեամբ կը մշակուին ամէն տեսակ արմափք : Իրաւ է որ կան տեղեր, ուր այս մշակութիւնը չի յաջողիք, բայց այս չինչանակեր թէ այդ տեղերուն հողը բոլորովին անյարմար է արմափք հասցնելու, այլ թէ հողին ընութիւնը այդ տեղուանքը պահանջուածին պէս արմափք չարտադրեր : Նոյն բանը չէ սակայն ձիթենիին, նարընջենիին ու արմաւենիին համար : Ասմաք իրենց յատուկ բնական սահմաններն ունին որոնցմէ դուրս չեն կրնար աճիլ . օրինակի համար՝ ձիթենիին որ սաստիկ ցուրտի չի զիմանար, կը համնի միայն այնպիսի տեղուանք, որոնց ջերմութեան աստիճանը 130 էն վեր, եւ ծովեղբէն հե-

ռաւորութիւնը 100 քիլոմետրէն նուազ է : Այսպէս ուրիշն կ'ածի Մարմարայի , Սրչիպեղագոսի եւ Միջերկրանի ծովեղբին վրայ , եւ Արշիպեղագոսի կղզիներուն մէջ , ինչպէս նաև Սեւ ծովու եղերքը տեղ տեղ :

Անտառները . — Կը հաշուուի թէ Օսմանեան Պետութեան մէջ զանուած անտառները 12 միլիոն հեքթարի տարածութիւն մը կը գրաւեն : Այս անտառները կը պարունակեն շինութեան փայտի թանկաղին տեսակները , ինչպէս կաղնի , եղերին , նշղարի , ոփի , կասկենի , կնձնի , հացի , եւալին :

Օսմանեան Պետութեան ամէնէն անտառախիտ երկիրները կը համարուին Եւրոպական թուրքիոյ մէջ Շքոտրայի , Քոօլայի , Մանասթըրի եւ Սելանիկի կուսակալութիւնները :

Իսկ Ասիական թուրքիոյ մէջ՝ Սեւ ծովու , Սրչիպեղագոսի եւ Միջերկրականի ծովեղերեայ երկիրները :

Անդաման մօակութիւններ . — Օսմանեան Կայութեան անմիջական տիրապետութեան տակ զանուած երկիրներուն ընդհանուր տար սծութիւնը կը հաշուուի 2 միլիոն 745 հազար քիլոմետր քառակուսի , որ լսել է 276 միլիոն հեքթար , կամ 3000 միլիոն տէօնիւմ :

Վարուցանի հողերն այս տարածութեան 18 %-ը կը գրաւեն , այսինքն իբր 50 միլիոն էքթար :

Քիչ երկիրներ կան որ այնքան բեղմնաւոր ըլլան արմտիքի մասին , որքան Ռումելիի եւ Անտառուի Կայսերական նահանգներն , որոնց մեծագոյն մասին մէջ ամէն կերպով նպաստաւոր պայմաններ կը գտնեն ցորենը , զարին , հաճարը , եղիպտացորենը , բրինձն ու զանազան արմտիք :

Ցորենի մշակութիւնն ընդհանրացած է Օսմանեան Կայսրութեան զրեթէ ամէն կողմը , եւ ամէնէն ընտիր

անսակները յառաջ կուզան առատորէն Ցորենի արտադրութեան գլխաւոր կեղրոններն են Էտիրնէի , Սելանիկի եւ Մանասթըրի կուսակալութիւնները՝ Եւրոպական թուրքիոյ մէջ . Ալարնի , Ատանայի , Սուրփիոյ , Գօնիայի , Էնկիւրիի , Մամուրէթ-իւլ-Ազիզի , Տիարպէքիրի , Սըվազի կուսակալութիւնները՝ Ասիական բաժնին մէջ :

Բրինձն՝ որուն բուն հայրենիքն է Սրեւելեան Ասիա (Զինաստան եւ Հնդկաստան) յաջողութեամբ կը մշակուի Մարիցա , Սթրումա եւ Վարապր գետերուն սարին ընթացքին մօտակայ դաշտագետիններուն , ինչպէս նաև Շքօտրայի կուսակալութեան մէջ : Իսկ Ասիական թուրքիոյ բրինձն արտագրող երկիրներն են Տրապիզոնի , Լազիսթանի , Ճանիկի գաւառներն ու Միջաղեաքի դաշտագետինները :

Բանջարական մշակութիւններն ամէնէն աւելի հոգածութեան առարկայ հղած են եւ բաւական կարեւոր գեր մը կը խաղան Տաճկաստանի ժողովուրդին մոուցման գործին մասին : Քաղաքներու եւ գիւղախումբերու շրջակայ տեղուանք՝ բաւական ընդարձակ տարածութեամբ զետիններ յասկացուած են ամէն անոսակ բանջարական մշակութեանց , ըլլայ թարմ բանջարեղին , ըլլայ ընդեղէն , ինչպէս մաշ , լուրիս , ոլոս , սիսեռ , սոպ , սիսոր , ստեղլին , շողզամ , կաղամբ , վարունգ , եւայլն : Ասոնց մէջ ամէնէն շատ սպասում ունին լուրիան ու սիսեռը , որոնք Սրեւելքի ժողովուրդներուն համար նոյնքան կարեւորութիւն ունին , որքան մաշը արեւմտեան ազգերուն համար :

Ծառանման մօակութիւններ . — Տաճկաստանի մէջ ծառանման մշակութիւնները բաւական բարգաւաճ վիճակ մը ունին եւ արագորէն զարգանալու ճամբուն մէջ մտած են : Ծառանման մշակութեանց մէջ առաջին տեղը

կը գրաւէ որքետունկը , որտւն մշակութեան մեծ յարմարութիւն ունին Տաճկաստանի հողն ու կլիման :

Տաճկաստանի մէջ այգեգործութեան մասին առաջին կարգը կը գրաւեն Էտիլրնէի , Սելանիկի , Պրուսայի եւ Սյարնի կուսակալութիւնները , Սուրիա եւ Արցիպեղագոսի կղզիները :

Զիրենիի մշակութիւնը՝ ինչպէս Միջերկրականի գօտին ատկ գանուող երկիրներուն՝ նոյնպէս ալ Տաճկաստանի հարասութեան գլխաւոր ազդիւներէն մին կը ձեւացնէ :

Եւրոպական Թուրքիոյ հարաւային կողմերուն եւ Ազրիականի ծովեղին ձիթաստանները , Ասիական Թուրքիոյ մէջ՝ Միջերկրականի կղզիներուն ու ծովեղերեայ երկիրներուն , Արցիպեղագոսի ու Սեւ ծովու եղերքին ձիթաստանները , նոյնպէս Ազրիկէի մէջ Թարապլուսի եւ Պէնկագի ձիթաստանները շատ ընտիր ահսակներ կը պարունակին :

Սուրբոյ ծովեղերքը , Արցիպեղագոսի կղզիներն ու ծովեղերքը , ինչպէս նաև Ափրիկան Տրիպոլիս՝ ունին նարնջնիի եւ զեմոնի ձշմարիտ անտառներ : Սեւ ծովու եղերքը՝ Ռիզէի շրջակայ պարտէղներն ալ կը հասցնեն բաւական նարինջ ու լեմոն : Ամէնէն համբաւաւորներն են սակայն Եաֆայի , Կիրիափ եւ Թարապլուսի արտադրութիւնները :

Տաճկաստան շնորհիւ իր հողային ընդարձակութեան եւ կլիմաներու հիմնալի յաջորդութեան կը հասցնէ Եւրոպական ամէն տեսակ պատուղներ , ինչպէս նաև Սրեւագարձային երկիրներու յատուկ պատուղներուն մեծագոյն մասը :

Արցիպեղագոսի եւ Միջերկրականի ծովեղերեայ գաւառներուն թգենիները մեծ համբաւ կը վայելեն ամէն կողմ . մանաւանդ Սյարնի նահանգին չոր թուզը արտածութեան կարեւոր նիւթ մը եղած է :

Խնձորի , տանձի , սաղորի , կեռասի ընտիր եւ գանազան տեսակները կը հասցնեն Սեւ ծովու եղերքը՝ ձանիկ , Տրապիզոն , Կիւմիւշիանէ , Կիրասոն , ինչպէս նաև Ամասիա , Թօքադ , Էնկիւրիւ , Քէօթահետ և Սպարտա եւ Անախոք :

Դեղձին ընտիր տեսակները կը համնին Էտիրնէի եւ Սելանիկի նահանգներուն ծովեղերեայ մասերուն եւ Պրուսայի , Այտընի , Ատանայի , Քօնիայի , Հալէպի եւ Սուրբոյ կուսակալութեանց մէջ :

Միջանըն համբաւաւոր տեսակները կան Դամասկոսի , Ատանայի , Ուշագի եւ Սելանիկի կողմերը , ինչպէս եւ Պոլոսյ շրջակայ պարտէղներուն մէջ :

Նոնենին որ հարաւային երկիրներու բերք է , ամէնէն աւելի կը համնի Իզմիրի , Ատանայի , Հալէպի , Շամի եւ Պալտասի կուսակալութեանց մէջ , ինչպէս նաև Ազրիականի ծովեղերեայ մասերուն մէջ :

Օսմանիան Պիտութեան ատք երկիրներուն մէջ (Արարիա , Թարապլուս եւայն) կ'աճինաեւ արմաւենին . Այս բերքը ամէնէն առատ տուող երկիրներն են Մէտամի , Մէքքէ , Հօտէյտա , Նէձէտ (Արարիոյ մէջ) ։ Պարա , Միւնթէֆիք , Պէնկագի եւ Ափրիկեան Տրիպոլիս :

Եւրոպայի մէջ քշուած արմաւները ընդհանրապէս Հիւսիսային Ափրիկէի բերք են :

Այս ամենուն վրայ եթէ աւելցնենք ընկոյզը , Կաղնը , նուշը , պիտուակն ու շագանակը , որ Տաճկաստանի այլ եւ այլ երկիրներուն , մանաւանդ Սեւ ծովուն Միջերկրականի ծովեղերեայ նահանգներուն մէջ առատօրէն կը համնին , նորէն չպիտի կրնանք ունենալ կատարեալ գաղափար մը՝ ծառանման մշակութեանց մասին Տաճկաստանի հողին ու կիմային ունեցած եղական ընդունակութեան նկատմամբ :

Արուեստական մշակութիւններ. — Հիւսեղի տռանկերը (բամպակ, վուշ, կանեփ եւայլն) կը մշակուին Օսմ. Կայորութեան զանազան մասերուն մէջ :

Բամպակը որ Եւրոպական Թուրքիոյ կարեւոր արտադրութեանց մին կը ճեւացնէ, մեծ համբաւ ունի իր տեսակի ազնուութեան կողմէ, եւ կը մշակուի զլիաւորաբ Մակեգնիոյ հարաւային կողմերն ու Մարիցայի հովանին մէջ : Արտադրութեան կարեւոր կեղրոն մըն է Մէրէզզի գաւառակը :

Ասիական Թուրքիոյ բամպակ արտադրող երկիրներն են Խիւտավէնամիկեարի, Սյալնի, Ստանայի, Քօնիսայի, Հալէսլի, Սուրբիոյ . Տիարակէքիրի, Մուսուլի եւ Պաղտասի կուսակալութիւնները եւ Միջագետք : Եւ սակայն Աստանայի բամպակը միւներէն աւելի յարգ եւ համբաւ ունի :

Վուշն ու կանեփը՝ Օսմանեան Պետութեան բարեխառն երկիրներուն մէջ յաջողութեամբ կը մշակուին :

Վուշի զլիաւոր արտադրավայրերն են Խիւտավէնամիկեար, Տրապիզոն, Էրզրում, Վան, Էնկիւրիւ, Քօնիս, Սուրբիա (Ասիական Տաճկաստանի մէջ), Էտիլինէ, Սելանիկ, Եանեա եւ Շքոտրա (Եւրոպական Թուրքիոյ մէջ) :

Օսմանեան Պետութեան լաւագոյն կանեփը կ'արտադրէ Տրապիզոնի կուսակալութիւնը : Յետոյ կուգան Սըվազի, Գասթէմունիի, Խիւտավէնամիկեարի, Սյալնի եւ Հալէսլի նահանգները :

Ծխախտի մշակութիւնը Տաճկաստանի հարսառութեան գլխաւոր աղբիւրներէն մին դարձած է, եւ Կայութեան ամէն մասերուն մէջ ալ ընդհանրացած :

Ընափիր ծխախտու արտադրող կեղրոններն են Եւրոպական Թուրքիոյ մէջ . — Եէնիձէ, Գալալա, Սերէզ, Տրամա, Սելանիկ, Էտիլինէ եւ Եանեա : Ասիական Թուրք-

քիոյ մէջ . — Սյալնի նահանգը, Իզմիտի գաւառն ու Պրուսայի գաւառը : Նոյնագէս Սև ծովու եղերքը տարածուած երկիրներուն մէջ կը մշակուի ծխախտու . համբաւաւոր արտադրավայրերն են Տրապիզոն, Սամոն, Պաֆրա եւ Սինոպ որոնք ունին իրենց անուամբ ճանչցուած ընտիր եւ պատուական ծխախտու :

Պէրսի, Սուրբիոյ եւ Հալէսլի կուսակալութեանց մէջ յառաջ եկող «Ճէպէլ թիթիւնէրի» կոչուած աեսակներն ալ ծանօթ են ամէնուն :

Օսմանեան երկիրներու արտադրած ծխախտու Ռէժիփի վարչութեան մնաշնորհն եղած է, որուն փոխարէն Պետական գանձը 750,000 օսմ. լիրայի հասոյթ մը կը ստանոյ : Կայորութեան ծխախտու արտադրութիւնը կը հաշուուի 20 միլիոն օխա :

Խանուեն որուն հայրենիքը Հապէշաստանի Քաֆէ գիւղն լլալ կը կարծուի, ամէնէն առաջ Եէմէնի կուսակալութեան մէջ փոխադրուած ու մշակուած եւ քիչ ժամանակի մէջ զործածութիւնն ընդհանրանալով աշխարհի ամէն կողմը տարածուած է :

Այս բերքը միմիայն Եէմէնի նահանգին յատուկ է : Մանաւանդ Մօքայի խանուէն իր համբն ու տեսակի ազնուութեան կողմէ ուրիշ երկիրներու արտադրութիւնները կը գերազանցէ :

Խանուէնին բնավայրը Եէմէնի գաւառն լլալով հանդերձ այն կողմէրէն տարին 8000 թօնոյի չափ միայն խանուէ կ'արտածուի : Մինչդեռ օաար երկիրներէ (Ճապանի, Հալէսլի, Զայդիիէ, Անթիւեան կղզիներէն եւ Ֆուանսական գաղթականութիւններէն) ընդամենը 240,000 թօնօխանուէ կ'արտածուի եւ Եւրոպա կը զրկուի :

Թթենին ճարտարաբուստական կարեւոր մշակութիւն մըն է Տաճկաստանի համար, ուր շերամաբուծու-

Թիւնն զգալի կերպով սկսած է յառաջդիմել մանաւանդ վերջին մէկ քանի տարիներու միջոցին :

Օսմանեան Պետութեան մէջ ամէնէն շատ թթենի ունեցող երկիրներն են Էտիրնէ, Սելանիկ, Մանասթըր



Ա.ք-Սէրայցի (Քօնիաի մօտ) զիւղացիներ (Տես էջ 60)

(Եւրոպական բաժնին մէջ), Խիւտավէնտիկեար, Թօքադ, Ամասիա, Միջագետք, Հալէպ և Սուրբա (Ասմիական բաժնին մէջ) :

Ճարտարարուեստական մշակութեանց կարգը կը դասուին նոյնպէս՝ իւղալից հունաերը (Խաչխաչ, կնճիթ

եւաղն) եւ գունատու նիւթերը (լեղակ, սրգան կարմիր, գանձի կամ ճէհրի եւ քրքում) :

Տաճկաստանի կարեւորակոյն արտադրութեանց մին կը ձեւացնէ ափիօնը, զոր կը հանեն Մեկոնի (Խաչխաչ) հունաերէն :

Եւրոպական թուրքիոյ մէջ այս բերքին մշակութիւնը աննշան տեղ մը կը գրաւէ եւ Սելանիկի կուսակալութեան մէկ քանի գաւառներուն մէջ սահմանափակուած է : Ամէնէն կարեւոր արտադրավայրերն են Ասմիական թուրքիոյ մէջ հետեւեալ կեդրոնները . Պալքէսիր, Պօղատէչ, Ռէշագ, Աֆրոն Քարահիսար, Քէօթահեա, Էսկիշէհիր (Խիւտավէնտիկեարի կուսակալութեան մէջ), Պէյփազար եւ Էնկիւրիւ (Էնկիւրիւ նահանգին մէջ), Սիրէ եւ Թօքադ (Սըվազի կուսակալութեան մէջ), Մալաթիա (Մամուրէթ-իւլ-Ազիզի կուսակալութեան մէջ), Ատալիա (Գօնիայի նահանգին մէջ), Պերկամա եւ Իզմիր (Այտէնի նահանգին մէջ) :

Օսմանեան երկիրներուն արտադրած ափիօնին տարեկան քանակութիւնն է միջին հաշուով 300,000 օխա : Ներքին սպառումը շատ անհշան ըլլալով՝ այս արտադրութեան 70%Ը Սնողիի եւ մնացածն ալ Ամերիկա, Փուանսա, Հօլանտա, Գերմանիա եւ Աւստրիա կը զրկուի :

Կնճիթը (սուսամ) սրուն հայրենիքն է Հնդկաստան, կը սիրէ ընդհանրապէս բարեխասոն երկիրներ : Օսմանեան երկիրներու տակն մասին մէջ կրնայ մշակուիլ : Գլխաւոր արտադրավայրերն են Էտիրնէ, Սելանիկ, Խիւտավէնտիկեար, Ատանա, Քօնիա, Հալէպ և Սուրբա : Իւղալից տունկերուն մէջ կնճիթն ամէնէն շատ իւղ տուող տունին է : Օսմանեան Պետութեան այլ եւ այլ կողմերը կերակուրներու պատրաստութեան մէջ բաւական ալ կը գործածեն այս իւղէն սրուն կ'ըսեն շիրիկ (Արևադան եաղը) :

Տղիաղաթը (ricin) բարեխառն երկիրներու մէջ նոյնալիս յաջողութեամբ կը մշակուի : Այս առանկին մեծ խնամքով հանուած իւղը՝ հնդիկ իւղ (հինա եազը)՝ բժբշկական աշխարհին մէջ մեծ զործածութիւն ունի :

Տիարպէքիրի, Մամուրիթ-իւլ-Ազիդի, Հալէպի եւ Սուրիոյ կոտակալութեանց մէջ կը մշակուի աղկաղատը, բայց արտազրաթիւնն այնքան կարեւոր չէ :

Յուսական ներկերը (ասորն, աղաքար, Իւղակ եւ քրքում) հանքային ներկերէն աւելի նախամեծար կը համարուին միշտ տարազագործութեան մէջ, որովհեահետամովմար ու անալյալ կը մնան :

Տորոնին (քէօք պօյա, garance) արմատները առարիներով կը զիմանան, եւ ներկը կը հանուի իր արմատներէն :

Օսմանեան Կայսրութեան գրեթէ ամէն մասերը կրնան հասցնել այս տունկին, բայց անոր մշակութեան ամէն տեղ պէտք եղածին չափ կարեւորութիւն չէ արբաւած : Ամէնէն աւելի կը մշակուի իւղիրի, Գօնիայի, Էնկիւրիկի, Սըլվազի եւ Տիարպէքիրի կուսակալութեանց մէջ :

Մինչեւ մօտ ժամանակներ այս բերքին յարգն ու արծէքը շատ մեծ էր : Եւրոպա պատրաստուած եւ ամէն կողմ զրկուած կեղծներուն առատութենէն ու աժակութենէն՝ առորնին պատիւը բաւական ինկած է այժմ :

Աղաֆարը (ճէհրի) Օսմանեան Պետութեան մէջ ամէն աեղ կրնայ աճիլ, տաք երկիրներէն զատ, բայց աւելի աւազուատ տեղուանք ու լեռներու սատրուը կը տեսնուի : Արտադրութեան զլխաւոր կեղքոններն են Էնկիւրիկ, Գօնիա, Սըլվազ եւ Հալէպ, ինչպէս նաև Բութիփի ձովելիք մասերը :

Ճէհրիին ցողունէն շատ յարգի դեղին ներկ մը եւ իր հունտերէն ալ տեսակ մը կանթեղի իւղ կը հանուի :

Լեղակը (չիվլի, indigo) որուն տերեւներէն կապուագոյն ներկ մը կը հանուի, ամէնէն աւելի եէմէնի կուսակալութեան մէջ է որ կը մշակուի արդիւնաւոր կերպով :

Քրիումը (սաֆրան) որուն ծաղիկներէն շատ անուշ գեղին ներկ մը կը հանուի, մեծ զործածութիւն աւնի զեղագործութեան եւ չաքարագործութեան մէջ : Իրգոյնն անեկծ ու անվթար ըլլալուն արուեստներու մէջ այնքան յարդ եւ արծէք չունի սակայն :

Օսմանեան Պետութեան քրքում արտագրող երկիրներն են Սելանիկի, Էսիրիէի կուսակալութիւնները, Գասթէմունիի կոտակալութեան մէջ Սաֆրանագոլուքազաքը, եւ Հալէպի ինչպէս նաև Ափրիկեան Տրիպոլսաց կուսակալութիւնները :

Ճարտարաբուևստական առոնկերու մասին Տաճկաստանի հարաստութեան վրայ բաւականաչափ զաղափար մը տուած ըլլալու համար յիշենք նաև դժնիկի հատիկը (rhamnus cotharica) որ գեղագործութեան մէջ իր մաքրողական եւ նկարչութեան մէջ իր կանաչ ներկ կը գործածուի, եւ որուն զլխաւոր արտագրավայրերն են Սըլվազ, Էնկիւրիկ, Թօքադ, Սիլէս, Զօրում, Ս.մասիա, եւ Եօլլաա : Ինչպէս եւ մատուցակը (միյան քէօքիւ, réglisse) որուն զործածութիւնը հետզհետէ ընդհանրանալու վրայ է Եւրոպայի զտարաններուն մէջ, եւ որ անմշակ կ'ածի Մէնտէրէսի նորին մէջ : Մասսատակի հիւթն ու արմատը արտածութեան կարեւոր առարկայ մը եղած են այսօր Սնասոլուի մէջ :

Կենդանական նարսութիւն . — Պանարաբուծութիւն . — Քիչ երկիրներ կան որ մարգագեաբններու աճման եւ հետեւաբար պաճարաբուծութեան մասին այնքան նպաստաւոր պայմաններու տակ զտնուած ըլլանորքան Օսմանեան Կայորութեան անմիջական տիրապեկան

տութեան տակ գտնուած երկիրներուն մեծագոյն մասը :

Բոլցանդակ Տաճկաստանի մէջ ի՞նչ տարածութիւն որ կը զրաւեն մշակութեան հողերը , նոյնքան տարածութիւն ունին մարզագետիններն ու արօտատեղինները , այսինքն իր 50 միլիոն էքթար : Դիակի է սակայն որ գրեթէ ամէնքն ալ բնական մարզագետիններ են , որոնք լերներու հովիաններուն մէջ ու սարսանները ինչպէս նաև գետերու եղերքներն ու տափարակ եւ խոնաւ տեղուանք կը տարածուին , անհամար տեսակ խոտերէ կազմուած : Տաճկաստանի մէջ արուեստական մարզագետիններ Պրաւայի պէս մէկ քանի նահանգներու մէջ միայն կը հասցնեն քիչ մը , սակայն ընդհանրապէս՝ ազարակային անհասունները բնական մարզագետիններու եւ տրօտատեղիններու վրայ կ'արածին :

Եղերաւոր կենդանիները (Յ միլիոն) որ պարարտ ու ջրարի արօտատեղիններու կարօւ են՝ զրեթէ զլիսաւորաբար կ'ապրին Ազրիականի , Սրբիպեղագոսի եւ Միջերկրականի ծովեղերեայ գաւառներուն մէջ : Սելանիկ , Եանեա , Էտիրնէ , եւ մանաւանդ Էտիրնէի կուսակալութեան մէջ Սարօսի ծոցին շրջականները եւ Սելանիկի կուսակալութեան մէջ Սէրէզի շրջականները՝ ընտիր եւ համբաւաւոր եղները կը մտուցանեն : Ասիական Թուրքիոյ մէջ՝ Քարսասի , Սյարն , Ստանա , Հալէպի եւ Սուրիա , մանաւանդ Պաղեստինու երկիրն ու Հալէպի գաւառին Ասիր կոչուած գաշտը կը մտուցանեն նոյնպէս եղան բազմաթիւ հօսեր :

Դամասկոսի , Հիմազի , Պաղտատի , Հալէպի , Աստանայի , Էտիրնէի եւ Եանեայի կուսակալութիւնները կը մտուցանն նաեւ ընտիր , կաթնառու կովեր :

Տաճկաստանի մէջ եղները միմիայն երկրագործական պէտքերու չէ որ կը գործածուին , այլ եւ մէկ տեղէն միւսը կառքով կահ կարասի տանել բերելու , եւ լեռ-

նոռ ու քարուա տեղերէ եւ անտառներէ այլ եւ այլ ձանր բեռեր փոխագրելու կը ծառայեն :

Զիերը (1 միլիոն) այնքան բազմաթիւ չեն Օտանանեան Կայարութեան մէջ , ուր սակայն կը գանուին չատընափր ու համբաւաւոր տեսակները : Ամէնէն աւելի նպաստաւորուած երկիրները կը համարուին Տիարպէքիր , Պիթլիս , Մամուրէթ-իւլ-Ազիդ եւ Էրզրում որոնց ձիերն աղնուութենէ աւելի ոյժ ու տոկունութիւն ունենալուուն՝ ամէն տեսակ ծանր աշխատա թեանց կրնան գործածուիլ :

Եւրոպական Թուրքիոյ մէջ Էտիրնէի եւ Մանտամբրի կուսակալութիւններն ալ ունին ձիու ընտիր տեսակներ :

Տեսակի աղնուութեան կողմէ գերազանց համբաւունին Միջագետք , Իրաղ-Արէպի , Սուրիա եւ Հիմազ , որոնք կը մտուցանն ընտիր եւ աննման ձիեր : Պաղտատի եւ Պատրայի Սրբարական նոյզդներուն նմանը աշխարհի եւ ոչ մէկ կողմը կը տեսնուի :

Տաճկաստանի լեռնային գտւառներուն մէջ մանաւանդ ձիէն աւելի կը գործածուին եղն ու ցորին , որոնց կրնայ բաւել բազդատար աւելի նիհար մտունդ մը :

Արարիոյ , Ափրիկեան Տրիպոլոյ եւ Պագտատի ու Սուրիոյ կուսակալութեանց մէջ , փոխազրութեանց մեծագոյն մասին համար կը գործածուի ուղղը (Յ միլիոն) որ այս անազատային երկիրներուն մէջ մնձ զեր կը կատրէ եւ իրաւամբ կոչուած է անապատի նաւ :

Ոյսարի մասին Տաճկաստան ամէնէն հարուստ երակիրներէն մին կրնայ համարուիլ , բազդատամբ իր բնակիչներու թիւին (մէկ հոգիի երկու ոչխար) : Նշանաւոր է Բումէլիի խալչըրալընը՝ իր համբաւաւոր մսովն ու տուածընտիր բրդով : Այս կենդանին կը գանուի զլիսաւորաբար գատնապատ , Մալկարա եւ ամրող Էտիրնէի կուսա-

կալութեան մէջ . նոյնպէս Սելանիկ , Մանտովըր , Եանեա և Քօսօվլա :

Ամիական Թուրքիոյ մէջ Հեքեարի , Պիյլիս , Էրզրում , Մամուրէյ-իւլ-Աղիզ , Տիարակէքիր , Ատանա , Քօնիս , Էնկիւրիւ կը մուցաննեն Քարաման կոչուած ոչխարհներու անթիւ հօտեր : Այս ոչխարհներուն հասակը աւելի բարձր , պոչերնին մեծ , բուրդերնին միջին աստիճանի և միսերնին ալ զըլըրծըգի միսէն ստորագաս է :

Այս Քարաման կոչուած ոչխարհներին անթիւ , անհամար հօտեր կ'արածին ամէնէն աւելի Փոքր-Ասիոյ թերակղղիին միջին մասերու զաշտերուն մէջ , մասնաւորապէս Քօնիսի կուռակալութեան բարձրագիր զաշտարաններուն և Սահանայի նահանգին «Զուքուր-Օվա» գաշտին մէջ , ինչպէս և Թարասոսի Շըլականները :

Այծերը որ լենուո երկիրներու կենդանիներ կը համարուին՝ Տաճկաստանի այլ և այլ մասերուն մէջ մեծ թուով կը մասնուին : Մասնաւորապէս Քօնիսի , Պիթլափի , Հեքեարիի , Էրզրումի , Տէրսիմի , Տիարակէքիրի կուռակալութեանց մէջ հասարակ այծեր ոչխարհներու հօտերուն հետ խառն կ'արածին :

Հալէպի , Սուրիոյ և Հիճազի կուռակալութիւնները կր մուցաննեն Սրարական այծեր , բարձր հասակով , առանց եղջիւրի , ականջներնին ու մազերնին երկայն , և որոնք Ձեն մինչեւ 4 օխոս կաթ կուտան :

Փոքր-Ասիոյ թերակղղիին մէջ Սաքարիա և Գըզըլ Բրմագ գետերուն աւազաններուն մէջանդ տարածուած երկիրը կը մուցանէ աշխարհի ամէնէն համբաւաւոր այծը որ էնկիւրի այժ անուամբ ծանօթ է , և որուն մազը (թիֆթիկ) մետաքսի պէս կակուզ ու նուրբ՝ մեծ յարգ ունի վաճառականութեան մէջ : Իրենց այս հարաստութեամբ իրաւամբ իրաւամբ կը ամէնէն պարծիլ ամէնէն աւելի

Պէյ Փաղար , Զպուգ Ապատ , Այաշ , Սիվրի Հիսար , Միխալճըգ , Եապան Ապատ , Նալլուխան (Էնկիւրիւ գաւառ) , Էսկիչէիր , Քէօթահեա , Գարա Հիսար (Խիւտալինափիկեար) , Քեանդըրը , Գօչ Հիսար , Գաոթէմունի , Գարաձա-Վիրան , Սաֆրանալոլու , Քէրէափ (Գաոթէմունիի նահանգ) , Թընուս , Աղիզիչ , Կիւրիւն , Օսմանճըգ , Մարզուան (Սըլվագի կուսակալութիւն) որոնց մուցած այծերուն թիֆթիկը զերազանց համբաւունի ամէն կողմէ :

Բովանդակի Կայսրութեան մէջ ոչխարհներուն և այծերուն թիւը ի միասին կը բարձրանայ 65 միլիոնի :

Մեղուարութիւնը շատ հին ժամանակներէ ի վեր Տաճկաստանի ժողովրդին զբաղումներէն մին եղած է : Մասնաւորապէս կարէմիտ , Պալըքէսէր , Քէօթահեա , Էսկիչէիր , Սիվրի Հիսար , Էնկիւրիւ , Քեանդըրը , Զօրում , Կեսարիա , Սըլվազ , Արտրիկիր , Մալաթիա , Պիթլիս , Մուշ , Էրզրում և Տրավիզոն շատ համբաւաւոր են մեզուարութեան մասին :

Կրեատէ , Միավլիի և Հոռոս կղիներուն մէջ լեմոնի և նարնջնի շատ զանուելուն պատճառաւ , անոնց ծաղիկներին ժողովուուած մեղրը ընտիր և պատուական կ'ըլլաւ : Նոյնպէս Բիզէի շըլականները յառաջ եկած Հեմշին պալը անուամբ համբաւաւոր մեղրը ուրիշ ամէն ահակները կը զերազանցէ :

Քօնիսի , Համիփա , Նիւտիի և Սահանայի , ինչպէս նաեւ Վանայ և Կիւմի շիանէի զաւառակներաւն և Խօսա , Օֆ , Թիրէպօլու , Կիրասոն և Օրտու քաղաքներուն ու աւաններուն ալ մեղրի արտազրութիւնը յիշտակութեան արժանի է :

Վերոյիշեալ աեղերուն , մահաւանդ Էնկիւրիւ , Սիվրի Հիսար , Սըլվազ , Սամսոն , Տրավիզոն , Օրտու և Բիզէ քաղաքներուն մէջ մեղրուարութեան յա-

ոաջղիմութիւնը մեծապէս նպաստած է մեզրամոմի վա-
ճառականութեան :

Շերամաբուժոքիւնը որ երկրադորժական արուես-
տին ամէնէն փափուկ, ամէնէն կարեւոր ճիշդերէն մէկն
է, սկսած է տակաւ հասնիլ այն կատարելութեան, զոր
իրաւամբ կարելի է սպասել այնպիսի երկրէ մը՝ որ ամէն
տեսակ նպաստաւոր պայմաններով օժտուած է բնու-
թենէն :

Այսօր ամէնէն աւելի շերամաբուժութեամբ զբաղող
երկրիներն են Եւրոպական Թուրքիոյ մէջ Էտիրուի,
Սևլանիկի եւ Մանասթըրի կուսակալութիւնները. Ասիա-
կան Թուրքիոյ մէջ՝ Քարասի եւ Խիւտավէնափետարի
կուսակալութիւնն, իրմաց չըջականներով, Այսընի նա-
հանգը ամբողջովին, Սուրբիա եւ Միջագետք,

Առորդութիւն եւ ձինորսութիւն. — Որսորդութիւնը
բաւական արդիւնաւոր է Օսմաննեան Կայսրութեան մէջ:
Բումէլին մասնաւորապէս որսորդութեան շատ յարմար
երկիր մըն է. այծնամ, եղջերու, վարագ, մանր երէ-
ներ եւ ամէն անսակ թուչուններ՝ երբեմն բաւական կա-
րեւոր հասոյթ մը կը ձեւացնեն անտառախիտ գաւառ-
ներու բնակիչներուն :

Տաճկաստանի անտառային երկիրներուն մէջ կ'ապ-
րին նաեւ վայրի անտառաններու բազմաթիւ տեսակներ.
արջ, գայլ եւ ազուէս զրիթէ ամէն անդ կը գանուին.
չնադայլը կը տեսնուի ամէնէն աւելի Ասիական Թուր-
քիոյ մէջ եւ Մակեդոնիոյ հարաւային կողմը. յամոյր,
կուզբ, ջրշտն, կզաքիս, կուզ եւ ուրիշ մուշտակա-
ւոր մանր կենազաններ Տաճկաստանի այլ եւ այլ մա-
սերուն մէջ կը պատահին :

Ձկնորսութիւնն ալ նոյնպէս հասոյթի կարեւոր ազ-
բիւր մըն է Տաճկաստանի համար, որուն ծովափունքը

թրջող ջուրերուն մէջ ընափիր եւ բազմատեսակ ձուկեր
կ'որսացուին : Թիւնոսը (փալամուտ), թառափը (մէրախն),
թիւնիկն (փակիւմրիւ), աղկերն (սարտէլա) ու անձրուկը
(խամսի) ոչ միայն ծովեղերեայ երկրիներու բնակիչներուն
մննդեան կը նպաստեն, այլ եւ արտածութեան ալ կա-
րեւոր նիւթ մը կը ձեւացնեն :

Առննցմէ զատ Եւրոպական եւ Ասիական Թուրքիոյ
լիճերն ու գետերը կը սլարունակն բազմաթիւ աե-
սակներ :

Տաճկաստանի մէջ արտեստական ձկնարաններու
պէտք տեսնուած չըլլալով՝ ցամաքի վրայ լիճերու եւ
գետերու մէջ, ծովու վրայ ալ բնական ձկնարաններու
մէջ (ծովախորչ, ծալածոց եւալին) առատ ծուկ կ'որսան:

Ասարէն եւ անոր նոման կակզամբթներ կը գտնուին
գլխաւորաբար Սեւ ծովու մէջ Սինոսի եղերքը, եւ
Արշիպեղագոսի մէջ Զանարդը եղերքը, ինչպէս նաեւ
Տարտանելի նեղուցին մէջ : Ամէնէն շատ որսացուած
աեղերն են սակայն Պօսֆօրի մէջ Պէօլիուք լիմանն, Եէ-
նիքէօյ, Արնաւուաքէօյ, եւ Մարմարայի մէջ՝ մասնա-
ւորապէս Սարայ Պուրնու, Գում զափու եւ Եէնի զափու :

Չկնականնը (միտեա) ամէնէն աւելի կը գտնուի Սեւ
ծովու, Մարմարայի եւ Արշիպեղագոսի եղերքները :

Ողորկապատեաններէն խեցգետինը (սթագօս) կը
գտնուի Սեւ ծովու, Արշիպեղագոսի, Մարմարայի եւ
Միջերկրականի մէջ. բայց ամէնէն ընտիր ու նմանը
չգտնուած տեսակը Պօսֆօրի մէջ կ'որսացուի : Մարմա-
րայի կղզիներուն բացերն ալ նոյնպէս ընտիր տեսակ-
ները կը գտնուին :

Խեցեիխանն եւ ուրիշ խեցեմորթներ Սեւ ծովու,
Մարմարայի, Արշիպեղագոսի, Աղրիականի, Միջեր-
կրականի եւ Կարմիր ծովու եղերքները խիստ շատ կը
գտնուին :

Սպունգի որսն ալ կարեւոր զբաղում մը զարձած է այսօր Տաճկաստանի ծովեղերեայ բնակիչներուն համար Քաղաքակիրթ աշխարհին մէջ սպանդին գործածութիւնը ընդհանրանալուն համար վաճառականութիւնն ալ ընդարձակուած է զգալի կերպով : Արդիպեղագոսի ծովեղին ու կղզիներուն առջեւ քաղուած սպանդը իր գերազանց աղնուութեամբ մեծ համբաւ ունի և նախադաս կը համարուի Ամերիկեան սպանդէն՝ որ շատ կը քշուի Եւրոպական հրապարակներու վրայ : Մանաւանդ Հոսոյոսի ու մօտակայ կղզեակներու չուրջը որսացուած սպանդը համբաւաւոր է ամէն տեղ :

Սուրիոց եղերքը (Պէրութ և Սայտա) ինչպէս նաեւ Պէնկազիի և Թարապլուսի ջուրերուն մէջ որսացուած սպանդը նուրբ, կակուզ ու ծակոտին ըլլալուն շատ յարդի է :

Ամփոփում Երկրազործական արտադրութեան. —Վերջապէս, Տաճկաստան գերազանցապէս երկրագործական երկիր մըն է, իր բուսական ու կենդանային ալլազան հարսաւոթիւններով : Օժտուած՝ անհուն, բարձրաբերձ անտառներով, որոնք չինոթիւնն ատազձներու ընափր տեսակները կը մատակարարեն առատորին, Տաճկաստան ունի բերբի և արգաւանդ զաշտեր ու արտեր՝ որոնք կը յարմարին ամէն տեսակ արմաֆքի մշակութեան, բարերեր արյիներ՝ որոնք պատուական և համբաւաւոր զինիներ կ'արտազրեն, բազմաթիւ թթիւններ որոնք շերամաբուծութեան մէջ կարեւոր զեր մը կը խաղան, և ուրիշ ամէն տեսակ ծառանման ու հարաւական մշակութիւններ, որ երկին համբաւոթիւնն զլխաւոր աղբիւները կը ձեւացնեն :

Ոչ նաւազ նշանաւոր է նաեւ Տաճկաստանի կինդանային հարսաւոթեան այլազանութիւնը : Պաճարաբուծութիւնն այսօր զգալի կերպով յառաջդիմած է հո-

դագործութեան հետ : Երկաթուղիներու նորանոր գիծերու չինոթիւնը և վաճառականութեան յառաջդիմութիւնը սկսած են հակազդել երկրագործութեան ամէն ձիւղերուն վրայ :

ՑԱՐՏԱՐԱՐՈՒԹԵԱԾ

Հանքային հարսաւոթեան ծագում առնող ճարտարարութեանները կը կայսնան անցուած մետաղներու պարզ արտահանութեան մէջ :

Հանքածուլյար որ մետաղագործական և մեքենական ճարտարարութեանց էական ու անհրաժեշտ տարրերէն մին է, կը գտնուի Օսմաննեան կայսրութեան շատ մասերուն մէջ, ինչպէս Սլավանիա, Եպիրոս, Թրակիա, Այարն և Լիբանան : Աեւ ծովու եղերքը երէյլի հոնքն է որ կը շահագործուի, և որուն ատրեկան արտադրութիւնը կը հաշուաւի կէս միլիօն թօնէլաթօ :

Պղինձի մասին Տաճկաստան աշխարհի ամենահարուսա երկիրներէն մին կրնայ համարուիլ . զլխաւոր կերտոններն են Արգենի, Կիւմիչչիսանէ, Կիլիկիա, Հաւէպ և Լաթաքիա : Քօնիայի կուսակալութեան մէջ կիրտիր-Կէօլի մօտերը, նոյնպէս էնիկիւրիւի նահանգին մէջ կը գտնուին պղինձի հանքեր : Բայց Տաճկաստանի յաւագոյն պղինձը որ մեծ յարգ ունի Եւրոպայի մէջ և կրնայ մրցլ համբաւաւոր անդիխական պղինձին հետ, կը գտնուի Արգենի-Մատէն, որուն արտադրութիւնները թոքադի մէջ կը ձաւլուին :

Կապարը կը գտնուի Զմիւնիոց և Ամասիոց մէջ, Գասթէմունիի նահանգին ծովեղերեայ մասերուն մէջ, ինչպէս նաեւ Սլվագ, Ատանա և Լիբանան : Իսկ Եւ-

բոլական բաժնին մէջ իւսկիւպ, Սելանիկ, Տրամա եւ
Տիրարեան լերանց սոսրոտը :

Կապարը ընդհանրապէս արծաթի հետ խառն կը ներ-
կայանայ շատ տեղ : Ասիական թուրքիոյ արեւելեան
մասերուն ինչպէս Տրավիզոնի եւ էրզրումի կուսակա-
լութեանց մէջ, Եւրոպական բաժնին մէջ ալ Սլավնիոյ
եւ Սելանիկի կողմերը՝ արծարախառն կապարը առատո-
րէն կը գտնուի . բայց այսօր ամէնէն աւելի շահագոր-
ծուածն է Քէպան-Մատէնի հանքը՝ Մամուրէթ-իւլ-
Ազիզ կուսակալութեան մէջ :

Արծարը ամէնէն աւելի Ասիական թուրքիոյ հրե-
սիսային եւ արեւելեան կողմերը կը գտնուի : Այսօր շա-
հագործութեան մէջ եղածներն են Պէրէքթլի-Մատէն՝
Պուլկար-Տաղի մօտ (Քօնիսի նահանգին մէջ), Կիւմիշ-
խանէի հանքը, Քէպան-Մատէն, Տէնէք-Մատէն (Լի-
Կիւրիի կուսակալութեան մէջ) եւ Հաճիքէօյ-Մատէնի
(Ամասիոյ մէջ) :

Տաճկաստանի հանքերուն մէջ ամէնէն առատն է
յրում : Մինչեւ ցարդ գանուած քրօմի հանքերուն թիւը
100ը կ'անցնի, եւ ոսկայն անոնք որ ծովեղբէն հեռու
են, չեն կրցած շահագործութիւն փոխագրութեան ծախ-
քերու շատութենին : Վերջին տարիներուն մէջ մանա-
ւանդ՝ Քրօմի հանքին ամէն կողմ մեծ քանակութեամբ
գտնուելուն եւ արտածուելուն հետևութեամբ՝ Եւրո-
պայի հրապարակին վրայ առաջուան յարզը չէ մնացած :
Այսօր իրենց հարստութեան ու կարեւորութեան համար
շահագործուած քրօմի հանքերը կը գտնուին Խիւտավէն-
տիկեարի կուսակալութեան մէջ :

Տաճկաստանի քրօմը Եւրոպական հրապարակներու
վրայ՝ ուրիշ երկիրներու արտագրութենէն նախամեծար
համարուած է :

Ծարիրը առատ է նոյնպէս Ասիական թուրքիոյ մէջ:

Նշանաւոր են կօսէմիշի մօտ ձինլի-Ռայախի հանքերը ,
որոնք կը շահագործուին բաժնութերու ընկերութեան
մը կողմէ եւ որոնց արտագրութիւնները Անդլիա կը
զրկուին :

Պորախիը կը շահագործուիք Քարասիի գաւառին
մէջ՝ Պանարմայէն 12 ժամ հեռու Սուլթան Զայըրը
կոչուած տեղը :

Ասոնցնէ զատ Տաճկաստան ունի նաև երկաթ, առա-
փալդ (Լիբանանու մէջ), մանկանէզ (Սիլվիհիսար, Կիրա-
սոն), ազրորակ, եւալին, որոնցմէ ոմանք թէեւ առատ
են, բայց վաճառականութէս մեծ կարեւորութիւն չունին :

Տաճկաստանի հանքային արտագրութեան մէջ կա-
րեւոր տեղ մը կը գրաւէ ծովախրփուրը (Լիւլէ թաշը ,
Ecume de mer) որ ճարտարագործութեան մէջ մեծ կա-
րեւորութիւն ունի : Այս հանքը կը գտնուի Էսկիչէնիք՝
Քէօթահեաի գաւառին մէջ : Ծալչափրփուրի հանածոն
զրեթէ միմիայն Վիէննա կը զրկուի , ուր այս հանքէն
ծխափող, ծաղկաման եւ ուրիշ զարդանօթներ շինուած-
լով աշխարհի ամէն կողմերը կը զրկուին : Էսկիչէնիքն
տարին 9-10 հազար մատուկ ծալչափրփուր կ'արտածուի ,
որմէ տարեկան 30,000 սոկիի հասոյիթ մը կը ստանայ
Տէրութեան դանձը :

Տաճկաստան ունի նաև պատուական շինուածա-
քարեր : Մարմարայի եղերքը՝ Գափուտազի մօտերը
գտնուած կրանիսի եւ Մարմարինի հանքերը այսօր ամէ-
նէն աւելի կը շահագործուին եւ իրենց արտագրութիւն-
ները մինչեւ Եւրոպա ալ կը զրկուին :

Կարեւոր են նաև Տարտանէլի եւ Այվալզի մօ-
տերը զանուած կրանիսի եւ երկանի հանքերը :

Երկանի հարուստ հանքեր կան նաև Բրիոթինայի
գաւառին մէջ՝ Միթրովլիցաի շրջակաները :

Տաճկաստան հարուստ է նաև աղահանելերու մասին ,

որոնց արտադրութիւնը՝ ներքին սպառման լիուլի բաւ-
ելէ յետոյ մեծ քանակութեամբ ալ արտածութեան ա-
սարկայ եղած է :

Նշանաւոր են մահաւանդ Այալնի կուսակալութեան
մէջ Ֆօչայի աղահանքերը (որ տարին 40 միլիօն օխա
աղ կ'արտազրին) եւ Այլալքի մօսերը գանուած Սար-
մուսադի եւ Պէլլիքի աղահանքերը։ Բաւական կարեւոր
աղահանքեր ունին նաեւ Էնկիրիփի եւ Քօնիայի նա-
հանգները, Էրզրում, Վան, Տիարպէքիր եւ Պաղատա-
խակ Եւրոպական բաժնին մէջ Ահեօլու-Պուրկաղ, Սե-
լանիկ, Վօլօ եւ Գալալա։ Առատ աղ կ'արտազրին
նոյնպէս Պէնկազիփի հանքերը։

Ասլաման թուրքիա՝ մանաւանդ Քօնիայի կուսակալութիւնը, ունի ընդարձակ լիճեր (Թուղ-կէօլ, Ագչէհիր, Պէյ-շէհիր, Էլիբալիր-կէօլ) սրոնցմէ նոյնպէս մեծ քանակութեամբ ազ կը հանուի :

Հանիսյահին ցուրեր՝ ծծմբալին, աղջային ու երկաթալին, խփառ շատ կան Օսմանեան Կայսրութեան այլ եւ այլ մասերուն մէջ . ինչպէս՝ Պրուսա, Էսլիչէիր, Աֆրօն Գրանդիսար, Սանտագլը, եւալզ : Բայց ամէնին աւելի յարդ ու կարեւորութիւն ունեցողներն են Իյնէկէօլի «Զիթլի»ի ջուրը, որմէ տարին 10—15 հազար լիտր կ'արտածուի Եգիպտաս և Երասպա :

Ծամբային ջերմուկներ ունին նաև էրգրումի շրջա-
կաները՝ Խլիճէ, Արծաթի, Աղտարերդ, Եւալին, Պիթ-
լիս ունի անհամար հանքային ջուրեր, երկաթային,
ծծմբային եւ խօսախառն։ Արդէն Պիթլիսի գաւառին
հողը հրարիսային է։ Ունի մարած հրարուխներ, որոնց
վլխաւորն է Նէմրօս լեռը, Թատուանի մօտ։

Տաճկաստանի մէջ բաւական ընդհանրացած են՝ քիմիական ճարապութիւններէն ապակեգործութիւն, բրուտագործութիւն, օճառաշինութիւն, եւայլն :

Բրուտակողք թվեան մասին համբաւաւոր են Տիմո-
թէքա և Կէլլագօլու՛ Եւրապական Թուրքիոյ մէջ . Տար-
աննէլ , Պօլվատին , Քէօթահեա , Պիթլիս , Տիարագէքիր-
Լիբանան և Աէմէն՝ Ասիական բաժնին մէջ :

Օժառաշինութիւնը մեծ մղում ստացած է ձիթահանգերու առաւտոթեան պատճառաւ . իր զլխաւոր կեղրաններն են Զմիւռնիա , Այլալըք , Միափլի , Սասանա , Թարսու , Հալէպ , Դամասկոս և Սիրիկեան Տիգրան :

Եափայի , Երուսաղէմի , Հավելնէի մէջ կը պատրաս-
տուին մշկահոտ օճառներ , որոնք սակայն վաճառակա-
նապէս մեծ կարեւորաւթիւն չունին :

Անուշ հոտերու՝ մասնաւորապէս վարդի լւզի եւ
վարդեջուրի պատրաստութեան մասին համբաւաւոր են
Թրակիա, Սելանիկ եւ Դամասկոս :

Բուսային հարսութենեն ծագող հարտարութ-
ելու կարգը կը դասուին այօթեպանութիւնը կամ մշա-
ղցութիւնը, ձիքահանութիւնը և զինեզործութիւնը :

Աղօրեպանութեան մասին տուածին կարգը կը համարուին Եւրոպական Թուրքիոց մէջ էափինէ, Սելանիկ և Մանասթրր. իսկ Ասիական բաժնին մէջ՝ Այգալըդ, Ինչէզոլ, Պալլքէսէլ, Ամասիա, Քօնիիա և Սուրբա, որոնք ունին ջրաբաշխական կատարելազործուած գործիներ ու շոգեշարժ աղօրիներ: Ասսնցմէ զատ՝ Օսմանեան երկիրներու մեծագոյն մասին մէջ՝ ինչպէս Պուրառուր, Ասալիա, Մէրսին, Սինոպ, Արարկիր, եւալն կը զանուին բաղմաթիւ հոգմաղացքներ ու ջրաղացքներ:

Աղօրիքներէն յետոյ կուզան ձիթահանքերը , որոնք
գլխաւորաբար Միջերկրականի եւ Արշակունյաց կղզի-
ներուն ու ծովեղերեայ երկիրներուն յատուկ են : Ամե-
նէն համբաւաւոր ձէթը կարտադրէ Եանեայի կուսա-

կալութիւնը՝ մամնաւորապէս Բրէքզզա, իսկ Ասիական բաժնին մէջ նշանաւոր են Մուտանիա, Պալքէսէր, Էրտէք եւ Էտրէմիտ, Այլալրդ, Սիլրիհիսար, Էօտէմիտ, Վուռլա, Թիրէ, Ֆօչ, Այտըն, Հոոգոս, Թիս, Միտիլի եւ Սուրիա:

Կէմեյիկի եւ Բաղարքէօփ շրջականերէն համուած ձէթը (թօրպա եազը) զուտ եւ վճիռ ըլլալուն մեծ յարդ եւ համբաւ ունի ամէն կողմ:

Բումէլիի եւ Անատոլուի այլ եւ այլ կողմերը կան նաեւ շիրիկ (ըրլազան եազը) եւ կտաւատի իւզ (օքէզիր եազը) հանելու յատուկ իրդարաններ:

Երկրագործական ճարտարարուեսաներուն մէջ նշանակելի տեղ մը կը գրաւէ զինեգործութիւնը: Գինին կարեւոր քաղաքներու մեծագոյն մասին մէջ թէեւ կը պատրաստուի, բայց Արշիպեղազոսի ու Միջերկրականի ծովեղերքներուն ու կղզիներուն արտադրութիւնները շատ մեծ յարդ ու համբաւ ունին:

Գինիի արտադրութեան զլիսաւոր կերտններն են Եւրոպական Թուրքիոյ մէջ՝ Սևանիկ, Այնորոզ, Էտիրնէ, Կէլիալու, Սիլիվրի: Նշանաւոր են նաեւ Մակեդոնիոյ, մանաւանդ Նիտակուսթայի եւ Թումանիայի դինիները:

Ասիական բաժնին մէջ՝ իրր զլիսաւոր կեդրոն զինեգործութեան՝ համբաւաւոր են նախ Արշիպեղազոսի կղզիները՝ թէնէսօս (որուն տարեկան արտադրութիւնը 18-20 հազար էքտօլիքը կը հաշուար), եւ Թիս ու Միտիլի: Յետոյ՝ էրէնքէօյ, Գարթալ, Տարըճա, Էտրէմիտ, Փաշալիման, Էրտէք (որ ունի 150 հատ գետափոր շամարաններ), եւ Այլալրդ որ ունի 200 հատ զինեգործարան: Անուանի են նաեւ Լիբանանու զինիները:

Օսմանեան Սսիոյ ներքին մասերուն մէջ ալ, ինչ-

պէս էնկիւրիւ, Ամասիա, Էւայլին, առատ եւ ընտիր գինի կարտազութիւն ու աղամազական սպասման կը գործածուի:

Մարմարայի եւ Արշիպեղազոսի ծովեղերքներուն ու կղզիներուն մէջ կը պատրաստուի նաեւ ընափր օղի եւ մասիքա, որուն համբաւաւորներն են Քիոսի, Միտիլիի, Իզմիրի, Այլալրդի, Սումայի, Միւրէֆթէի եւ Կէփոլուի, մէջ պատրաստուածները:

Բումէլիի եւ Անատոլուի շատ տեղերուն մէջ խաղողէն ուուք կը հանեն եւ անով տեսակ տեսակ անուշ շեղէններ, քաղցրաւենիներ ու շարոց կը պատրաստեն, որոնք ներքին առեւտուրի մէջ բաւական կարեւոր դեր մը կը խազան: Մանուսորապէս համբաւաւոր են Էտիրնէի միա հեղլավան, Շամի քաղցրաւենիները եւ կղզիներուն լիմանի, նարնջի ու Պիրկամօսի անուշները:

Բուսալին հարասութենչն ծագով հիւսուածական ճարտարութիւնները տակաւին ոլէտք եղածին չափ յառաջդիմութիւն ցոյց չեն տար: Տաճկաստանի արտադրած բամպակը, վուշն ու կանեփը աւելի արտածութեան նիւթեր են: Երկրին մէջ շատ քիչ մաս մը միայն կը բանուի:

Բամպակեղէն հիւսուածներու համար առաջին կարգը կրնան դասուիլ Մուսուլի եւ Հալէպի նահանգները Ասուփական բաժնին մէջ, եւ Էտիրնէի ու Սևանիկի նահանգները՝ Եւրոպական Թուրքիոյ մէջ: Ասոնցմէ յետոյ կուգան Իզմիր, Ատանա, Տիարակէքիր, Մէրտին, Պիթիս, Սէկերդ, Վան, Էրզրում, Խարբերդ, Ակն, Թօքադ, Ամասիա, Արվազ, Մարտուան, Գամթէմունի, Էւայլին, որոնց տեղական զարծուածները չեն կրնար մրցիլ Եւրոպական ճարտարարուեստին կատարելագործուածնեանց հետ:

Կինդանալին հարսութենեն ծագող հարտարարութեներ . — Իրը զերազանցապէս երկրագործական երկիր , բնականաբար չատ աւելի զարգացած է այս ճիւղին մէջ Տաճկաստան , մանաւանդ իր այն մասերն որ ունին ընտիր արօտատեղիներ եւ ուր աւելի յառաջդիմած է պաճարաբուծութիւնը , ինչպէս Եանեայի , Քօսօվայի եւ Էտիրնէի նահանգները՝ Եւրոպական Թուրքիոյ մէջ , Իզմիտի դաւառն ու Խիւտալէնտիկեարի , Այսրնի , Քօնիայի , Էնկիւրիկի , Սըլաղի , Տրապիզոնի , Մամուրէթ-իւլ-Ազիզի եւ Միջազեաքի նահանգները՝ Ասիական Տաճկաստանի մէջ :

Սյու երկիրներուն մէջ կովկասն , ոչխարներուն ու այծերուն կաթէն կը պատրաստեն ընտիր կարագ ու պաշնիր , որոնք ներքին վաճառականութեան մէջ կարեւոր անդ մը կը գրաւեն :

Տրապիզոնի կուսակալութեան Սիւրմէնէ , Մաճիդա , Ազէտապատ եւ Օֆ գիւղաքաղաքներուն մէջ մասնաւած կովկասն կաթէն յառաջ եկած ընտիր կարագն ու Էտիրնէի , Թէքիրապի , Քըրք Քիլիսէի եւ Տիմոթէքապի մէջ շինուած պատուական պանիրն (թուլում բէյնիրի) , ինչպէս նաև Իզմիտի պաշած պանիրն (սալամուրա բէյնիրի) եւ Էրզինկիանի ու Կիւմիւշխանէի շրջակաները պատրաստուած ընտիր եւ պատուական պանիրը կաթնապործութեան արուեստն կարեւոր արտադրութիւններէն կը համարուին :

Մէծ համրաւ ունին նախապէս Էրզրումի ; Էնկիւրի , Գասթէմունիի եւ մանաւանդ Կեսարիոյ մէջ շինուած ընտիր ապուխտներն ու Էտիրնէի սպանգանցներուն մէջ մորթուած եղներուն լեզուներէն շինուած ապուխտը (որդիր տիլի բասմը բարձրացած) որոնք Պոլիս եւ ուրիշ տեղեր կ'արտածուին :

Խաղախորդաբանները (առավագխանէ) բաղմաթիւ

են բովանդակի Կայորութեան մէջ , մանաւանդ Այվալը , Տէնիզլի , Էսկիչէնիր , Գասթէմունի , Էնկիւրիւ , Թօքադ , Վան , Պաղտատ , Սուրիա , Ինչպէս նաև Միջերկրականի կղզիներէն Քիոս եւ Միտիլլի :

Զկնկիթն եւ աղած ձուկը ծովեզերեայ բնակիչներու զլաւարութիւնն ըլլալով մեծ կարեւորութիւն ունին իրը արտածութեան նիւթ : Մարմարակի ծովեզերեայ քաղաքները (Քիմրա , Էրակլ , Պանարմա , Կէլիպոլու , Տարտանէլ) եւ Սեւ ծովու նաւահանգիստները , մասնաւորապէս Սինոպ եւ Տրապիզոն՝ աղած ձուկի բաւարական արտածութիւն ունին : Վանայ ծովուն մէջ՝ մայիս եւ յունիս ամիսներուն մեծ քանակութեամբ տասիս (րինկա պալլզը) կ'որսան , զոր ձմեռուան համար կ'աղեն եւ շրջականները , մինչեւ իսկ Պարսկաստան կը գրկեն :

Ելբագական Թուրքիոյ մէջ՝ Բրէվէզայի , Շքոտրայի եւ Օխրիտայի լիճներէն հանուած ձուկերն ալ աղուելով կը պահուին եւ ներքին առեւտուրի մէջ բաւարակն կարեւորութիւն ունին :

Սեւ ծովու նաւահանգիստները , մասնաւորապէս Սինոպ , Տրապիզոն , Օբատու եւ Բիզէ Կ'արտածեն նաև բաւարական քանակութեամբ ձկան իւղ :

Ցիշասակութեան արժանի է նոյնապէս Պաֆրայի սեւ խավեարը որ չատ ընտիր անսակէ է եւ կրնայ մրցիւ Ռուսականին հետ :

Մանդական ճարտարութեանց կրնանք միացնելնաև բուրդի եւ մետաքսի հիւսուածական ճարտարութիւնները , որոնք վերջին մէկ քանի տարիներուն մէջ մասնաւանդ զդալի յառաջդիմութիւն ցոյց առւած են Հնորհներէ կատարելազործուած մեթոսներու :

Ցիշասակութեան արժանի են քիչ ժամանակուան մէջ մեծ համրաւ չահող այն զործուածներն , զորս ար-

տաղրած են ու կ'արտազրեն իդմիտի գաւառին մէջ բացուած Պետական գործարանները, ինչպէս Հէրէքէի Մետաքսեղէնի գործարանը, Արտանպէկի չուխայի գործարանը, բանակին պէտքերը հայթայթելու համար, Կէյաղէի ֆէսի գործարանը նոյնպէս Կայսերական բանակին պէտք եղած ֆէսն հայթայթելու համար, ինչպէս նաև Պարտիզակի չուխայի գործարանը, նմանապէս կառավարութեան յատուկ :

Սոսնցմէ զատ Կայսերական նահանգներուն մեծ մասին մէջ բաւական դարձացած է բուրդի հիւսուածական ճարտարութիւնը : Սելանիկի բրդեղէն գործուածները, Էնկիւրիւի համբաւուոր թիֆթիկ սօվերն ու շալերը, Կիւրիւնի ընտիր շալերը, Բումելիի շայագներն ու Պալլքէսիրի, Էրդրումի, Քօնիայի տողաները ներքին սպառման մէջ մեծ կարեւորութիւն ունին :

Գլխաւոր քաղաքներու բնակիչներուն զգեստվողէն-ներն ընդհանրապէս եւրոպական արտադրութիւն են, բայց զիւղերու եւ տեաններու բնակիչները իրենց տան մէջ հիւսուծ ու գործած ապաները, շայագներն ու շապիկցու կատաները կը գործածեն :

Զեռնոց եւ զուլուց շինելու յատուկ գործարաններ չկան թէեւ, բայց ձմբան ցուրաէն պատապարուելու համար ներքին կարեւոր քաղաքներու (Էնկիւրիւ, Սըլվադ, Վան, Խեայլն) մէջ շինուած բուրդէ ձեռնոցներն ու գուղաքները ներքին սպառման մէջ մեծ կարեւորութիւն ունին :

Զգեստեղէնի համար ամէն տեսակ բրդեղէն կերպառներ (չուխա, գաղմիր, գասմօր, շայագ, Խեայլն) շինելու դիտաւորութեամբ վերջերս Գարտամուսալի մէջ բացուած գործարանին արտադրութիւններն իրենց աղնուութեան ու աժանութեան կողմէ մեծ յարգ կը գըտնեն տակաւ ամէն կողմէ :

Տաճկաստան — չնորհիւ իր կիմային որ այնքան նպաստաւոր է թթենիներու մշակութեան — շերամաբուցութեան մէջ ալ ասածին կարգերէն մին գրաւելու սահմանուած կրկիր մըն է :

Շերամաբուծութիւնը որ այնքան մեծ գեր կը խաղայ իր կարեւորութեամբ՝ շատ հին ժամանակներէ ի վեր տարածուած է Տաճկաստանի մէջ եւ տեղացի ժողովուրդին գլխաւոր զրագումներէն մին եղած է :

Վերջին ժամանակներս երկրագործութեան այս կարեւորագոյն ճիւղին կատարելագործութեան միջոցները մեր երկրին մէջ ալ նկատող թիւան տանուած են եւ այսօր շերամաբուծութիւնը մեծապէս զարգացած է Կայսերական նահանգներու մեծ մասին մէջ, որոնցմէ զիւղաւորներն են Խափինէ, Սելանիկ, Մանասիրր (Եւրոպական Թուրքիա). Քարասի, Խիւտավէնտիկեար, Այալն, Սուրիա, Միջագեաք (Ասիական Թուրքիա): Նշանաւոր է մասնաւորապէս Պրուսա իր 40 մանարաններով՝ Փունսական սճալ շինուած, որոնք ամէն տարի 5-6 հարիւր հազար հակէն աւելի մասնուած մետաքս կը մատակարարեն եւրոպացի: Պրուսայէ յետոյ կուգան Պիլէճիկ եւ Քէօփիլի ուր կան նոյնպէս բազմաթիւ մանարաններ Համբաւաւոր է նաև Տէնիզիլի իր 150 գործարաններով, ուր կը շինուին բաղնիքի ձորձեր, մետաքսեղէն կերպառներ, սոկի եւ արձաթ թելերով հիւսուած մետաքսեղէններ, եւայլն :

Շերամաբուծական ասածին կարգի երկիր մըն է Լիբանան: Զույլ գիւղագալաքին մետաքս եւ սկիեթել հիւսուածները շատ յարդի են իրը կահաւորման կերպառներ :

Համբաւաւոր են նաև Սուրիայ, Հալէպի եւ Լիբանանու մէջ հիւսուած վարագուրցու եւ տէօչէմէցու մետաքսեղէն կերպառները, լանջակապերն ու քէֆիչները եւ կատաները եւայլն :

Տաճկաստանի ամէնէն ծաղկած ճարտարարուենու ներէն մին է գորգազործորիւնը , որուն զիստու որ կեզրոններն են կէօրա՛ն , Տէմիքճի , Քուլու , Իզմիք (Այտաբնի նահանգ) , Աւշադ եւ Քէօթահեա (իմիսամլէնախիկերի կուսակալութիւն) եւ կեսարիա : Այս քաղաքներուն մէջ զանուած բաղմաթիւ գործառելաններուն վրայ կը բանուին սքանչելի գորգեր ու կապերաններ , որոնց հետ չեն կրնար մրցիլ և բարպական ասրազագործութեան ամէնէն ընտիր արտազրութիւններն անդամ :

Տէմիքճի կապերաններն անուանի են իրենց հաստու խիս գործուածքավ : Տարեկան արտազրութիւնը կը հաշուածի 45,000 մէջ զր քասակուուի : Տէմիքճի ունի 400էն աւելի աշխատանոցներ :

Կէօրա՛նի ու ձնամէնները շտայարդ ու համբաւ ունին ամէն կողմ , մանուանն Ամերիկա , որ Եւրոպական միւս աէրութիւններն աւելի կը զնէ այս անսակէն : Կէօրա՛նի կապերաններուն ստէջը բամզակէ է , իսկ թեզանը բուրգէ , որուն անսակը ստրակական բուրգին անսակէն զերիվեր է .

Ուշագի մէջ զրեթէ ամէն տուն գործառելան մը ունի , որուն վրայ կը գործուին սքանչելի յիշիմներ ու ահճատէններ : Ֆունաս ասսաւելազոլիս Աւշագի գորգերուն ազնիւ եւ միջին ահսակները կը զնէ , մինչ Վիժնա սոյն գորգերուն ստրին անսակները կ'ասնէ :

Վերջերս Քուլայի մէջ ալ սկսան գործել ազնիւ ու հասարակ գորգեր , որոնք միծ ընդունելութիւն կը դըտնեն ամէն կողմ , մանաւոնն Անգլիա եւ Ամերիկա :

Ասոնցմէ յետոյ կուգան Քըր-Շէքիր , Մուճար , Արգազ , Լատիք , Քէցէ , Քօնիս և այլն , որոնք համբաւաւոր են իրենց Քիպիմներով , Ճիճիմներով ու Մէճճաւելներով :

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հալուրդակցութեան միջցներ . — Ինչպէս իր ընական անթիւ հարստութիւններով Տաճկաստան կրնայ ճարտարարուեստական գեղեցիկ ապաղայ մը ունենալ , միւս կողմէ վաճառականական անսակէտով ալ կրնայ ամէնէն աւելի օժտուած երկիրներու կարգը զատուիլ , իր աշխարհագրական զիրքին ընծայած եղական առաւելութիւններով :

Օսմաննեան կայսրութիւնը ասրածուած ըլլալով հին Սչխարմի ճիշդ կեդրանը՝ Սիւ ծովան միջցցաւ կը հաղորդակցի Ռուսիայ եւ Դանարեան իշխանութեանց հետ : Մարմարայի , Արշիպելագոսի , Միջերկրականի եւ Աղրիկանի միջցցաւ յարաբերութեան մէջ է ամբողջ հաւրուային Եւրոպայի եւ հիւսիսային Ափրիկէի հետ եւ բնական միջնորդի զեր կը կատարէ Սսիոյ ու Եւրոպայի միջեւ : Պարսկային ծոցին միջցցաւ յարաբերութիւն ունի Հնգկաստանի եւ հարաւային ու արեւելեան Սսիոյ հետ . Սակ Սուեցի ջրանցքով կը հաղորդակցի արեւելեան Ափրիկէի , նոյնպէս եւ հարաւային Սսիոյ հետ :

Այս բոլոր երկիրներուն մէջ , զորս Միջերկրականը կը թրծէ , Տաճկաստան ամէնէն ընդարձակ ծովափունք ունեցող երկիրն է եւ այս պատճառաւ խոկ ծովն է իր առեւտուրին զերազանց ձամբան : Եւ որովհեան ծովալ փոխադրութիւնները նուազ սուզ Կըլլան ընդհանրապէս , եղերքէ եղերք նաւարկութիւնը (cabotage) զերակիւ կարեւորութիւն ունեցող միջոցն է հաղորդակցութեան :

Այսու հանգերձ ցամաքային ճամբաններ տակաւ սկսած են շամանալ կայսրութեան ամէն մասերուն մէջ . մանաւանդ Եւրոպական թուրքիա ունի ներքին կանու

նաւոր ուղիներ , որոնք առաջները տեղական տօնաւագաճաներու համար երկաթուղիի չափ կարեւորութիւն ունէին : Այսօր միայն Եւրոպական Թուրքիոյ մէջ 16,000 քիլոմէդր կը հաշուածի կառուղիներուն ու թղթատարական ձամբաներու երկայնութիւնը :

Երկարուղիներն այսօր 1550 քիլոմէդր երկայնութիւն ունին միայն Եւրոպական Թուրքիոյ մէջ , և կը բաժնուին երկու գլխաւոր ճիւղերու , որոնց մին կ . Պոլսէն եւ միւսն ալ Սելանիկէն մեկնելավ երկուքն ալ կը միանան Եւրոպական գիծերուն :

Սելանիկէն ուրիշ գիծ մըն ալ կայ որ Մանասիլը կը յանդի : Կ . Պոլս Սելանիկի հեա կազուած է երկաթուղիով :

Ասիական Թուրքիոյ մէջ քիչ ժամանակի միջոցին յառաջ տարուած երկաթուղիներուն երկայնութիւնն է 2850 քիլոմէդր : Ամէնէն երկայն ու կարեւոր գիծն է Հայտար Բաշայէն մինչեւ Թօնիա և միւս կողմէ մինչեւ Էնկիւրիւ ձգուած գիծը , որուն մինչեւ Պաղտաս երկարածման ծրագրը իրագործուելու վրայ է :

Այս բոլոր գիծերէն զատ Ասիական Թուրքիա ունի մանր մունր գիծեր ալ , ինչպէս Մուսանիա-Պրուսիի նեղ գիծը , Մէրսին-Ատանայի երկաթուղին , Պէրութ-Հօրանի երկաթուղին , ու Եաֆա-Երուսաղէմի գիծը :

Օսմանեան Կայսրութեան բնական աշխարհագրութիւնը երբ աչքի առջեւ ունենանք , կը տեսնենք որ ուղղակի կառավարուած Կայսերական նահանգներուն մէջ նաւարկելի գետեր շատ քիչ կան և անոնց ալ նաւարկելի մասերը պէտք եղածին չափ լայն չեն :

Ասիական Թուրքիոյ մէջ Եփրատ ու Տիգրիս նաւարկութեան սքանչելի ձամբայ մը կը բանան Երզրումէն մինչեւ Պատրա . բայց հազիւ թէ մէկ քանի հարիւր

նաւակիներ ու նաւեր կ'երթեւեկին այս երկու գետերուն վրայ , որոնք Սեւ ծովին մինչեւ Պարսկային ծոց , Ասոյ առեւտրական գեղեցկագոյն ուղիներէն մին կը գծեն :

Եփրատ — իր հակումովը դէպ ի Միջերկրական բնական ձամբան է նաև Պարսկային ծոցին ու Խոկէնաէրունի ծովաւորութիւնի միջեւ , և 160 քիլոմէդրի հեռաւորութիւն մը միայն կ'ունենայ Խոկէնաէրունէն , երբ կը հասնի Պիրէճիք Ասկէ զատ , Եփրատի հովիալը բնական ձամբան է կարաւաններուն՝ լնդ մէջ Պարսկային ծոցին (ուր կը դրէճ Հնդկաստան իր ապրանքները) և Միջերկրական ծովաւն :

Եփրատի երկայնութիւնը 2400 մղոնի չափ է , և յորդելու ժամանակները շատ տեղ իր լայնքը 1200 կանգունի կը մօտենայ թէեւ , բայց խորութիւնը 7 կանգունը չանցնիր : Գետին այսպէս յորդած ատենը մինչեւ Պիրէճիկի մօտերը շոգենաւեր կուզան Պաղտատէն ու Պատրայէն :

Տիգրիսի վրայ ալ «Բէլէկ» կոչուած տիկերու միջոցաւ Տիգրագէթիրէն մինչեւ Մուսուլ և անկէ ալ մինչեւ Պաղտատի փոխագրութիւններ կը կատարուին : Եփրատ և Տիգրիսի միացմանը կը կազմուի Շաղ-ել-Արայ , որ 180 մղոն երկայնութեամբ զետին մը ոռոգելէ յետոյ կը թափի Պարայի ծոցը : Պատրայի և Պաղտատի միկը թափի Պարայի ծոցը : Պատրայի և Պաղտատի միկը թափի Պարայի ծոցը :

Ինչպէս ամէն քաղաքակիրթ երկիրներու , նոյնպէս Տաճկառանի մէջ թղթակցութեան միջոցներու հաստատումն ու գործադրութիւնը Կայսերական կառավարութեան վերապահուած է և նեռազրական կամ թըլթատորական վարչութեան իրաւունքն է նամակատուններ կամ հեռագրատուններ հիմնել ծովեկերեայ քաղաքներու մէջ և կամ ներսերը , աեղական պէտքել ուն համեմատ :

Օսմանեան Կայսրութիւնը՝ որ կը մասնակցի Թղթաշարական Միութեան, ունի 1600ի չափ նամակատուններ ու հեռագրատուններ որոնց միջոցաւ մէկ տարուան մէջ վոխանակուած նամակներուն ու հեռագիրներուն թիւը կը հասնի 20-25 միլիօնի, եւ ընդհանուր հասոյթն ալ 75-80 միլիօն զրուց կը հաշուռուի:

Ներքին քաղաքներու թղթատարութիւնը կը կատարուի երկաթուղիսով, կառքով կամ զբասառով (ձի, երրեմն ալ ուղա) եւ ի հարկին երաշխաւորեալ սուրհանգակներու միջոցաւ: Իսկ ծովեղերեայ քաղաքներու նամակները շոգենաւով կը զրկուին: Կայսրութեան մայրաքաղաքը եւ մէկ քանի վաճառաշահ քաղաքները Օսմանեան Նամակատուններէ զառ ունին ֆունտական, Գերմանական, Աւստրիական, Անգլիական եւ Ռուսական Նամակատուններ:

Այսօր բավանդակ Տաճկաստանի մէջ հաստատուած հեռագրական զիժերուն երկայնութիւնն է իրը 33,000 քիլոմէտր, որուն 600 քիլոմէտրը միայն ընդծովեայ թեւերէ կը բազկանայ: Կ. Պոլիս ամն է ուր կը յանզի (Պոսֆորէն անցնելով): Հնդկաստանի զիժը որ Ասիական թուրքիան կը կարէ Պարայէն մեկնելով:

Ուրիշ ընդովեայ թեւ մէն ալ Կ. Պոլիսը կը միացնէ Օտեռայի:

Աւրաքին վաճառականութիւն. — Տաճկաստանի վաճառականութիւնը վերջին տարիներու մէջ մասնաւանդ զգալի կերպով զարգացած է, քանի որ երկրագործութիւնը նորանոր քայլեր առած է, եւ հազորգակցութեան միջոցները շացած են Կայսրութեան այլ եւ այլ մասերուն մէջ:

Այս ընդարձակ Կայսրութիւնը կանոնաւոր յարաբերութեան մէջ է վաճառակաշական կարեւոր հրապա-


րակներու հետ: Միջերկրականի արևելեան մասին միջոցաւ Արքալեզապսոսի, ինչպէս նաև Սեւ ծովու եւ Կարմիր ծովու մուաքին կը տիրապեսէ: Պարսկային ծոցին միջոցաւ ուրիշ ամէն երկիրներէ աւելի կը մօտենայ Հնդկաստանի եւ Ծայրագոյն Սրբեւելքի, որոնք իրեն համար վաճառականութեան նորանոր շահասաններ կրնան ըլլալ: Միջերկրականի ծովեղերքը որ Միջին Դարու մէջ ծովալին վաճառականութեան կեզրանն էր, այսօր ալ կը պարունակէ աշխարհի ասեւարական կարեւոր հրապարակները, որոնք հեռաւոր ծովեղերքներու վաճառաշահ քաղաքներան հետ կը հազորգակցին կանոնաւորապէս:

Բավանդակ Կայսրութեան արագաքն վաճառականութիւնը կը բարձրանայ 40 միլիօն օսմաննեան ոոկիի, որուն 25 միլիօնը Տաճկաստան ներածուած ապրանքներու փոխարժէքը կը ներկայացնէ:

Ներածութիւնը կը կայտնայ զիժաւորաբար տարագագործական առարկաներու մէջ: Տաճկաստան երապական երկիրներէ կը սասնայ ամէն տեսակ հիւսուածեղէն բարդէ, բարիզեն ապրանքի, ինչպէս նաև ամէն տեսակ զգեստակէն եւ ճերմակեղէն:

Ասոնցմէ զառ Տաճկաստան օսմար երկիրներէ կը զնէ զաղթաբերք, ոգելից լուսկելիք, փերեզակի ապրանք, բարիզեն ապրանք, կանեղէն, զարդի նիւթեր, երկաթեղէն (զանակ, զէնք, պաղպատ), մեքենայ, բանաւած մետաղներ, հանքածուխ, եւայլն:

Առոր հակասակ իր արաստութիւնը կը պարունակէ մասնաւանդ երկու կարգ ապրանքներ սպառելի նիւթեր եւ ճարապարտ եսաներու համար անհրաժեշտ եղալ նախական նիւթեր: Արգարեւ, Տաճկաստան իր երկրագործական անթիւ հարաստութիւններով լիւով բաւելէ յետոյ իր Ճուղպրզին, մեծ քանակութեամբ կ'արտածէ



Պատմութեան լուսագր

ամէն տեսակ սպառելի նիւթեր , արժափք , ընդեղէն ,
արջառ , մրգեղէն , սրճք վաճառութիւնը մեծ մասը
կը ներկայացնեն , եւ յետոյ չամիչ , զինի , ձէթ , ծխա-
խոս , խահուէ , մեղք , եւայն :

Գալով նախնական նիւթերուն՝ օտար երկիրներէն ամէնէն աւելի վնասուածներն են հիւսելի նիւթերը (մետաքս, բուրդ, բամբակ, թէփթէկ), ատազ, մորթ, կաշի, մարմարին, սպանգ, նիւթեր, իւղալից հունակեր, աֆիօն, զեղօրացք, ևալին:

Տաճկաստանի վաճառականութեան մէջ առաջին
կարգը կը գրաւ է Անդլիա, որ մեզի կը ծախէ ամէն առ-
սակ բամպակեղէն հիւսուածներ, զերձան, ասուեղէն,
գաղթաբերք, աղած միտ, հանքածուխ, երկաթեղէն
(գանակ, զէնք, մանր երկաթեղէններ, մեղքնայ). Նա-
ևր, եւայցն : Փօխազարձարպար մինչ, կը գնէ նախնական
նիւթեր՝ բամպակ, բարզ, թիֆթիկ, իւղալից հանտեր,
ափիօն, ծխախոս, խաճուէ, արմատք, ձէթ, զիսի,
մրգեղէն, թուզ եւ չափչ :

Ֆռունսա կը զրիէ մեզ իր մեաաքսեղէնները, կահեցնները, զարդի նիւթերը, բալիղնեան ապրանքները, տառեղէնները, երկաթիղէնները, զալթացին բերքերը, աղած միս, գինի, մամ, եւ այլն. բայց միւս կողմէ կը ստանայ մենէ նախնական նիւթեր (ինչպէս մեաաքս, բուրդ), ափիօն, կոճիթ, ներկի նիւթեր, մորթ, աշտաղձ, մարմարինե, ծխախոտ, արմատիք, ձէթ եւ զինի:

Աւոտրիա — երկրագործական ու միանգամայն ձարձարաբուեստական երկիր՝ բառական կարիքոր յարաբերութիւններ ունի Տաճկտոտանի հետ, որ կ'սահմաց անկէ գաղթային բերքեր, բամպակեզզէն, ասուեզէն, մոմ (Թրիէսզէն), մետաքսոզէն, կան կարասի, կաչեզէն եւալին, փոխարէն զրկելով անոր բամպակ, մետաքս,

ագիօն , ծխախոռ , արմափիք , ձէթ եւ մրգեղէն (Քօօս-
վայի , Սևլանիկի եւ Մահասիլըրի կուսակալութիւն-
ներէն) :

Իտալիոյ հետ ալ բաւական բանուկ է Տաճկաստանի
վաճառականութիւնը : Տաճկաստան Իտալիոյ կը ծախէ
բամպակ , բորդ , իւզալից հունտեր , սպունգ , մորթ ,
առաղձ , արմափք :

Առանցմէ յետոյ կուզան Ռուսիա, Գերմանիա, Յունաստան, Ռումանիա, Հոլանդա, Պելճիգա և Ամերիկա:

Ուռափա կը ստանայ Տաճկաստանէն բամպակ, ծխա-

խոս , ձեր եւ զինի , որտեղ վուստրէս վը դրվ զլառաւու բարար բէթուլ , արմափք , ալիւր , խավեար , գորդ եւ լն .

ჭირობაშესავალი კუ მთავრება გამოიყენება და მაგრა მს ქცენას, მთავარებელის, ერთოւთხელის სა კან ტარასი, ფინარეზის ყრებელოვანით ანიორ აფხისი, უნერები უსტებერ, არ-ძლობრივ, ბეჭედ, განის სა მრყელების:

ՊԵՏՈՒԹՅԵՆ կը ստանայ Տաճկաստան սարսավագիութական արտադրութիւններ (մանիքաթուրա), ասուելուն, մանած, հիւսածոյ, մեքենայ, երկաթեղին եւ ասղակեղին, փոխարէն զրկելով բամպակ, բուրդ, ծխախոտ, ձեթ, զինի, մրցեղին եւայլն :

Հօրանաս կը դրէի մեզի դապթաբերք, ծխախոս
(աւերեւ), քիւախոս, կարսոց, սահնիր եւայլն: Փոխա-
րէն մենէ կը գնէ ափիօն, զեղօրէնիր եւ ներկի նիւթեր:

Տաճկառան Առաջարկային զե սահմայ արշուք
արջառ , և ւայլ :

Վահառականական նաւերու թիւը . — Նաւահանգիստներ . — Օսմանեան զրօցին տակ զանուող վաճառականական նաւերուն թիւը կը համփ 600ի , 100,000 տակառաչափ տարսողութեամբ , որոնց մէջ կան 40 չորսենակը՝ 25,000 տակառաչափ տարսողութիւն անհյող :

Մնացածներն ամբողջ առագաստանաւեր են, որոնց ընդհանությունը 75,000 տակառաչափի կը մօտենայ :

Շոգինաւային զլիաւոր ընկերութիւններն են Մախոսուէ, Էմէ (Egée), Արշիպէլ (Archipel), Ճօլի-Վիկթորիա և ուրիշ ընկերութիւններ. այսու հանդերձ վաճառականութիւնը կը կատարուի մանաւանդ օտար շոգինաւերու մէջոցաւ. (Ֆուանսական, Անգլիական, Յունական, Աւստրիական, Ռուսական, Իտալական, Բուլղարական, Խելլին) : Վաճառքներու փոխազդութեան մէջ կարեւոր բաժին մը ունին Յունական առաջասահաւերը : Մասնաւորապէս Արշիպեղազոսի կղզիներն Օսմաննեան հպատակ Հելլէնները մեծ դեր կը խաղան Արշիպեղազոսի առաջնուայ նաւարկութեան (cabotage) մէջ :

Կայսրութեան ընդհանությ տուրեւաոին մէջ ծովային վաճառականութեան բաժինը շատ մեծ է : Ամէն տեղ առաւելակալութիւն ունի Բրիտանական դրօշը, որմէ յետոյ կուգան Աւստրիա, Ֆուանս, Յունաստան, Ռուսիա, Իտալիա, Ռումանիա, Խելլին :

Աւստրօ-Հունգարական Լոյտի ընկերութեան, Ֆուանսական Մէսամելոի-Մարիթիմ, Ֆուէսինէ և Բաքէ ընկերութեանց, Իտալական Ֆլորիո-Ռուսապթինո և ուրիշ ընկերութեանց, Օտենայի Ռուսական ընկերութեան, Եգիպտական Խաբիլիյէ ընկերութեան, Անգլիական Քիւնարտ ընկերութեան և Անգլիացի նաւայարդարներու, ինչպէս նաև Յունական ընկերութեանց շոգինաւեր կ'երթեւեկին կանոնաւորապէս Օսմաննեան ծովեղերքներու զլիաւոր նաւահանգիստները : Կ. Պոլիս, Իգմիր, Սելանիկ ամէն օր այս ընկերութեանց շոգինաւերէն մէկ քանիները կ'ընդունին իրենց նաւահանգիստներուն մէջ :

Օսմաննեան ընդարձակ Կալիրութիւնը Հին Աշխարհի կարեւոր ծովելրուն վրայ ընդարձակ եղերքներ ունենաւ լով, կրնանք հետեւեալ հօմն առեւարական բաժանումները զանազաննել . 1. Սեւ ծովու, 2. Մարմարայի, 3. Արշիպեղազոսի ; 4. Միջերկրականի, 5. Ազրիականի, 6. Կարմիր ծովու և 7. Պարսկային ծոցի : Այս հօմն ծովելրուն վրայ Տաճկաստան ունի շատ կարեւոր նաւահանգիստներ, որոնք Կայսրութիւնն թէ ներքին և թէ արտաքին վաճառականութեան մէջ մեծ զեր կը կատարեն, յարաբերութիւն ունենալով առեւարական նշանաւոր հրապարակներու հետ :

4. Աեւ ծովու նաւահանգիստներ.

Տրապիզոն համանուն հուսակալութեան զլիաւոր քաղաքն է և Ասիական Թուրքիոյ ամէնէն բանուկ նաւահանգիստը՝ Իզմիրէն յետոյ : Նաւակայցքը շատ բաց ըլլալուն՝ նաւերը փոխորկի ատեն՝ նաւահանգիստն մէկ ժամ հեռու գէպի արեւմուաք՝ Բլազմանա կոչուած պղտիկ ծովախորչին մէջ Կապաստանին :

Տրապիզոնի Պարսկաստանի, Կովկասի և Ասիական Թուրքիոյ հիւսիս-արեւելեան մասին միջեւ անմաքս փախազրութեան (Խոանզիկ) զլիաւոր վաճառստավին է : Եւ սական Թիֆլիզի երկաթուղիին մինչեւ Պաթում իջնելէն ի վեր, Պարսկաստանին Տրապիզոնի ճամբար ըրած թանգիգը նուազած է քիչ մը :

Տրապիզոն կ'արտածէ զլիաւորարար արմատիք, եղիպատրուն, կտաւատ, լուրիս, կաղին, ընկայլ և ուրիշ մրգեղէններ, արջառ, բուրդ, թիֆթիկ, այծի և ոչխարի մորթ, խոզ, կարագ, գեղին մեղրամու, ատաղձ, խէժ և ուեփին, զիսար, ծխախոտ և թէմպէքի, ձկան իւղ, Խելլին :

Սահման Տրապիզոնէն յետոց Անտառուուի հիւսիսացին ծովիկին առևեարական գլխաւոր հրապարակը եւ երկշրբն ներսերէն եկած թերքերոն ու ներսերը զրիտ ելիք օտար արտադրութեանց ընդհանուր միմերանցն է։ Աւզգակի յարաբերութիւններ ունի ներքին դաւասներու, մասնաւորապէս Սըլվագի, Մամուրէթ-իւլ-Աղիզի եւ Տիարագէքիցի հետ։

Արտածութեան գլխաւոր նիւթերն են՝ չգործուած բուրդ, այծի եւ աշխարի մորթ, Ամասիայի եւ Զարշամպայի մետաքո ու բժան (cocon), զեղին մեղրամուր, խէժ, ալիւր, ցարին, չոր խոտ, գարփ, վարուկ, եւ զիզացգորեն, լուրիս, ընկոյզ, խնձոր եւ ուրիշ մրգեցն, ընդեղէններ, աղուխա (կեսարիայէն), զինի (Ամասիայէն ու Մարտուանէն), տփիօն, խողկազին, կանեփ, կառաւատ, հաւեկիթ, եւալլն։ Շատ կարեւոր է ծխախոսի արտածութիւնը որ տարեկան 5 միլիոն օխայի կը մատենա։

Մինու Աեւ ծովու ամէնէն ապահով բնական հաւանագիտան է, Կ. Պոլսէն 18 ժամուան հետաւորութեամբ։ Կ'արտածէ արմափք, լրինձ, եղիպատացորեն, կառաւատ, ծխախոտ, չափանակ, ոչխարի մորթ, ատաղձ, չինութեան փայտ, վասելափայտ, ձկան իւղ, աղած ձուկ, լուրիս, զմնիկի հատիկ, խնձոր եւալլն։

Ինէպօդի Գասիմունիի կուսակալութեան գլխաւոր նաւահանգիտան է։ Շրջականները կան ծառախիտանուաններ, որոնք ընտիր աստաղձ կ'արտազրեն։

Արտածութիւններն են շինութեան փայտ, կաղճեփայտ, բուրդ, թիֆթիկ, կանեփ, զմնիկի հատիկ, սակամոնի (խէժ), զխանր, գազի խէժ (քիթրէ), սաւէտ, զեղին մեղրամուր, մորթ, ընկոյզ, չափանակ, խնձոր եւ ուրիշ թարմ պառուզներ, եւալլն։

Այս չորս գլխաւոր նաւահանգիտաններէն զատ Անտառիւ եղերքը կան նաև մեծ ու փաքք բազմաթիւ նաւահանգիտաններ, որոնց մէջ կարեւորներն են Բիզէ, Կիւրանին, Օրսու, Անդի, Պարթէն եւ Էրէլլի։

2. Մարմարացի ծովեց.

Այս եղերքին վրայ կը զանուին գլխաւորաբար արմափք արտածուց եւ երկրորդական կարեւորութիւն ու նեցող նաւահանգիտաններ, իւշուկ Ալիխլի, Խօսութօ, Կելիպօտ, Տարտանէլ, Մատանիս, Պանարմա, Կէմէլէլի, Իզմիտ։

Մարմարացի ծովուն ծայրը՝ Պափօրի նեղուցին հարաւային մաւարին գէմ կը բարձրանայ Կոստանդնուպօլիս։ Օսմաննեան Կայուրութեան մայրաբազարն եւ բավանդակաշխարհի ընարելուզոյն նաւահանգիտաններէն մին։

Հոս է որ կը կազուին արեւման ու հարաւային եւրոպացի եւ Սեւ ծովու Ասիական եղերքին հարուստ երկիններուն միջնեւ ծովային բնդարձակ յարաբերութիւններն, եւ հանկէ կ'անցնին Դանուբեան Պետութեանց եւ Օսմաննեան ու Ռուսական եւ կիդներու արմափքի նաւարելութ, Արեւմաւարի կարեւոր նաւահանգիտաններուն յասուկ։

Կ. Պոլսա երկաթուզիններով կապուած է կեղրանական եւրոպացի նշանաւոր քաղաքներուն ու ճարտարարուեաններուն կեղրաններուն, որոնց հետ իր յարաբերութիւններն օրէ օր ընդարձակուելու վրաց են։ Միւս կազմէ աշխարհի ամէնէն բանուկ նաւահանգիտաններուն հետ առևեարական յարաբերութիւններ ունի չողինաւացյին կանոնաւոր զիձերավ։ Մէսամբու-Մարիթիմ, Ֆրէսոնէ եւ Բաքէ ընկերութեանց չողինաւերազ Մարսիլիան հետ, Լոյտի Աւորիխական չողինաւերազ Թրիէզի հետ,

Անդրիական անհամար ընկերութեանց շոգենաւերով Լօնտօնի ու Լիվըրուլի հետ, Ռուսական զիծերով Օտեսայի հետ եւ Խտալական շոգենաւերով ձենովայի հետ կապուած ըլլալով՝ Կ. Պոլիս մելինակէան է միանդամայն Ֆուանսական, Անդրիական, Աւստրիական, Ռուսական, Ռումանական եւ Խտալական զիծերու որոնք կանոնաւորապէս կ'երթեւեկին Տրաստիզոն, Պաթում, ինչպէս նաև Սեւ ծովու Եւրոպական եւ Ասիական նաւահանգիստները, եւ կայանն է Օսմանեան ընկերութեանց շոգենաւերուն, որոնք Արցիպեղապօսի, Միջերկրականի ու մինչեւ Կարմիր ծովու Օսմանեան նաւահանգիստները կը բանին :

Կ. Պոլսոյ առեւտրական ընդհանուր գործառնութիւնները միջին հաշուով տարեկան 10-12 միլիոն ստկի կը բարձրանան, եւ մէկ տարուան մէջ նաւահանգիստը մասով ու ելլով նաւերուն թիւը կը համար 37,000ի, որոնց ներածած ու արտածած ապրանքներուն ծանրութիւնը 14 միլիոն թօնէլաթիօ կը հաշուուի :

Ներածութիւններն են զաղթաբերք, ոգելից բաժեմք, արջառ, աղած միս, ձուկ, խալիւար, ձինորութեան վերաբերեալ զանազան նիւթեղէններ, սպոնզ, կաշի, բրդեղէն, բամակեղէն եւ ուրիշ հիւսուածներ, մետաքսեղէն, զղեսա, բարիզեան ապրանք, զարգանիւթեր, ապակեղէն, երկաթեղէն, զէնք, զանազան մետաղներ, պողպատ, մեքենայ, թուղթ, զոհարեղէն, կահ կարասի, եւայն :

Իսկ արտածութիւններն են ընդհանրապէս Ռումէլիի եւ Անտառուի ներքին քաղաքներէն եկած երկրագործական բերքեր ու նախնական նիւթեր, ինչպէս բուրդ, մետաքս, բժոյժ, բամպակ, թիֆթիկ, արմտիք, ձէթ, իւղալից հունաեր, խոզկաղին, դժնիկի հա-

տիկ⁽¹⁾, մեղրամոմ, ափիօն⁽²⁾, խունկ, գաղի խէժ⁽³⁾, տորոն, վարդի խոլ, սալէպ⁽⁴⁾, եղան, ոչխարի ու գոմէշի եղջիւր, այծու մազ, նապաստակի մորթ, ոչխարի մորթ եւ աղիք⁽⁵⁾, պատուական գորգեր, ծովափրփուր, եւայլն :

Կ. Պոլսէն արտածուած գորգերու գլխաւոր ահուակները կուգան Ռուսական, Պարսկական, Աֆղանական եւ Անատոլական զաւասներէ : Ռուսաստան կը մատակարաբէ Շիրվանի, Պաքուի, Գարապաղի, Սումաքի, Քաղաքի եւ Տէրպէնափ գորգեր : Պարսկաստան կը մատակարաբէ Թէպիթզի, Քիրմանի, Ֆէրազանի եւ Խօրանի գորգեր ու սէճճատէներ : Վերջերս մանաւանդ սկսան շատ վնասուուիլ «Հէրիզ» անուն Պարսկական նոր

(1) Դժնիկի հատիկը (graine jaune) Փոքր Ասիայէն կուզայ եւ Պոլսէն կը զիկուի Եւրոպա, մանուանդ Անգլիա, վերցերս նաև Ռուսաստան :

(2) Ափիօնը ամէնէն աւելի կը զիկուի Ամերիկա, և յասոյ Անգլիա, Ֆրանսա, Ռուսիա, Գերմանիա, Հոլանդա Ամէնէն նուազ կ'անէ Աւըտրիա, վանզի հոն մօրփինի զործարաններ չկան, և զեղափանաններն ալ համեմատաբար շատ թիւ կը գործածեն :

(3) Գազի խէժը կամ թիթէն այլ և այլ որպիսութեամբ Փոքր Ասիայէն կուզայ Կ. Պոլս, որիէ կը զիկուի Ամերիկա, Անգլիա, Ֆրանսա և Աւստրիա : Ֆունսա և Գերմանիա շատ կը գնեն, Աւստրիա և Ռուսիա՝ թիւ, Ազնիւ տեսակները արկդի մէջ կը զիկուին, իսկ աժան տեսակը պարկի մէջ Քիթթէնին արտածութեան կերպնը Պօլս չէ այսուետեւ, վանզի մեծ մասը Մէրսինի և Պէրութի համրով կը զիկուի :

(4) Սալէպը թօրազէն և Գուանէտունիէն կուզայ այլ և այլ որպիսութեամբ 100էն մինչեւ 500 բիթօկրամ ծանրութեամբ ծրաբներով Կ. Պոլսէն եւրոպա կը զիկուի :

(5) Ոչխարի մորթը զիվաւորաբար Աւստրիոյ միջոցաւ ուրիշ երկիրներ կ'արտածուի, իսկ զառնուկի մորթն որ աւելի աժան է՝ ամէնէն աւելի Անգլիա կը զիկուի :

Ոչխարի աղիքը մեծ մասամբ Աւստրիա կ'երթայ. բայց Ռուսիա այժմ լաւազյն տեսակները պատրաստելուն համար արտածութեան այս ճիւղը օրէ օր նուազելու վրայ է :

գործուածները , որոնք Ֆէրազանի գորդերուն հետ կը մրցին : Պելուճիսատնէն կուգան հին Պարսկական դորդեր : Խիվա եւ Պուխարա կը մատակարարեն բնտիր դորդեր եւ սէձճատէներ : Տաճկաստան կը մատակարարէ քիլիմ , սէճճատէ եւ Զմիւռնիոյ դորդ : Գլխաւոր գնողներն են Անդլիա եւ Ամերիկա , եւ յետոյ Աւստրիա , Գիրմանիա , Ֆուանսա եւ Իտալիա :

Ռօօօռօ Կ. Պօլսէն 72 մղոն եւ Կէլիպօլսէն 54 մղոն հեռաւորութեամբ՝ Մարմարայի վրայ ընտիր եւ ապահով նաւակայք մըն է Ռօօօռօ Բումէլիի արտազրութեանց կարեւոր շահաստանն է եւ բանուկ վաճառականութիւն ունի Աւստրիոյ , Ֆուանսայի , Իտալիոյ , Գիրմանիոյ , Անդլիոյ , Պէլճիպայի եւ Հօլոնտայի հետ :

Արտածութիւններն են արմատիք , թռչնակեր , բուրդ , մորթ , ծխախոտ , բժոժ , զինի , եւալին :

Կէլիպօլու Մարմարայի բերանը՝ Տարսանէլի ներուցին Եւրոպական եղերքին վրայ բանուկ նաւահանգիստ մըն է , որուն նաւակայքը ընդարձակ է եւ շատ ապահով :

Ներտածութեան ու արտածութեան վաճառականութիւնը կ'ըւլայ զլիսաւորաբար Անդլիոյ , Ֆուանսայի , Իտալիոյ եւ Աւստրիոյ հետ :

Մուտանիա՝ Կէմէլէլիի ծոցին մէջ՝ Պրուսայէն 28 քիլոմէտր հեռաւորութեամբ՝ Կորքրիկ նաւակայք մըն է զոր երկաթուղի մը կը միացնէ Պրուսայի հետ : Ունի ծիթապատուղի մնած արտազրութիւն . նոյնպէս բազմաթիւ մանարաններ մետաքսի :

Կէմէլէլիի՝ համանուն ծովածոցին վրայ ապահով նաւակայք մըն է Պօլսէն 5 ժամ հեռաւորութեամբ : Գլխաւոր արտածութիւններն են ձիթապտուղ եւ շերամի իսոզակը :

Պանցրմա Կ. Պօլսէն 62 մղոն հեռու , ունի կարեւոր վաճառականութիւն բամպակի , ցորենի , վարսակի ,

գարիի , եղիպատացորենի , աֆիոնի , խողկազինի , աղած ձուկի , Պօրասիտի հանածոյի եւալին :

Իզմիտ համանուն ծոցին խորը վաճառաշահ նաւահանգիստ է : Երկար ատեն Փոքր-Ասիոյ կարեւորագոյն քաղաքներէն մին եղաւ եւ այսօր Նիկոմիդիոյ գաւառին վաճառականութեան կեղրսնն եւ Անատոլուի բերգերուն արտածութեան կարեւոր նաւահանգիստ է , երկաթուղիով կապուած ըլլալով երկրագործական ներքին զաւառներուն հետ , մինչեւ Ենկիւրիւ եւ Թօնիա :

Իզմիտի ծոցը կ'այցելին բազմաթիւ չոգենաւեր որոնք կը փոխազրեն Անատոլուի երկաթուղիներուն բերած երկրագործական արտազրութիւնները : Ունի մեծ վաճառականութիւն ատաղձի եւ արմափքի :

Գլխաւոր արտածութիւններն են արմափք , խոզակ , շերամի հունա , ծխախոտ , ընդեղէններ , եղիպատացորեն , կտաւատ , բուրդ , մրդեղէն , ձուկ , հաւ , հաւկիթ , պանիր , եւալին :

Յ. Արշակեղագոսի նաւահանգիստներ.

Կ. Պօլսէն յետոյ Եւրոպական թուրքիոյ ամէնէն բանուկ նաւահանգիստն է Սելանիկ (Արշակեղագոսի վրայ , համանուն ծոցին խորը) :

Սելանիկ շատ ընդարձակ յարաբերութիւններ ունի պլիսաւորաբար Անդլիոյ , Աւստրիոյ , Ֆուանսայի , Գիրմանիոյ , ինչպէս նաև Իտալիոյ եւ Պէլճիպայի հետ :

Իր զլիսաւոր արտածութիւններն են ցորեն , գարի , եղիպատացորեն , ծխախոտ , զինի , վուշ , բամպակ , մորթ եւ ոչխարի բուրդ , որ Մակեդոնիոյ արտազրութեանց մէջ առաջին կարգերէն մին կը գրաւէ :

Անդլիական , Ֆուանսական եւ Աւստրիական չոգենաւերը Սելանիկ կը բերեն շաքար , խանլէ , կաշի , հանգային իւղեր , բամպակիք , ամէն տեսակ տարազագործուած ապրանքներ , երկաթեղէն , եւալին :

Սելանիկէն յետոյ Օսմանեան կայսրութեան ամէնէն վաճառաշահ նաւահանգիստն է Իզմիր՝ (Արշիպեղագոսի Ասիսկան և կերպին վրայ) որ շատ բանուկ առեւտուր եւ ընդարձակ յարաբերութիւններ ունի զրեթէ բովանդակ Եւրոպայի եւ Ամերիկայի հետ, եւ ընդհանուր մթերանոցը կը համարուի Սնաալուի բերքերաւն, ինչպէս նաեւ Եւրոպայէն ներածուած ապրանքներու եւ գաղթաբերքերու :

Պատմական փառաւոր անցեալի մը եւ աշխարհագրական նպաստաւոր գիրքին չնորհիւ իր առեւտրական յարաբերութիւնները կը տարածուին ոչ միայն ամբողջ նահանգին, այլ եւ սահմանակից մէկ քանի նահանգներու ինչպէս նաեւ Արշիպեղագոսի բազմաթիւ կղզիներաւն վրայ: Իզմիրէն մեկնող երկաթուղիի կրկին գիծերը, որոնք հետզհետէ աւելի ներսերը կը տարածուին, պայծառագին ապագայ կը խոստանան այս կեդրոնին, եւ անոր նորանոր վաճառատեղիններ կը պատրաստեն: Արդէն մեծ քանակութեամբ կ'արտածէ բամպակ, ծիստ, աֆիօն, խոզկազին, չամիչ, թուզ, ցորեն, գարի, կորեակ, բակլայ, ձեթ, կնճիթ, մատուտակ⁽¹⁾, գիսոր, գաղի խէժ (քիթթէ), տորոն, ուլի եւ գառնուկի մորթ, բուրդ, թիֆթիկ, մետաքս, աշխարհի ամէնէն համբաւաւոր գորգերն ու սէճճատէնները⁽²⁾, այլ եւ այլ հանքային արտադրութիւններ, եւայլն :

⁽¹⁾ Միայն Զմիւնիոյ նաւահանգիստէն կ'արտածուի տարին 9000 տակառ մատուտակի հիւթ (մէն մի տակառը 100 քիլոկրամոց), և 60,000 հակ ալ արմատ: Այսունի վիլայէթին բոլոր նաւահանգիստներէն միանգամյն արտածուած բանակութիւնն է 21,000 տակառ մատուտակի հիւթ և 80,000 հակ ալ արմատ:

⁽²⁾ Իզմիրի նաւահանգիստէն Եւրոպայի և Ամերիկայի համար կը բեռուի տարին 3000 հակէն աւելի զորդ և սէճճատէ, 250,000 լիրայի արժողութեամբ:

Փոխադարձաբար կը ներածէ անզիական բամպակաղէններ, գուանսական մետաքսեղէններ: Եւ առուելղէններ, գերմանական բանուածներ, աւստրիական ապակեղէններ, կարասի, փերեղակի ապրանքներ, երկաթեղէններ, գոհարեղէններ, խաճվէ, չաքար, բրինձ, ոռուական կարագ, քարիւղ, եւ վերջապէս ուրիշ բազմաթիւ ձեռագործներ, որոնց զրեթէ բոլորին ալ նախնական նիւթերն արդէն ինք կը մատակարարէ:

Սելանիկէն եւ Իզմիրէն յատոյ Արշիպեղագոսի կարեւոր նաւահանգիստներն են Գավալա եւ Տէտէ Աղաճ, ու կղզիներէն՝ Թէնէտօս, Միալլի, Քիոս եւ Հոռոգոս:

Գավալա Սելանիկի կուսակալութեան երկրողական նաւահանգիստն է, ուրկէ կ'արտածուի մեծ քանակութեամբ ծխախոտ, ինչպէս նաեւ արմափ, բուրդ եւ բամպակ:

Տէտէ Աղաճ որ երկաթուղիով միացած է Էտիրնէի հետ՝ կրնայ նկատուիլ էտիրնէի կուսակալութեան գրլիսաւոր նաւահանգիստը: Կարեւոր է զլիսաւորաբար արմափի եւ աղած ծուկի վաճառականութիւնը:

Թէնէտօս Տարտանէլի նեղուցին մօտ փոքրիկ կղզի մըն է, ուր չողենաւեկրն առօրեայ երթեւեկութիւն ունին: Կ'արտածէ պատուական կարմիր զինի, նոյնպէս քացախ եւ օղի:

Միալլի Արշիպեղագոսի գեղեցկագոյն կղզիներէն մըն է: ունի երկու մեծ ծովախորշեր որոնք կը ձեւացնեն երկու բնական սքանչելի նաւահանգիստներ և Միալլի կ'արտածէ զլիսաւորաբար ձէթ, նոյնպէս զինի չամիչ, թուզ, անխօն եւայլն:

Քիոս Իզմիրի գիմացը Արշիպեղագոսի մեծապոյն

Կղզիներէն մին է : Քիոսի ըեւեկնը (թիրէմէնթին) մեծ արժէք ունի : Գլխաւոր արտածութիւններն են լեմոն, նարինջ, նուշ, ձիթապտուղ, անիսոն, մաստիքա եւայլն :

Հոռդս Սրչիպեղագոսի գեղեցկագոյն կղզիներէն մին է, եւ ունի երկու նաւահանգիստ որոնք ասիական եղերքին ու մօտակայ կղզիներուն առեւտրական մթերանցներն են : Ծովեղրին վրայ սպունդի կարեւոր որսորդութիւն կ'ըլլայ, որուն մեծ մասը կը դրկուի մթանսա եւ Անգլիա : Այս կղզիներն նուրբ սպունդը շատ յարգի է :

Բոլոր այս կղզիներն եւ ուրիշներ՝ որ Փաքր Ասիոյ ծովեղրին մօտ ցրուած են, կրկն կարեւորութիւն ունին նախ իր դադար Սրչիպեղագոսի մեծագոյն գիծերուն — մանաւանդ աւսարփական լոյսի եւ ֆռանսական Մէսամբոփ ընկերութեան շոգենաւերուն — եւ ապա իբր արտադրող երկիրներ, որոնք բաւական կարեւոր վաճառականութիւն ունին զինիի, ձէթի, մրգեղիններու, սպունդի եւայլն :

4. Միջեւկրականի ծովեղրեք.

Միջեւկրականի ծովեղրին վրայ կը գտնուին Ասիական թուրքիոյ հետեւեալ նաւահանգիստները. Աստվիա, Մէրսին, Խալէնաէրուն, Լագաքիա, Թրիփոլի, Պէրութեւ եափա, որոնց մէջ Խակէնաէրուն եւ Պէրութ առաջնակարգ կարեւորութիւն ունեցող նաւահանգիստներ կը համարուին :

Մէրսին Քօնեալի եւ Աստանայի նահանգներուն, մասնաւորապէս Թարսուսի եւ Աստանայի նաւահանգիստն է : Բաւական բարգաւաճ վիճակ մը ունի իր վաճառականութիւնը Եւրոպայի, գլխաւորաբար Ֆռանսայի հետ :

Իր գլխաւոր արտածութիւններն են բամպակ, բուրդ, ցորեն, գարի, կնձիթ, կտաւատ, տորոն, մեղրամում, քիթրէ եւայլն :

Խակէնաէրուն բավանդակ Սուրբոյ կարեւորագոյն նաւահանգիստն է համանուն ծովածոցին խորը, ուր կուգան ամփոփութիւն Ասիական թուրքիոյ հարաւային գաւառներուն, Քիւրափաստանի, Միջագետքի, Իրագ Սրէպիի ու Պարսկաստանի արտադրութիւնները :

Կարտածէ զլիխաւորաբար բուրդ, զխաոր, արմափ, կնձիթ, խաշխաչի հունտ, խոզկաղին, մորթ, մարօքէն, կարագ, ձէթ, օճառ, մատուտակի արմատ, նուշ, նարինջ եւայլն :

Խակէնաէրունի ծոցը 55 քիլոմէդր երկայնութիւն եւ 25 քիլոմէդր լայնութիւն ունենալով, իր մէջ կը պացունակէ «Եռումութթալք» կոչուած համբաւուոր նաւակայքը :

Պէրութ Օսմանեան Պետութեան ամէնէն վաճառաշահ քաղաքներէն մին եղած է՝ մանաւանդ նաւահանգիստին շինութենէն ի վեր, որոնք զուտ եւրոպական երեւոյթ մը տուած են անոր :

Բոլանդակ Սուրբոյ կուսակալութեան սուաջիննաւահանգիստն ըլլալով Պէրութ՝ կարեւորագոյն շահաստանն է միանգամայն Միջագետքի, Իրագ Սրէպիի, Պարսկաստանի եւ Հնդկաստանի վաճառականութեան, եւ կանոնաւոր յարաբերութիւն ունի հարաւային Եւրոպայի մեծագոյն նաւահանգիստներուն, մամնաւորապէս Մարսիլիոյ հետ :

Արտածութիւններն են մետաքս, խոզակ, կնձիթ, բուրդ, ձէթ, զխաոր, քրքում, սակամնի, գյոնիկի

Հատիկ, կանեփհատ, սումաք, ծխախոտ, բամպակ, մետաքսեղին հիւսոււածոյ, ծիրանի կուտ, եւալին:

Իսքէնակէրունի եւ Պէրութի միջիւ կը գտնուին Սու-
րբոյ ուրիշ երկու երկրորդական նաւահանդիսաները
Լաղաքիա եւ Թրիփոլի :

Հարացիա աւելի իսկէնտէրունի մօտ՝ բաւական բանուկ նաւահանդիստ է, ուր կ'երթեւեկին կանոնաւորապէս Լոյտի, Մախոսուսէի, Մէսամբը-Մարիթիմի եւ ուրիշ ընկերութեանց շոգենաւեր :

Լադաքիս կ'արտածէ արմտիք, ձէթ, ծխախոտ, մատուտակ, թուզ, բնասպիս, հաւկիթի ուղղուց:

Թրիփոլի՝ աւելի Պէրութի մօս՝ ապահով նստ ակայք
մըն է եւ կայան՝ աւստրիական, ուսւական, ֆունսա-
կան, անգլիական, եզիստական եւ այլ ընկերութեանց
շոգենաւերուն, որոնք կանոնաւոր երթեւեկութիւն ու-
նին այս նաւահանգիստը :

Թրիփոլի միանգամայն բնական հաւահանգիստն է Դամակրոսի կուսակալութեան երկու կարեւոր եւ ճարտարալու հասական քաղաքներուն, Համայի եւ Հօմիսի և

Սրածութեան զլիսաւոր նիւթերն են մետաքս և
սպոնգ, օճառ, ձէթ, արմափք, բամպակ, ընդեղէն,
մատուակի արմատ, կիարոն, լեմնն, նարինջ, չամիչ,
չօմիի մետաքսէ եւ բամբակէ հիւտուածներ, հաւկիթի-
դեղնուց, ոսկոր, քուրջ, եւալյն:

Եափա՝ միակ նաւահանգիստն է Պաղեստինու երկրին, 70 քիլոմետրի հեռաւորութիւն մը ունենալով Երուսաղէմէն, որուն հետ կապուած է երկաթուղիի կարճ գիծով մը։ Ունի բաւական կարեւոր վաճառականութիւն ձեթի, կնճիթի, ցորենի, գարիթի, կորեկի,

բուրդի, նարնջի (տարեկան արտածութիւն 350 հազար արկլ), թարմ պտուղներու (ձմերուկ, եւայլն), եւ բարեպաշտական առարկաներու, ինչպէս համրիչ, խաչ, եւայլն։ Ունի նաև օճառի գործարաններ, որոնց արտադրութիւնները կը զրկուին գլխաւորաբար Եղիպատու

Միջերկրականի վրայ կը դանուին նոյնպէս Ափրիկ-
եան Թուրքիոյ երկու գլխաւոր նաւահանգիստները՝
Թարասայուս եւ Պէտկաղի :

Թարապուս՝ կեղրոնական Ափրիկէի հեռաւոր եր-
կիրներուն սահմանուած երոպական ապրանքներուն
գլխաւոր մթերանոցն է։ Նաւահանգիստը բաւական ըն-
դարձակ է եւ սակայն փոթորկի ամենազոյցն նշան մը
տեսնուելուն, նաւերը կը ստիպուին բացը ելել ծովեզ-
րին վրայ չնետուելու համար։

Երկրին ներսէրուն հետ կը հաղորդակցի կարաւան-
ներով , որոնք անապատը կը կտրեն կ'անցնին հանդի-
պելով Ֆէզզան , ուրկէ կ'երթան Պուրնու , Սուտանի
գլխաւոր քաղաքը :

Թարապլուսի արտածութիւններն են կեմեղէն (սաղ),
արջառ, բուրդ, արմաւ, բորակ, մեղրամոմ, պղպեղ,
նարինջ, լեմոն, հաւկիթ, սեխ, ջայլեամի փետուր,
կնիւնէ փախաթներ, ամէն տեսակ՝ մորթ, արմաթիք,
ձէթ, մետաքսէ եւ բուրդէ էհրամներ եւ կերպամներ,
եւալլ:

Պիտիագի՝ գլխաւոր նաւահանգիստն է համանուն կուսակալութեան եւ Ռւատայի շրջականերուն (Կեդրու-

նական Ա.փրիկէ), ուրիշ կը ներածուին ջայլեամի վետուր, փղոսկր, եւայն։ Շատ սիրուն բնական նաւահանգիստ մըն է Պէնկազի, որ սակայն պղտիկ տարողութեամբ նաւեր միայն կրնայ հիւրընկալել . մեծ տարողութիւն ունեցող նաւեր բացը կը կենան՝ փոթորկի ատեն ծովեղը չինալու համար։

Արտածութեան գլխաւոր նիւթերն են կարագ, աղ, սպունդ, այծու մորթ, փղոսկր, ջայլեամի փետուր, բուրդ, մորթ, ներկի փայտեր, եղ, ոչխար, ձի և ուղու։

5. Սպրիփականի ծովեցր։

Այս ծովեղըին վրայ կը գտնուին յիշատակութեան արժանի Յ նաւահանգիստներ, Բրէվէզա, Ալլօնա եւ Տիւրացցո։

Բրէվէզա գեղեցիկ նաւահանգիստ է Արդայի ծոցին քերանը . կարեւոր վաճառականութիւն ունի ձէթի, համբաւաւոր սեւ ձիթապտուղի, բուրդի, աղած ձուկի, մորթի, պանիրի, ձկնկիթի, խոզկազինի, մայրի փայտի, գիստորի, եւայն։

Տիւրացցո Շքոտրայի կուսակալութեան կարեւորագոյն նաւահանգիստն է։

Շքոտրայի կուսակալութիւնը բարձրաբերձ անտառներ պարունակելուն՝ Տիւրացցո Կ'արտածէ մեծ քանակութեամբ փայտ եւ ատաղձ որ ձենովա, Մալդա եւ Թունուղ կը զրկուին։

6. Կարմիր ծովու նաւահանգիստներ։

Կարմիր ծովու արեւելեան եղերքին վրայ կը գըտնուին Արաբիոյ երեք գլխաւոր նաւահանգիստները, ձիտէ, Եամպօ եւ Հօտէյտա։

Ճիշտէ Հիճազի կուսակալութեան նաւահանգիստն է որ ուղղակի յարաբերութիւն ունի Հնդկաստանի, Զանգիպարի, Ա.փրիկեան ծովեղերքներու, Սուաքինի, Մասուայի, Ա.տէնի, Եգիպտոսի, Անդիլոյ, Ֆանսայի, Սւատրիոյ եւ Հօլանտայի հետ։

Արտածութեան գլխաւոր նիւթերն են սատափ, բուստ, խէժ, գեղին մեղրամու, կրիայի պատեան, այծի եւ ոչխարի մորթ, որոնք կը զրկուին նիւ եօրք, Լօնտօն, Մարսիլիա եւ Թրիէսդ, Կ'արտածէ նաեւ արժամաւ, նուշ, կարագ, ածուխ եւ մեղր, որոնք կը զըրկուին Կարմիր ծովու զանազան նաւահանգիստները։

Եամպօ Մէտինէի նաւահանգիստն է եւ ուխտագնացութեանց ատեն բաւական ոգեւորութիւն կը ստանայ։

Հօտէյտա Եէմէնի նահանգին միակ նաւահանգիստն է եւ կարմիր ծովու առեւտրական կարեւորագոյն քաղաքը, Եէմէնի արտադրած խանվէն զրեթէ այս քաղաքին մէջ միայն կը ծախուի։

Ներածութեան վաճառականութիւնը շատ բանուկ է. Հօտէյտա նաւակայք չունի. չոգենաւերը քիչ անգամ կը մօտենան, բաց ի Մախսուսէիններէն։

Մեծ արտածութիւն ունի խանվէի, որ կը զրկուի Մարսիլիա, Լօնտօն, Ա.մերիկա, Եգիպտոս, եւ որունարեկան արտադրութիւնը՝ բովանդակ կուսակալութեան մէջ, կը հաշուուի Յ միլիօն քիլօկրամ։

7. Պարսից ծոցին նաւահանգիստներ։

Այս ծովեղըին Օսմանեան Կայսրութեան վերաբերող մասին վրայ Էլ-Հաթիֆ, Քույէթ, Ֆալ նաւա-

15. Տիարգերիր	84
16. Մամուրէթ-իւլ-եղիզ	85
17. Հալէյ	87
18. Պէրսօթ	91
19. Լիրանան	93
20. Երսսաղէմ	94
21. Սուրիա	95
22. Զոռ	97
23. Մուսուլ	98
24. Պարուտ	100
25. Պարք	102
26. Հիճազ	104
27. Իեմէն	107
28. Թարապղուս	108

Գ լ ո Ւ Խ Ե .

ԻՆՔՆՈՐԷՆ ԳԱԱԱՌԵՆԵՐ

Պուլարիա	112
Քաղաքական աշխարհագրութիւն — Տնտեսական նկարագիր — Ճարտարաբուծութիւն — Վաճառականութիւն	
Սամոս	119
Կիպրոս	121
Կրետէ	122
Եգիպտոսի փոխարքայութիւն	124

Գ լ ո Ւ Խ Զ .

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱԲՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Երկրագործութիւն	133
Բնակին յարմարութիւն — Անտառները — Մննդական մշակութիւններ — Ծառանման մշակութիւններ — Արուեստական մշակութիւններ	

Կենդանական հարստութիւն	143
Պաճարաբուծութիւն — Որորդութիւն և ձինորսութիւն — Ամփոփում երկրագործական արտադրութեան	

Ճառաւարաւես	154
Հանրային ճարտառութենէն ծաղող ճարտարաբուծութեներ — Բուսային հարստութենէն ծաղող ճարտարաբուծութեներ — Կենդանային հարստութենէն ծաղող ճարտարաբուծութեներ	

Վաճառականութիւն	163
Հաղորդակցութեան միջոցներ — Արտաքին վաճառականութիւն — Վաճառականական նաև երու թիւը — Նաւահանգիստներ — Սև ծովու նաւահանգիստներ — Մարմարայի ծովեզր — Արշապեղագուի նաւահանգիստներ — Միջերկրականի ծովեզր — Աղրիականի ծովեզր — Կարմիր ծովու նաւահանգիստներ — Պարտից ծովին նաւահանգիստներ	

Ն Ե Ա Ն - Պ Ա Պ Ի Կ Ե Ա Ն

Կ. Պոլիս, 60, էսկի-Զապրիկ մասսկսի, 60

— → Տ Ե Շ Շ Շ ← —

ՀՐԱՆԴ Ս. ԽԱՆՃԵԱՆ

Պատկերազարդ Նոր Աշխարհագրութիւն

Միջին Դաստիարակք, 1902, 240 էջ, գին 5 դրոշ

Անուններու չոր Թուարիլութիւններէ և առանց մեթոսի բով բովի շարուած ծանօթութիւններէ բոլորվին տարբեր ուղղութիւնով զործ մը, որ ուրախ ենք ըսերու իր արժանի ընդունելութիւնը զաւ մեր մամուլին և բոլոր կարեւոր վարժարաններու մէջ:

Հոս կ'արտասպինը մէկ բանին միայն այն կարծիքներուն զրս մամուլը յայտնած է մեր այս զործին նկատմամբ, և որոնք ամէն բացատրութենէ աւելի յատագործն ցոյց պիտի տան ինչ նոր փորձի որ ձեռնարկած յաջողած ենք:

... Ստոյդ է որ հնաւանդ ոճով պատրաստուած աշխարհագրութեաննոր դասազրոց պէտք չէին զզար մեր կրթարանները, սակայն նորագոյն ոճով պատրաստուած դասազրոց — ինչպիսի է մեր առաջիկայն՝ պակասը՝ զզալի էր մեր մէջ, և ահա այս թերին է որ կը ինու լստ մասնի պատշին անզամ Պր. Հ. Խանճեանի հրատարակած Միջին Դաստիարական անգլագրութեան դասագիրը:

... Նորոյս աշշակերտը այս համառոտ տեսութեամբ ընութեան ամէն գաղտնեաց վրայ մեկին և ամիսի տեղեկութիւն կը ստանայ, մանաւանդ որ դասազրիս մէջ շատ պարզ օրինակներով պարզուած և պատկերներով դիւրմբունելի է եղած:

... Առաջիկայ դասագրիս մէջ հեղինակը չանցած է միայն մին աշխարհագրական տեղերը իշտառակիել, որոնք նարի են յիշուիլ ամէն մէկ երկիր կամ զաւափի մասին ընդհանուր ու պայծառ զաղափար մը տալու համար: Դասազրիս ամէնէն աւելի զնահատելի կողմն է իր համառութիւններու բովանդակութեան մէջ տուած բազմակողմանի ծանօթութիւնները, որոնք օգտիւ և շահնեկանութեամբ ալ կրնան կարդացուիլ:

Հ. Գ. ԳԱԱ. — Հանդէս Ամեօրեայ, թիւ 5 Մայիս, 1902

... Նախնական ծանօթութիւնները, ... երկրիս շարժումները, երկրին կազմութիւնը, երկրագունդին մեծ բաժանումները, ծովագութիւնը, մթնոլորտի խաւերուն կազմութիւնը, օղերեւոթներ, կղիման և անոր ազդեցութիւնը բռնականութեան և կենդանիներու վրայ, տղուն հասկնալի լեզուով բացատրուելէ զատ, իրրեւ գիտական հաստուածներ ունին արժանիքն ալ:

... Ազգագրական մասը որ շատ գիրքերու մէջ անտես առնուած է, ճոխ է հոսւ:

... Քաղաքական Աշխարհագութեան մէջ ալ յայտնի կ'երեւայ Թէ հեղինակը շատ լրջօրէն աշխատած է իր աշխատութիւնը կարելի եղածին չափ ամփոփ, յստակ և ճիշդ ընելու:

... Մեր համառուս ակնարկէն երեւցաւ Թէ մեր դպրոցներու համար ամէն կերպով յանձնարարելի զործ մըն է աս, և կը յուսանք Թէ աշխարհագութեան պէս դժուար գիտութիւն մը հրապուրիշ և մատչելի ընելու իր շանթովը պիտի կրնայ նոր շրջան մը բանալ այս գիտութեան դասաւանդութեան մէջ:

Գ. 10. — Արեւելի, թիւ 4824, 1901 Գիւկու. 21

Աշխարհագրական կոկիկ դասագիրը մ'է, 240 մեծաղիր էչերէ բաղկացած, և զարդարուած 34 բաւական խնամատիպ պատկերներով: ... Հեղինակը խնամք տարեր է զիրքը պատմական տեղեկութեամբ ճոխացնել, և զանացեր է ամէն աշխարհագրական բացատրութիւնը բնական և զիւրըմբոննելի ոնով բացատրելու:

Բազմավկէպ, թիւ 5 Մայիս 1902

... Այս անդամ հշմարիտ ուրախութիւն մը կը զգանք Թղթատելով այս զիրքը, որ մեր մէջ առաջին և յաշող փորձն է, և որ պատրաստուած է աշխարհագրութեան նոր ըմբռնումներու համաձայն:

... Մասնաւոր շանեկանութիւն մը ունի ծովերուն նուիրուած զլուխուը, ամփոփ կերպով բացատրուած են բոլոր այդ հեղուկ տարրին երեւոյթները, և ինչ անհուն դեր որ կը խալան անոնք ընդհանուր աշխարհի կեանքին մէջ:

Շատ շանեկան հատոր մըն է ասիկա, գիտակից ու լուրջ կերպով մը պատրաստուած: Շատ զեղեցիկ է ընդհանուր ուղղութիւնը և նիւթերու դասաւորութիւնը:

Գ. 2. — Բիւրակն, թիւ 51, 1902

Ալ պէտք չենք տեսներ մեր կողմէ ո և է բան աւելցնելու, վերոյիշեալ արտասովումները բաւական են բացատրելու այն ուղղութիւնը որու հետեւած ենք այս դասագիրքին պատրաստութեանը մէջ:

7508

90003644

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0003644

ՆԵԱՆ - ՊԱՊԻԿԵԱՆ

60 , Էսլի-Զապրիյէ Ամստենդամ , 60 , Կ. Պոլիս

ԱՆԴՐՈՅԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայերեն, Թուրքերեն և Ֆրանսերեն ամեն տեսակ
հրատարակութիւններու;

Նոյն հեղինակին

ՊԱՌԿԵՐՈՋԱՐԴ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Միջին դասընթացք, 1902, 16 ածալ 240 էջ. Գիր 5 դրշ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԹՈՒՐԲՈՒՌՈՒԹԻՒՆ

8-ածալ 239 էջ. 1899. Գիր 10 դրշ.

Հետզինետ պիտի հրատարակուին

Նոյն հեղինակին

ՏՈ.ՐՐԱԿԱՆ ԳԱ.ՍԼ.Թ.Ա.Ց.Ք ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Տիեզերական ժանորութիւններ — Աշխարհագրական բառեր
— Համառաօտ նկարագրութիւն — Քաղաքական աշխարհա-
գրութիւն .

ԸԱՐՁՐԱԳՈՅՆ ԳԱ.ՍԼ.Թ.Ա.Ց.Ք ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Բնական, Առևտուրական, Տնտեսական և Քաղաքական բնոյ-
նանութ նկարագրութիւն .

Գիր 5 Դրշ.

معارف نظارت جلیله منك ۲۱ صفر ۳۱۹ و ۲۷ مارت ۳۱۷
تاریخی و ۱۴۶ نومرسی رخصتاتمه سیله طبع او لشتر